Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9/0

792
~~618~~

7882
4082
891.99
Պ-50

ՄԱԳԱԹ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

1001/3401

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Պ.Հ.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
ԵՐԵՎԱՆ, Ереван
Ա. ՍՅՈՒՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Էլեքտրաշարժ տպարան. Ընկ. «Հերոսաց» Մադաթեան փող. № 5.
1906 (192)

50793

18 JUL 2013

-6 NOV 2011

Բարուի Հայոց
Հռիփսիմեան Դպրոց
Եկեղ.-ծխակ. (օրիորդաց)

ԵՈՒԵԱՆ

Լույս հանելով առանձին գրքույկով գրական աշխատութիւնս, անհրաժեշտ համարեցի նրա բովանդակութեան վերաբերեալ մի քանի խօսք ասել։

«Շուշան» «Լուսի» և «Հռիփսիմ» միևնոյն անձնաւորութիւններ են, անմեղ, անարատ, դեռ մանկական յստակութեան մէջ, կեանքը նրանց սեղմել է իր ճիրաններում, նետել է կարիքի, տանջանքի ծոցը. տառապում են փոքրահասակ մանուկները, տառապում են և նրանց հասակաւոր մայրերը, որոնք իրանց ժամանակին եղել են միմի «շուշաններ» և «լուսիներ»։

Իմ ցանկութիւնը եղել է խլել նրանց կեանքից մի ժամենտ և ընդգծել մարդկութեան առաջ, ինչպէս դա թելադրել է զգացմունքները, որքան կարողացել եմ ըմբռնել նրանց հոգեկան աշխարհը։

«Մի կաթ հացի համար» և «Բանտորը» պատմուածքները նոյն դասակարգիցն է որը իր թշուառութեան մէջ իրաւունք չունի ապրելու, սիրելու և սիրուելու. մարդկային ազնիւ վեհացնող զգացմունքները, ընտանեկան անարատ սրբութիւնը նրանց համար չէ. թերևս նրանք էլ գիտէին ընքոյշ կերպով սիրել, հպարտանալ և ապրել։

«Կապոյտ շապիկ» և «գնդակահարութիւն» ժողովրդի զաւակներն են, մէկը աղատ, միւսը կապանքների մէջ. երկու բողոքողներ, երկու իսկական բարեկամներ մարդկութեան համար. սակայն կեանքը ինքն է նետում նրանց դեռ շատ և շատ զոհերի շարքը։

Վերջապէս «տխուր պատմութիւն» և «արցունքներ» լիրիկական գրուածներս, սա ցաւերից ամենախոր է և վերքերից ամենածանր։ Ամ։խատած եմ շոշափել անհատի սև օրը, նրա ընկերակցութեան դատարկութիւնը, բողոքը, վիշտը և մի նոր կեանքի որոնումը։

ՇՈՒՇԱՆ

Աշնանային ցուրտ ու խոնաւ առաւօտ է. երկինքը պատած է մշուշով. մանր անձրև է մաղւում։ Տանիքներից թափուող ջրերը թիթեղեայ խողովակների մէջ թեթև աղմուկ հանելով, փողոցները լցնում է մի ընդհանուր մրմռոցով։ Ծառերը նայում են վհատ ու տխուր. նրանց թորշոմած, ու դեղնած տերևները, անձրևի կաթիլներից ծանրացած՝ մէկիկ-մէկիկ ընկնում են ցած, ցեխի ու տղմի մէջ։

Տխուր է քաղաքը, մռայլ են և մարդիկ. նրանք դժգոհ դէմքերով անցնում են սառը և թաց մայթերով։ Թարմ և ուրախ են միայն դէպի դպրոցը շտապող մանուկները. ընութեան թախծոտ տեսքը, ամպը, թուխպը, անձրևը, ցուրտն ու խոնաւը, տերևթափ ծառը նրանց չի վշտացնում, նրանց մատաղ սիրտը չի ալեկոծում, բոլորը նրանց համար սիրելի են, բոլորին նրանք սիրում են և ուրախ, զուարթ, թևերի տակ մի-մի կապոց, գրքերի պայուսակ, շտապում են։

«Ահա դարձեալ մի կէս ժամ ու բոլորը կանցնեն». մտածում է կօշկակարի տասներկու տարեկան աղջիկ, Շուշանը՝ որը իր սովորութեան համաձայն կանգնել էր բակում, դէպի փողոցը նայող դռների մէջ։ Նա անընդհատ նայում է անցուդարձ անող իր բարեկամներին ու հայացքներով հետևում է նրանց մինչև փողոցի միւս ծայրը. նա բոլորին գիտէ, բոլորին էլ ճանաչում է։ «Այժմ, ձեռք-ձեռքի տուած, երկու քոյրը կանցնեն. ահա կաղլիկ աղջիկը, ահա փոքրի տղան, իր մեծ պայուսակով. այժմ

սիրուն աղջիկն է գնում. ահա երեք փոքրիկները իրանց աղախնի հետ. հիմայ կանցնի սեփական կառքը»... Նա բոլորին էլ նախանձում է՝ մանաւանդ վերջինին։ «Որքան բախտաւոր են», բացագանչում է Շուշանիկը ամեն անգամ, երբ անցնում է այդ կառքը և այդ ժամին թւում է, որ ձիանները կայծակից էլ արագ են թռչում, կառապանը հպարտ նստած, հազիւ է նրանց պահում.

—Շուշան. հեշտաեռին նայիր, լսում է նա մօր ձայնը։ Իսկոյն վազում, մի քանի ածուխ է աւելացնում ու նորից դառնում է իր տեղը։

—Շուշան, լսում է նորից մօր ձայնը.—բակը աւելիր։

Նա, աւելը ձեռքին, բակը սրբում է. բայց աչքը փողոցից չի հեռանում. նոյն տան կեցող, վերի յարկի երկու քոյրերը դեռ չեն անցել. ահա նրանք իջնում են, իր մօտով պիտի անցնեն. նա այդ գիտէ։

—Բարի լոյս քեզ Շուշան, բակն ես աւելում.—ուրախ բարևում է նրան տան տիրոջ աղջիկ Հեղինէն, որը վերաքննութիւնից յետոյ փոխել է վեցերորդը։

—Այո, ցածր ու քնքոյշ ձայնով պատասխանում է Շուշանը ու քայլում է նրանց յետևից մինչև փողոցը։

«Կը լինի՞ մի օր էլ ես որանց պէս ուսումնարան գնամ. առաւօտները վեր կենամ շատ վաղ, կօշիկներս սրբեմ, մազերս սանրեմ, ես էլ նրանց պէս մաքուր, գեղեցիկ շորեր հագնեմ, սև գոգնոցով, սիրուն ուսնոցով. կապեմ գրքերս, առնեմ թևիս տակ, ուրախ ու զւարթ վազեմ ուսումնարան։ Այնտեղ դեռ ոչ ոք չի լինիլ. բակը աւելեմ, դռները, պատուհանները սրբեմ, ուսուցչիս հեշտաեռն էլ փայլեցնեմ։ Նա ինձի շատ սիրէ. ասէ Շուշան, առ այս գիրքը կարդա, այս նկարներով գիրքը քոնը լինի... Երբ կը դառնամ տուն, տան գործն էլ կանեմ, մայրիկիս կօգնեմ, լացք կանեմ. օ, շատ կաշխատեմ. ափսոս չի՞ մայրիկս. նա շատ է չարչարւում»։ Նա սիրում էր երկար

մտածել, տարւել վառ ցնորքներով, քաղցր ու աուշն պատրանքով։

Անցնում էին օրեր։ Մի առաւօտ վերին յարկի քոյրերը կարմացան։ Շուշանը դուրսը չէր, նրանց չը բարեւեց. երկրորդ օրն էլ չը կար նա։ Տրամեցին, մի մեծ բանից զրկւած էին համարում իրանց։ «Այսօր էլ մենք վատ թւանշան կը ստանանք» նախագուշակում էին նրանք։ Եւ երբ դասից վերադարձան տուն, անմիջապէս իջան ներքնայարկը և առաջին անգամ մտան Շուշանի ծնողների բնակարանը։

Շուշանը հիւանդ է. նա պառկած է թախտի մի ծայրին. այտերը կարմրել են, աչքերը աւելի են վառւում, շրթունքները չորացել են, սիրտը արագ-արագ բաբախում է, իսկ շնչառութիւնը տաք է, ինչպէս կրակ։

—Բարի լոյս քեզ, Շուշան, տկար ես։

—Այո, դարմացած պատասխանեց նա։

—Ի՞նչու տկարացար։

—Չգիտեմ։

—Մրսել է. անցեալ օրը այն ցրտին հօ տեսաք, դուրսը կանգնած էր։ Մրսել է, շատ է մրսել, միջամտեց մայրը, խնդրելով օրիորդներին նստել։ Նրանք տեղաւորւեցին հիւանդի մօտ. մի վարկեան տիրեց լռութիւն, ապա կարեկցաբար նայելով հիւանդին, սկսեց մեծ քոյրը։

—Իհարկէ կը մրսի, տաք հագուստ չունի, վերարկու չունի, նոյն իսկ մի շալ չունի ուսերին։

—Ի՞նչպէս չէ, բամբագի փուֆայկայ ունի, չի հագնում, ի՞նչ անեմ. ամեն առաւօտ դուրսն է, ձեզ է նայում, ձեզ շատ է սիրում, այ թէ ինչո՞ւ է մրսում։ Ամեն օր լաց է լինում «ինձ ուսումնարան տարէք ես էլ եմ ուզում սովորել» բայց մեզ պէս խեղճին ուսումնարան ո՞վ կը տայ։

—Շուշանը լաւ աղջիկ է. ափսոս է, որ առանց ուսումի մնայ. իհարկէ պիտի ուսումնարան տաք, ուղիղ է ասում։

—Մայրիկս ինչ անի, մենք խեղճ ենք, թէ հարուստ լինէինք, ես էլ ձեզ հետ ուսումնարան կը գայի, այնտեղ լաւ է, չէ՞, շատ գրքեր կան։

—Այո՛, մի ամբողջ սենեակ լիքը։

—Եւ այդ բոլորը դուք կարդում էք. կարող էք տուն էլ բերել, այնպէս չէ՞. ուսումնարանն ինչ լաւ է։ Ես որ վեր կենամ... ես... ես էլ կը գամ. կը տանէ՞ք, հա՞, ինձ էլ կը տանէ՞ք։

—Անպատճառ, անպատճառ, կը տանենք. դու այնքան լաւ աղջիկ ես, Շուշան, դու այնքան բարի են։

—Հայրիկս չի թողնիլ. ես ամեն երեկոյ խանութի կօշիկները սրբում եմ. մայրս էլ մեղք է. օ, նա անչափ գործ ունի. նա լուացք է անում. ես էլ տան գործն եմ շինում, երեխաներին եմ պահում. այդ դուք չը գիտէք. հայրս բարկացոտ է... բայց ուսումնարան ինչ լաւ է. առում էք ամբողջ սենեակը գիրք է, այսպէս, մինչև առաստաղը լի՞քը, օ՜ ինչ շատ է, կարդո՞ւմ էք. խաղալիք էլ կայ, տիկի՞ն էլ կայ... Բայց ես ոչինչ չունեմ, ոչինչ։ Որ ես ուսումնարան գնամ, մայրիկ, կը թողնե՞ս։

—Կը թողնեմ, միայն լաւացիր, շուտով լաւացիր։

—Ես լաւացել եմ, այ, տես, լաւ եմ, ձեռքերիս մէջ չի այրուում. այստեղ մի փոքր ծակում է, ձեռքդ բեր, այ, այստեղ, կռանս տակ, կարծես դանակով են ծակում, շատ չի ցաւում։ Առաւօտը վեր կը կենամ, դուրսը կը սպասեմ ձեզ, դուք ինձ կասէք. «բարի լոյս Շուշան, տկա՞ր ես», ես էլ կասեմ,—ո՛չ, այժմ, առողջ եմ։

—Ո՛չ, այդպէս չի լինիլ. մենք առաւօտ կը գանք քեզ մօտ ու կը տանենք քեզ ուսումնարան։

—Դո՞ւք, ի՞նձ, ուսումնարա՞ն. ո՛չ, խաբում էք, ես գիտեմ... բայց չէք խաբիլ, այնպէս չէ՞. գիտեմ, բայց ես ձեզանից մի բան պիտի խնդրեմ... այնպէս սրտով ուզում եմ գրքերը բռնել թևիս տակ ու ման գալ։ Առաւօտները երբ դուք ուսումնարան էք գնում, ես էլ այնպէս գնամ,

մի փոքր հեռու ու նորից գամ մեր տունը. բայց գրքեր չունեմ... Այստեղ, ուսումնարանի այն մեծ սենեակից, ինձ համար մեծ գիրք բերեցէք. ես էլի ձեզ յետ կը տամ. միայն մի օր, գարձեալ տարէք. հա՞, կը տա՞ք, կը բերէ՞ք։

—Հէնց այս բոպէին քեզ համար գրքեր կը բերենք, որքան ուզում ես. մենք շատ ունենք, պատասխանեց Հեղինէն. փոքր քոյրը վազեց տուն, մի քանի վարկեանից յետոյ բերեց Շուշանի ուզած գրքերը և դառնալով հիւանդին ասաց.

—Ահա այս բոլորը քոնն է՝ քեզ ենք ընծայում։

Հիւանդը աչքերին չի հաւատում. նա մերթ մօրն է նայում, մերթ քոյրերին, թւում է նրան որ ահա մէկնումէկը գրքերը նորից պիտի առնի։ Երկու ձեռքով ամուր բռնած, նա դիտում է, նոյնիսկ չէ վստահանում թերթել։

—Շուշան, ապա՛ բաց, այդ կարմիր կողով գրքի մէջ պատկերներ կան, ասաց Հեղինէն, սիրալիր նայելով նրան։

—Ուզիդ էք ասում, այս գրքերը ի՞նձ կը տաք։ չէ՞ք տանի։

—Այդ բոլորն էլ քոնն է. մենք դեռ ուրիշ գրքեր էլ պիտի տանք։

—Շնորհակալ եմ. այս ինձ բաւական է. ես որ լաւանամ, էլի ձեզ յետ կը տամ. հայրիկը ինձ համար կառնի. նստեցէք. ի՞նչու վեր կացաք։

—Թող հայրիկդ էլ առնի, բայց մենք քեզ էլի շատ գրքեր կը տանք նրա համար, որ դու շատ ես սիրում։

Շուշանիկը ոչինչ չէ պատասխանում. նայում է գրքերին. թերթում է. նայում է պատկերներին գրքերը նորից դարսում է, գնում է թևի տակ, նորից վերցնում։

«Ա՜խ ինչ լաւ է այդպէս... բայց ես վատանում եմ». նրա աչքերը մթնում են, մայրը ջուր է տալիս, օրիորդները քացախ են քսում ճակատին. նա փոքր ինչ ուշքի է գալիս, գրքերը հաւաքում, գնում է թևի տակ և իր սիրալիր հայեացքը նորից ուղղում է օրիորդներին. նրա վառ,

հրեշտակային աչքերը, անթարթ նայում են. իր երախտագիտութիւնն է ուզում արտայայտել ամբողջ էութեամբ. և այդ վայրկեանին նա որքան գեղեցիկ, որքան չքնաղ է նա ցանկանում է իր ամբողջ սիրտը բաց անել նրանց առաջ. ուզում է խօսել, բայց չի կարողանում... Յանկարծ նա լաց է լինում։

—Զգիտեմ, այնպէս լաց գալիս է. հեկեկանքը զսպելով, պատասխանում է նա օրիորդներին և նորից բաց անելով կարմիր կողով գիրքը, կանգ է առնում մի պատկերի վրայ։ – Այս փոքրիկ աղջիկը պահում է իր կոյր պապին, այնպէս չէ՞։

—Այո, դա մուրացկանութիւն է անում և կերակրում է իր ծերունի և կոյր պապին։

—Խեղճ աղջիկ, նա ուսումնարան գնացել է։

—Այո, ուսումնարան եղել է. երբ ծնողներից զրկուել է, դուրս է եկել և երկար տարիներ իր պապին պահել է։

—Այդ բոլորը այստեղ գրուած է, անպէս չէ՞։

—Այո դա փոքրիկ Հեղինէի պատմութիւնն է։

—Ի՞նչ լաւ աղջիկ է. իսկ ես ուզում եմ խեղճ մայրիկիս թողնել և ուսումնարան գնալ։ Նա երկար նայում է պատկերներին, թւում է նրան, որ ինքը իրաւունք չունի ուսումնարան գնալու, քանի որ իր ծնողները խեղճ են։

—Մայրիկ, դառնում է նա մօրը օրիորդների դուրս գալուց յետոյ, Հեղինէի հայրը շատ փող ունի։

—Այո, նրա հայրը վաճառական է։

—Ինչու՞ հայրիկս էլ վաճառական չէ... այն ժամանակ ես էլ ուսումնարան կը գնայի և եթէ մեր բակումը մի կօշկակարի աղջիկ ապրէր, ես նրան շատ կը սիրէի, հետը խաղ կ'անէի, մեր տունը կը տանէի, ուսումնարան էլ ցոյց կը տայի, խաղալիքներ կը տայի... Ձեռքերս էլի այրւում են, ինչ վատ եմ... հայրիկս ինչու՞ չեկաւ։

—Դեռ թնդանօթը չեն արձակել, երևի շուտով կը գայ, ի՞նչ պիտի անես։

—Այնպէս, ուզում եմ որ շուտով գայ։ Կ'ասեմ գիրք ունեմ... ես ուսումնարան... բայց չի թողնիլ... մայրիկ, կօշկակարի աղջկանը ուսումնարան կը թողնե՞ն։

—Իհարկէ կը թողնեն։

—Ո՛չ, կ'ասեն քու հայրիկդ կօշկակար է. դու էլ գնա լացք արա, տունս սրբի, բակ աւլիր, գիտե՞ս այդպէս է. ուզում ես Հեղինէին հարցրու. նա այդ բոլորը գիտէ, բայց չի ասում, այ վաղը տօն է, նա ինքն ասաց, մեզ մօտ պիտի գայ. ուզում ես հարցրու. Կարծես ուզում եմ քնել, թէ ինչ՝ ինքս էլ չգիտեմ։

—Եթէ քունդ տանում է, քնիր, ես էլ լացքը պարզաջրեմ, այ, այս բոպէիս կը գամ։

—Գնա, մայրիկ, ես լաւ եմ, ասաց Շուշանիկը։ Բայց նա լաւ չէր. տաքութիւնը ոսոստկանում էր, գլուխը ցաւում, ականջները խշշում էին, հայեացքը պղտորւում էր, վերմակը ծանրացել ճնշում էր նրան. թւում էր սենեակը մեծանում է, պատերն էլ են շարժւում ու ինքը տարւում է, աւելի շուտ ընկնում է այնտեղ, հեռու կանաչ բլրակի վրայ. ահա պիտի հասնի ու տանջանքից ազատուի։ Բայց նա գլորւում է անդունդ, ահռելի խորխորատներ, և օգնութիւն է կանչում... Ձառացնում է, անհասկանալի բառերի մէջ մերթ լսւում է, գիրք... ուսումնարան... կօշկակարի աղջիկ...

Նա չիմացաւ ի՞նչ պատահեց իր հետ գիշերը։ Լուսաբացին կարծես փոքր ինչ լաւ էր զգում իրան։ Երբ աչքերը բաց արաւ, կարմիր կազմով գիրքը ընկած էր իր կողքին, իսկոյն առաւ դրեց թևի տակ։ Մայրը աթոռի վրայ հագուստով նստած էր, հայրը աշխատանքի չէր գընացել, լամպարը դեռ վառւում էր։ Նա ուշադրութիւնը լարեց, հարևանի տանը պատի ժամացոյցը խփում էր. համարեց, ժամի եօթն էր. դա նրան զարմանք պատճառեց. ի՞նչու այդ ժամանակին մայրը դեռ նստած է, հայրը գործի չի գնացել... մութը, երազի պէս մի բան էր դառ-

նում նրա գլխում. կարծես մտաբերում էր գիշերվայ անցքը. «խեղճ հայրիկ» դուրս թռաւ յանկարծ նրա բերանից, աչքերը փակեց և ուզեց մտաբերել բոլորը, բոլորը ինչ կատարուեց այդ գիշեր։

Մայրը սթափուեց, երեսին խաչ հանեց. կռացաւ, դիտեց Շուշանի շնչառութիւնը և կարծելով թէ նա քնած է, զգուշութեամբ սկսեց սենեակի իրերը կարգի դցել։

Դուռը կամացուկ բացուեց, ոտքերի ծայրով ներս մտաւ Հեղինէն։

—Մայրիկ, Շուշանիկը քնած է։—Քնած է հազիւ լսելի արտասանեց մայրը։

—Ոչ, քնած չեմ, ես այնպէս միայն եմ անում, ուրախացած պատասխանեց աղջիկը. մայրը շփոթուած էր, նրա տանջուած դէմքի վրայ երևում էր յուսահատութիւն և երկիւղ. նա այդ մի գիշերվայ մէջ կրել էր անասելի վիշտ ու տանջանք։

—Հայրիկիդ խօսեցիր, ինչ է ասում։

—Հայրիկս ասում է, թող Շուշանը ուսումնարան գնայ։

—Ուղիղ, ուրախացած բացականչեց Հեղինէն։

—Շուշանս ճիշտ է ասում, հայրը համաձայն է։

—Ուրեմն վաղը Շուշանը ուսումնարան է գնում։ Այստեղ մեզ մօտիկ ուսումնարան կայ, կը խնդրեմ, որ ընդունեն։

—Հայրիկս ասաց. ասաց թող Շուշանին էլ ուսումնարան գնայ. մենակ ես, ասաց, տեղը չգիտեմ, ասաց ես Հեղինէի համար մի զոյգ կօշիկ կը կարեմ, թող տանի. ես այնպէս հիւանդ էի, երբ հայրիկս ասաց, լաւացայ. բայց գիտեմ, ինձ չեն ընդունի։

—Ի՞նչու։

—Նրա համար որ... ես ուսումնարանի հագուստ չունիմ. ես գիտեմ. բոլորին էլ ճանաչում եմ. այսպիսի հագուստով ոչ ոք ուսումնարան չի գնում. խեղճ մայրիկս որտեղից կառնի։

—Այս կապոցը տեսնում ես, ինչ կը լինի այստեղ։

—Չգիտեմ։

—Ապա առ, բաց։

Շուշանիկը արագ բացեց կապոցը և յանկարծ կանգ առաւ։

—Ի՞նչ ես զարմանում, փոքր քրոջս հագուստն է, քեզ համար եմ բերել. այ, տեսար ,հագուստ էլ ունիս։

—Մայրիկ, տես, ասում է ինձ համար է բերել այս հագուստը. ես պիտ հագնեմ, իսկ ձեր հայրիկը չի՞ բարկանալ, այնպէս չի՞... ինչ լաւն է ձեր հայրիկը. բայց իմ հայրիկն էլ լաւն է. նա փող չունի, կօշկակար է, ասաց, ինձ թողնում է, որ ուսումնարան գնամ։ Ես լսում էի երբ մօրս հետ խօսում էր. նա լաց եղաւ. նա ինձ համբուրեց. այնպէս սիրում է ինձ, ձեռքս բռնեց, ասաց, ինչ տաք է. ձեռքերս էլ համբուրեց. ասաց, գնամ, բժիշկ կանչեմ. մայրիկս չէր թողնում. բայց նա գնաց. խեղճ հայրիկ, գընաց բժիշկ բերեց. մի մեծ մարդ... Ես նրանից վախում էի. նա չգիտեմ ինչու՞ հօրս վրայ բարկացաւ, բղաւեց։ Երբ բժիշկը գնաց, մայրիկս շատ լաց եղաւ, հայրիկս էլ լաց եղաւ. իմ լացն էլ եկաւ, յեռոյ... քնեցի...—Մայրիկ, ախր հայրիկս չգիտի, որ ես ուսումնարանի հագուստ ունիմ. որքան կուրախանայ։ Ձեր հայրիկը գիտէ՞, որ ինձ էք տալիս, հօ չի՞ բարկանալ։

—Մենք պատմեցինք նրան. նա քեզ շատ սիրեց. ասաց ուսումնարանի վարձն էլ կը տամ, գրքերի փողն էլ, ուսումնարանի հագուստն էլ այնպէս, որդու ոչ մի բանի հոգ չես տանի։

—Ուսումնարանին փող են տալիս, ախ ես այդ չգիտէի, գլուխս այնպէս ցաւում է... եթէ մեռնեմ, այն ժամանակ ոչինչ, ոչինչ էլ հարկաւոր չի... Ա՜խ ինչ վատ եմ...

Հեղինին կանչեց տարաւ իրանց սպասուհին, մօր հրա-

մանով. վախենում էին վարակելուց թէև բժիշկը ասել էր, «թոքերի բորբոքում է»։

Շուշանիկը մնաց մենակ։ Խոհանոցում մայրը աշխատում է, կրակ է անում, ածուխը լցրել է քուրան, փչում է, ուզում է կրակը աւելի բորբոքի. նրա մռայլ աչքերից մէկ-մէկ կաթում են արցունքի կաթիլներ, ընկնում է թէժ կրակի վրայ, թշշում ու կորչում։ Ինքը, կօշկակարը, կուչ է եկել, աւելի է կռացել. մկանունքները դուրս են ցցուել, աչքերը խորացել, փոս ընկել, յօնքերը եկել ծածկել նրանց. նա ջղաձգական ցնցումներով այս անկիւնից այն անկիւնն է ընկնում, կարծես մի բան է որոնում. մեծ աշխատանքի մէջ է։ Տաւարի փափուկ լղար միս է գնել. այդպէս է բժիշկը հրամայել. «երկու ֆունտ միս, ութ բաժակ ջուր, այնքան եփել, որ երկու բաժակ մնայ»։ Ահա կրակի վրայ միսը եփում է. նա մի անգամ չափել է, դեռ 4 բաժակ ջուր կայ. դեռ շատ պիտի եռայ։ «Ահ, ինչ ուշ է այդ ջուրը քաշւում. ԷԲԲ պիտի երկու բաժակ մնայ». մտածում է կօշկակարը, շուտ-շուտ նայելով կաթսային։ «Մսաջուր, մսաջուր, սիայն մսաջուր պիտի տալ. ով գիտէ ինչ էք, տուել. ձեր աղջիկը չի ապրիլ. նրա դրութիւնը անյուսալի. է երբ դանակը ոսկորին է հասնում, նոր էք գալի ինձ մօտ». բղաւել է նրանց վրայ բժիշկը ու կրակ է դցել ծնողների սիրտը։ Այժմ նրանք բուլիոնի շուրջը պատւում են, կարծես դա պէտք է իրանց աղջկանը ազատէ. կարծես այդ փրկարար հեղուկից է կախւած նրա կեանքը։ Նրանք երբեմն իրար եռևից դողդողալով մտնում են աղջկայ մօտ, ապա նորից խոհանոց, նորից ածուխ են աւելացնում ու բորբոքում կրակը։

Այդ միջոցին Շուշանիկը նորից բացեց կապոցը, նայեց հագուստին, կոճակներին, գրպանին. ապա դոգնոցն ու ուսնոցը զննեց, ցանկացաւ մի վայրկեան իրան երևակայել այդ հագուստի մէջ. գիրքը թևի տակ, ուսումնարան գնալիս, բայց դա նրան չյաջողւեց. միտքը պղտորւում էր. գլուխը լի էր այլանդակ պատկերներով, առհելի, տխուր։ Մեծ դժւարութեամբ նստեց. ապա սկսեց հագնւել նոր զգեստը։ Երբ ուսնոցը գցեց ուսերին, կարծես նա իրան լաւ զգաց, գոգնոցն էլ կապեց և զգուշութեամբ իջաւ ցած. մի ձեռքով յենւեց պատին, միւս ձեռքով գրքերը առաւ թևի տակ. ապա պատէ պատ բռնելով հասաւ դռներին. դուռը բաց արաւ ու անցաւ դուրս։ Նրա ոտքերը ծալւում էին, գլուխը պտտւում էր, բայց ուրախ էր, անչափ ուրախ. նա նայում էր իրան, գրքերին, և թւում էր, որ ահա ուսումնարան է գնում... Մի քանի քայլ էլ արաւ. ահա և խոհանոցը, նա իր ամբողջ ոյժերը հաւաքեց, ուզում էր դուռը բաց անել, գոչել. «Հայրիկ ջան, տես ես ուսումնարան եմ գնում»։ Բայց դեռ շէմքին չհասած, աչքերը մթնեցին, երերաց, տատանւեց ու վայր ընկաւ...

Ծնողները լեղապատառ դուրս վազեցին, բայց իրանց աչքերին չէին ուզում հաւատալ. գրքերը ամուր բռնած՝ անշնչացած ընկած էր իրանց աղջիկը։ Նրանք ճչացին պոռացին. նրանց ձայնը երկինք հասաւ. տները դողացին, հարևանները ցնցուեցին, ամբողջ բակը հաւաքւեց, բայց վշտից խելագար ծնողներին չկարողացան մխիթարել։ Շուշանի անմեղ, հրեշտակային հոգին դեռ սաւառնում էր կօշկակարի տանը, բայց նրա փոքրիկ ու վտիտ մարմինը ուսումնարանի հագուստով, գրքերը թևի տակ, դրեցին հողի մէջ։

Շուշանը ուսումնարան գնաց, այն միակ ուսումնարանը, որի դռները բաց են ամենքի համար, անխտիր հարուստ թէ աղքատ, կօշկակար թէ վաճառական։

1001/3401

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Public Library
7/II-1922
ՄՈՍԿՎԱ, Մոսկվա
Ա. ՄՅՍՍ 4 ՍԻՆ

ԼՈՒՍԻ

Հարթ հաւասար տարածութեան վրայ կանգնած էր մի մենաւոր տնակ։ Հաստ ու ամուր էին նրա պատերը, կոպիտ քարերից, կիր ու աւազով ծեփած։ Մի նեղլիկ, երկաթապատ լուսանցք, մի փեղկանի հաստ ու ցածրիկ դուռ, թիթեղեայ մուգկարմրագոյն տանիք—ահա տան ամբողջ կազմը։

Դռնից քիչ հեռու, ցանկապատի ուղիղ մէջ տեղում, բուսել էր տան միակ զարդ՝ փոքրիկ ծիրանի ծառը. նրա կատարի ցիրուցան փռուած դալար ոստերը հասնում էին մինչև տանիքը, քսւում էին պատերին, ասես մեղմիւ խօսում, մխիթարում էին տնակին։

Համարեա տան շեմքից ձգուած է ուղիղ ու երկայն ճանապարհ սև, զուգահեռական երկաթէ ձողերով, որոնք հեռուում միանում, մի գիծ են դառնում ու անհետանում հորիզոնի տակ։

Տխուր է. տխուր է և՛ ծառը, և՛ նրա բնակիչները։ Բոլորն էլ կարծես այս մոռացուած անկիւնում աշխարհից հալածականներ լինին։ Ծանր թախիծն է իշխում բոլորի վրայ։

Տնակի մի անկիւնում, երկար թախտի վրայ պառկած է մի մաշուած ու դալկացած կին։ Նա նոր է ազատուել երկունքից, աչքերը փոսեն ընկել, ծնոտի և այտերի ոսկորները դուրս են ցցել։ Ո՞վ կ՚ասի, թարշամած, պառաւացած կինը երեկուայ ջահիլ, սիրուն Գիւլօն է։

Երկու տարի չկայ, որ նա թողեց հայրենի գիւղը, իր սիրելի բարեկամներին, տեսուճանաչ դրացիներին ու եկաւ այս երկաթուղու գիծը։ Ի՞նչպէս էին գիւղացիք նախանձ-

ւում նրանց վրա. «14 բուբլի փող ինքը Սաքօն պիտի ստանայ, 4 բուբլի կինը. ամսական 18 բուբլի. տան և ութ մանէթ. կինն էլ պիտի փող ստանայ», գլուխներն օրօրելով՝ ասում էին գիւղացիք։

Ինքն, Ուհանանց Սաքօն էլ պակաս չէր հրճւում։ Նա հրպարտանալով՝ երբեմն իր նոր պաշտօնական գլխարկի նշանն էր ուղղում, երբեմն կոճակներն էր փայլեցնում և օգուտելով իր գիտեցած ռուսաց բառերից՝ ծանր-ծանր խօսում էր։ «Հեշտ չէ, եղբայր, բուդկաչի դառնալ. չորս տարի ռեմոնտնի ռաբոչի եմ եղել. պէտք է գիտենաս կաստիլը ոնց են խփում, շպալը ինչպէս են ամրացնում, դայկան ու բոլտը ոնց են հուպ տալի. պէտք է գիտենաս որտեղ է պուտը ռազշիրիլ եղել. դժար է, շատ դժար է»։

—Աֆարիմ, դոչաղ ես, եղբայր, ինչ ասենք. հալալ լինի, գովում էին նրան գիւղացիք։

Ուրախ էր և Գիւլօն. նա այժմ միշտ իր ամուսնու հետ կը լինի, այլևս ամիսներով, տարիներով աչքը ճանապի չի մնալ. այժմ ամեն օր, ամեն երեկոյ իր Սաքօն, իր սիրելի ամուսինը տանը, իր կողքինկը լինի։ «Թող տարի ծայրին, թող քարի, ապառաժի վրա լինիմ, միայն ամուսնուս հետ». պատասխանում էր Գիւլօն, երբ դրացիները նկատում էին նրան, որ «նա միայնակութիւն կը քաշի, մօրից, քրոջից հեռու լինելը դժւար է». նա քրքջալով պատասխանում էր. «ոչ, ոչ, ամուսնուց հեռու ապրելն է դժւար»։ Օ՜, որքան ուրախ էր նա. մանաւանդ, այն նախանձ օձ, հարևանի հարս Հերիքից հեռու կը լինի. սա իր ամուսնու հետ էլ հանաք չի անիլ։ «Սաքօ ջան, շուտով գնանք. շտապեցնում էր նա ամուսնուն, որքան բախտաւոր եմ». բացագանչում էր նա՝ փարւելով ամուսնու վզովը ու անհամբեր սպասում էր իրանց համար նշանակւած վագոնին, որ շուտով գնան երազած փառքին հասնելու։

Ինչ խաբուսիկ էր այդ երազը. ուղիղ հակառակը դուրս

եկաւ։ Այժմ նրա սրտից արիւն է գնում, տան չորս պատերը վիշապ են դառել, խեղդում են նրան... Օդ չկայ. սիրտը ճմլւում է, նա տանջւում է, ուզում է խօսել, ասել, պոռալ, պատմել իր վիշտը, իր սև օրը, լսող չկայ. նա յուսահատուած՝ գլուխը թաղում է բարձերի մէջ ու իր մարած աչքերից մի քանի կաթիլ արցունք էլ է քամում։ Բայց դա նրան չի հովացնում, կուրծքը աւելի է ուռչում, սիրտն ուզում է պայթել, ամբողջ տունը պատոյտ է գալիս գլխին. նրան թւում է, թէ թախտը շուռ է գալիս. նա աչքերը աւելի լայն բաց արած՝ երկու ձեռքով ամուր բռնում է թախտի եզրերից և իր երկիւղով լի հայեացքը գցում երեխաներին, կարծես օգնութիւն է խնդրում նրանցից։

Դողդողալով մօտենում է իր մեծ, 12 տարեկան աղջիկը, տալիս է նրան մի ման ցուրտ ջուր, միւս երկու փոքրիկները փաթաթւում են հիւանդ մօրը։

Մայրը դատարկում է ջրի ամանը, ուշքի է գալիս ու երեխաների հետ միասին սկսում է հեկեկալ։ Լուռ է միայն նորածինը. սա չորրորդ աղջիկն է, որ լոյս աշխարհ եկաւ, մի շատ անցանկալի հիւր։

Ծանր էր նրանց վիճակը. միայնակ, առանձնացած, կտրուած աշխարհից, օրեր են մթնեցնում, մէկը միւսին շատ նման։ Եթէ մի փոփոխութիւն կայ, դա գնացքն է. ահա նա թափ առած՝ որոտալով գալիս է, նրա դղրդիւնը բռնում է շրջակաքը, տնակի շուրջը մի վայրկեան կենդանութիւն է տիրում, շարժւում է տնակի փեղկը, ծառը օրօրւում է. այժմ նրանք միայնակ չեն, սլացող գնացքը նրանց հետ է. կիսաբաց փեղկերից երևում են անհամար գլուխներ, թռած գնում է մարդկային մի մեծ զանգուած։ Բայց ինչու նա մի ակնթարթում անցաւ, գնաց. ինչու մի վայրկեան կանգ չառաւ. կը տեսնէին գեղեցիկ ու առոյգ դէմքեր, երջանիկ ու ուրախ մարդիկ, կուշտ, զարդարուն երեխաներ...

Լռեց. անցաւ սլացող գնացքի հետ և նրա վերջին ազմուկը. նորից նոյնը, նոյն ծառը, նոյն մութ ու խոնաւ տնակը։ Ո՜հ, ինչ դառն է միայնութիւնը, ինչ դժուար է կեանքը տան չորս պատերի մէջ... Շատ են նայել չորս պատերին, շատ են խօսել նրանց հետ. իւրաքանչիւր խորշ իր բոլոր կազմով, իր բոլոր մանրամասնութիւններով, նրանց յայտնի են...

Սաքօն էլ անսիրտ է դարձել. նա տանը երկար չի մնում, ամբողջ օրը դուրսն է. դեռ շատ առաջ, երբ գծի վրայ մշակութիւն էր անում, ծանօթ էր իր պաշտօնակից Իւանի կնոջը։ Սա հաստլիկ, փոքրիկ աչքերով, լայն, սպիտակ երեսով մի ուրախ ու կայտառ կին էր. գարմանիկ ունէր, օղին էլ պակաս չէր նրանց տնից։

Խեղճ Գիւլօն հէնց գալու օրից նկատեց, բայց ամուսնուն բան չասաց. ներքուստ տանջւում էր, երբեմն իր կասկածը անիմն էր համարում, երբեմն էլ իրան էր մեղադրում։ Սկսեց աւելի սիրել ամուսնուն, աւելի փայփայել և նրա բոլոր պահանջները սրբութեամբ կատարել։ Մի քանի անգամ նա լաց եղաւ, խօսեց, ասեց իր դարդը ամուսնուն։ «Դու ես՝ թէ իմ մայրը, թէ իմ եղբայրը, թէ բարեկամս, քեզանով եմ ես միայն մխիթարւում». արցունք թափելով ասում էր կինը։ Բայց Սաքօն աւելի էր հրճւում. նրան աւելի էր դուր գալիս կնոջ վիշտը։ Մի քանի գիշեր նա տուն էլ չեկաւ. մի երկու անգամ էլ հարբած տուն ընկաւ ու սկսեց կնոջը ծեծել։ «Դու ինչ կին ես, կինը Մաշայի պէս պէտք է լինի, նա գարմանիկ է ածում, ուրախ զարթ թռչկոտում է, իսկ դու պառաւել, չորացել, դեղնել ես, սուգ է մեր տունը. սա տուն է, մարդ մի բոպէ որ նստում է, քիչ է մնում, որ խեղդւի»։

Այս օր էլ նա չկար. առաւօտից գնացել է առաջիկայ կայարանը ռոճիկը ստանալու. «Նա կը խմի, կը հարբի, Մաշօի մօտ կը գնայ». մտածում էր Գիւլօն՝ խոր հոգոց հանելով։ Տանը հաց չկար, ալիւրը վաղուց էր հատել, և-

ըեխանները քաղցած են, նորածինը կաթ է ուզում... «Ա, ինչ դժուար է», դառնացած արտասանեց նա, ձեռը շփեց ճակատին ու գլուխը նորից թաղեց բարձերի մէջ. բայց երեխաներին հաց է հարկաւոր, մտածեց նա։

—Տուր հագուստս, Լուսի, դարձաւ նա աղջկանը։

—Ո՞ր պիտի գնաս։

—Էլ ո՞ւր է մնում, որ գնամ. թուրքի գիւղը։

—Խանումի մօտ, մայրիկ. ես գիտեմ նրանց տունը. անցեալ անգամ որ միասին գնացինք. ես էլ կարող եմ գնալ. խանումին կը խնդրեմ, կ՚ասեմ՝ մայրիկս տկար է, երեխան կաթ է ուզում. նա բարի է, չի մերժի. դու դեռ շատ հիւանդ ես, դու չես կարող։

—Այնտեղ վատ է, հազար ու մի շուն կայ, քեզ չի կարելի։

—Ես այս բոպէին կը գամ. ինչ պէտք է լինի որ, վազելով կը գամ։

—Քեզ չեն ճանաչում, ոչինչ չեն տալ. ո՞վ գիտէ, գէ՞խիդ ինչ փորձանք գայ։

—Ես կ՚ասեմ, կ՚ասեմ, բուդկաչի Սաքօի աղջիկն եմ. ոչինչ չի լինիլ, Աստուած վկայ, բան չի լինիլ, ես այս բոպէին...

Աղջիկը երկար չմտածեց, խլեց մօր հին շալը, գցեց ուսերին, կռան տակը դրաւ մի փոքրիկ պնակ ու անմիջապէս դուրս ելաւ տնից։

Փոքրերը ուրախացած՝ դուրս եկան նրա յետևից ու սկսեցին նայել քրոջը, մինչև որ նա կ՚անցնէր բլրակի միւս կողմը, ուր իր սեփական գիւղում ապրում էր կալուածատէր աղան իր խանումի հետ։

Անհամարձակ քայլերով ու դողդողալով աղջիկը մօտեցաւ աղայի տանը։ Նրա փոքրիկ սիրտը բաբախում էր, նա և վախենում էր, և՛ ամաչում։ Մի վայրկեան կանգ առաւ. տատանման մէջ էր. «յետ գնամ, ասեմ՝ չուին, բարկացան վրաս, բայց մայրիկս հիւանդ է, նա էլի լաց

կը լինի, երեխաներն էլ լաց կը լինին... Ո՜ւ, ինչ դժուար է»։ Փոքրիկ աղջիկը կրկին առաջ գնաց։ Ցանկապատի դռանը արդէն մօտ էր. դուռը փակ չէր, կարող էր ներս մտնել, բայց նորից կանգ առաւ. սիրտն աւելի ուժեղ ըսկսեց բաբախել։ «Ա՜խ, Տէր Աստուած», կոչեց աղջիկը՝ աւելի մօտենալով դռանը. մի քայլ էլ արաւ և նա արդէն բակումն էր։ Բայց չէր համարձակւում աչքերը վեր բարձրացնել, նայել տան լուսամուտներին։

—Ի՞նչ ես ուզում, այ աղջիկ, լսեց նա յանկարծ մի կոշտ ու բարձր ձայն և կարծես գետնի տակից բուսաւ նրա առաջ մի առոյգ ու յաղթանդամ պատանի։

—Երկու շահու կաթ. հայրիկս վաղը կը բերի փողը. ցածր ու վախկոտ ձայնով պատասխանեց աղջիկը։

—Ո՞վ է քո հայրը, ո՞ւմ աղջիկն ես դու։

—Ես... բուդկաչի Սաքօի. մայրս տկար է... ես... խանումի մօտ եմ եկել։

—Լաւ ես արել. խանումին ես կ՚ասեմ. սնանկ ես բերել. տուր տեսնեմ, ինչ սիրուն է, աղջիկ, ապա մի տեսնեմ. այդտեղ մի արտասու կաթ կը տանի. քաղաքի՞ցն էք առել։

—Այո...

—Աղջիկ, մեր շներից չվախեցաք. ինչ սրտոտ աղջիկ ես։

«Աղջիկ» բառը նա արտասանում էր մի առանձին շեշտով ու հաճոյքով։

Աղջիկը լուռ էր. նա այս ոգայից չափազանց վախենում էր. «ինչո՞ւ յետ չգնացի». մտածում էր նա։ Իսկ տղան աչքերը չռած՝ նայում էր նրա կիսամերկ սրունքներին, հասակին, իրանին և կարծես ինչ որ մտածում էր։

Աղջիկը դունատուել, ամբողջ մարմնով դողում էր։

Տուր պնակս. վախենալով ասաց նա։

Տղան զգաց, որ նա ուզում է փախչել։

—Կաթ չէ՞ ուզածդ. սպասիր, լցնեմ, տամ՝ տար, բայց այնպէս, որ ոչ ոք չտեսնի. ես քեզ ծածուկ կը տամ. արի իմ յետևից։

—Կաթ չեմ ուզում, տուր պնակս։

—Ահա այստեղ է, լցնեմ՝ տար. ես քու հօրը լաւ եմ ճանաչում, նա շատ բարի մարդ է. բուդկաչի Սաքօն չէ։

Աղջիկը դողդողալով հետևեց նրան. անցան ցանկապատի կողքով տան յետևի մասը և կանգ առան գոմի դռանը։

—Ա՛յ, տեսա՞ր, կաթը այստեղ է. դու կանգնիր, տեսնեմ գոմումը ուրիշ մարդ չկա՞յ։

Նա զգուշութեամբ մտաւ գոմը. աղջիկը կարծես փոքր ինչ հանգստացաւ, առանց տրտնջալու կանգնեց, մինչև որ տղան կաթը բերի։

—Արի ներ, արի՛, կաթը լցնեմ՝ տար. փոքր ինչ դուռը բաց անելով՝ ասաց տղան։

Աղջկանը նորից տիրեց երկիւղ. նա տեղից չշարժուեց։

—Աղջիկ, ի՞նչ ես կանգնել, ներ արի, շուտ, մարդ չը-տեսնի։

Այս ասելով՝ նա ցատկեց, բռնեց աղջկայ կռնից ու զոռով գոմը քաշեց, անմիջապէս փակեց դուռը. ապա առանց ձեռքիցը բաց թողնելու հարցրեց։

—Ասացիր՝ ում աղջիկն ես։

—Սաքօի. լաւակրկնած. արտասանեց աղջիկը։

Կիրքը կուրացրել էր տղային. «աղջիկ» բառը կլանել էր նրան. այլևս չհամբերեց, գիրկը առաւ աղջկան, բերանը ամուր փակեց ու թռաւ դէպի գոմի խորքը։

Հարբած, օրօրուելով՝ աղջկայ դուրս գնալուց յետոյ անմիջապէս ներս եկաւ Սաքօն, մի կապոց ձեռքին։

—Կնիկ, պենսի պիտի ստանանք, պենսի, գիտես. էլ դարդ մի անի. երբ պառաւենք, փողը իրան ոտովը կը գայ։ Աա՛, քանի՞ տարի ենք ծառայել։

—Ես ոչինչ չեմ հասկանում, զարմացած՝ պատասխանեց կինը։

—Ասում եմ՝ քանի՞ տարի ենք ծառայում։

—Երկու։

—Երկո՞ւ, քանուերեք տարի էլ որ ծառայենք, պենսի

կը ստանանք. քէֆ արա՛, ահա քեզ օղի. խմի՛ր, ասում եմ քեզ։

—Ինչի՞ ես ասում, այ մարդ. քսանուերեք տարի՞... Քսանուերեք տարի ծառայել կը լինի՞. մեր ոսկորները աւելի շուտ կը փթեն, խելքդ գլխի՞դ է։

—Ես հարբած չեմ, ես ուղիղ բան եմ ասում, յիմար, սարսաղ կին. բոլորը ուրախ են, շնորհաւորում են, աչքի լոյս են անում. ի՞նչ է, քսանուերեք տարին շատ է. տուր բաժակը, խմենք. դու չէ՞ս խմում։

—Ես չեմ խմում. օղին Մաշօն է խմում, տար նրան տուր, նա կը խմի։

—Շատ էլ լաւ կ'անի, նա խմում է և աշխատում է. տասը մանէթ ամիսը մենակ լուացքից է աշխատում, նրան հալալ է, կը տանեմ, թող նա խմի։

—Սպասի՛ր, Մաշօն չի փախչիլ. ռոճիկ ստացա՞ր։

—Հաշի՞ւ ես ուզում, համեցէ՛ք. 7 փութ ալիւր, փութը մի բուբլի տասը կոպէկ. չայ, շաքար մի բուբլի. հաշուեցի՞ր. չատերս չե՞ս տեսնում, մի բուբլի եմ տուել. չորս բուբլի էլ այդ չարչի ջհուդի պարտքը տուի, հացը մի փութ է, մի ռուբլի 20 կոպ. սա տեսնում ես, մի կվարտ է, ուղիղ 80 կոպէկ։ Բայց գիտե՞ս՝ որքան եմ ստացել. 16 ր. 92 կ., իսկ մնացած 1 բուբ. 8 կ. հանում են պենսի համար. էհ, դու ոչինչ չես հասկանում, քեզ համար ողջը մէկ է, ես գնում եմ. ահա հացը, տուր երեխանցը, թող ուտեն։

—Սպասի՛ր, ո՞ւր ես գնում. Լուսիկիս ուղարկեցի թուրքի գիւղը։

—Ի՞նչ կայ այնտեղ։

—Երեխան գնաց կաթ բերելու, խանումի մօտ։

—Յետո՞յ։

—Էլ ի՞նչ յետոյ, գնա՛, տես՝ ի՞նչ եղաւ։

—Ի՞նչ պէտք է լինի, կը գայ, երեխայ հօ չի, ժամանակ չունիմ. մարդատարը գալիս է, պէտք է գիծը նայեմ։ Այս ասելով՝ նա վերցրեց տան անկիւնից մեծ մուր

ճը, երկարակոթ սև, ժանգոտ բանալին, դրեց ուսին ու դուրս եկաւ։

Մութն ընկել էր, բայց աղջիկը դեռ չկար։ Հիւանդի դրութիւնն անտանելի էր. «Ինչու, ինչու ուշացաւ». հազարումի զարհուրելի պատկերներ դալիս, անցնում էին նրա գլխով. «Տէր Աստուած, այս ինչ պատիժ է». տեղի մէջ տապակւում էր նա։

Հայացքը նեղլիկ լուսամուտին յառած՝ մայրը տեսնում էր, թէ ինչպէս վայրկեան առ վայրկեան խաւարը թանձրանում է՝ իր մութ ծալքերի մէջ գրկած այնքան սարսափ, այնքան երկիւղ, յուսահատութիւն։

Եւ Լուսիկը չկար...

Մայրը լարում էր իր խղճուկ լսողութիւնը. չէ՞ որ եթէ աղջիկը դար, թեթև ոտնաձայն կը լինէր, արագ ու երկչոտ... ոչ մի ձայն, միայն մենաւոր ծառն էր շշնջում գիշերային թեթև հովի առաջ, լիզում էր կտուրը իր ոստիկներով, քաւում էր պատերին մեղմով և կարծես նոյնպէս խօսում էր անորոշ, ճնշող սարսափից։ Այն գիշերը իր մութ գրկի մէջ կամաց-կամաց խեղդում էր և՛ տնակը, և՛ նրա լքած բնակիչներին, և՛ մենաւոր ծառը։

—Մ՛այրիկ, Լուսիկը չեկաւ ախր... դուրսը մութ է... մրմնջում էին փոքրիկները։

—Չեկաւ, կրկնում էր մայրը՝ սիրտը ճնշած մի ահագին բեռի տակ, հևալով, արցունքները հոգիս զսպած։

Անցնում էին րոպէներ, երկար, երկար...

—Շորերս տուր, Աստղիկ. դիմեց մայրը փոքրիկ աղջկան և հեկեկաց դառնագին։ Քանի դեռ պառկած էր, յուսոյ մի նշոյլ ունէր. այժմ՝ երբ հագնւել սկսեց, այն էլ կորաւ։ «Ո՞ւր գնամ, ո՞րտեղից գտնեմ», մրմնջում էին նրա շրթունքները։ Երկու փոքրիկները ահուդողով նայում էին իրանց մօրը, հետեւում էին նրա շարժումներին և զգում էին նրա հոգում տիրող ահագին վիշտը։

—Տանից դուրս չգա՞ք. երբ ձեր հայրը կը գայ, կ՛ասէք որ... ես... գնացի Թուրքի գիւղը... աղայի տունը... լսեցի՞ք, թող նա էլ գայ, կ՛ասէք, որ Լուսիկը...

Նա այլեւս շարունակել չկարողացաւ և խելագրի պէս դուրս ընկաւ դռնից ու կորաւ խաւարի մէջ։ Երկու փոքրիկ աղջիկներ կծկւեցին նորածնի մօտ, որ ճչում էր անընդհատ։

Ճանապարհը սարսափելի էր, խաւարն աւելի թանձր, քան երբևիցէ. հիւանդ, ուժասպառ կինը և՛ վախենում էր, և՛ քայլում էր անընդհատ. լռութեան մէջ երբեմն հնչում էր նրա նւաղած ձայնը, որ կարծես բարձրանում էր ջրհորից. «Լուսիկ, Լուսիկ». այդ ժամանակ նա կանգնում էր, մի վայրկեան ականջ դնում, և երբ իր ձայնը մեռնում էր խաւարի մէջ, կրկին քայլում էր հևալով, շնչակտուր։

Ահա և Թուրքի գիւղը, որ ներքևում հազիւ ծրագրւում է ինչպէս մի ահռելի հրէշ, թաթերի տակ պահած ունի իր թանգագին զաւակին. «Լուսիկ, Լուսիկ». ոչ մի ձայն։ Ո՞ւր գնալ, գիւղում ոչ մի ճրագ, ում դուռը թակել, ում հարցնել։ Այնուամենայնիւ մօտեցաւ գիւղին, բոլորովին մօտ. «Լուսիկ, Լուսիկ»... Շների միահամուռ ոռնոցը խեղդեց նրա ձայնը, և դժբախտ կինը յետ դարձաւ շտապով, վազել սկսեց բոլորովին հակառակ կողմը՝ տրոբելով մացառները, արիւնոտելով ոտները։ Որքան վազեց նա, ինքն էլ չգիտէր, կանգ առաւ ուժասպառ, գիւղը հեռու էր. «Լուսիկ, Լուսիկ»... Մի թեթև նււոց, խղճուկ ու ցաւագին, հնչեց մօտիկ մացառների տակից. մայրը քարացաւ և կարծես խաւարի մէջ մէկը մի ահագին հարւած հասցրեց նրա գլխին. նււոցը շարունակւում էր, որպէս ուշ գիշերին քամու հծծիւն։ Մայրը շարժւեց դէպի մացառները, և յանկարծ նրա ոտների տակ ընկաւ մի մութ, անորոշ զանգւած. այդ զանգւածը իր աղջիկն էր, որ տնքում էր ցաւով. աղայի ծառան զազանային կրքին յաղթւդ տալուց յետոյ սրախողխող էր արել իր դժբախտ զոհին և դաշտ նետել՝ ոճրի հետքը կորցնելու համար։

Մայրը ճանաչեց այդ ձայնը, իր զաւակի այդ յեռին հառաչանքը և այնպիսի ճիչ արձակեց, որ ասես խաւարը դողաց և մացառների վրայ ծւարած թռչունները սարսափից թողեցին իրանց գիշերային ապաստանները սոսկումի ճթճթոցով։ Արիւնոտ համբոյրը միացրեց ուշաթափ մօր և մեռնող աղջկայ շրթունքները։

Եւ այնտեղ՝ մենաւոր տնակում՝ խաւարի մէջ հեկեկում են երկու փոքրիկ աղջիկները մայրը կորցրած ձագուկների պէս, անվերջ ճչում է քաղցած նորածինը, իսկ ծառը դրսից շշնջում է նրանց ականջին դաշտերից խլած հեռաւոր սարսափը։ Աւելի հեռուն, մի ուրիշ տնակի առաջ հնչում է Մաշայի դարմանիկը. Սաքօն հարբած՝ աչքերը պղտոր ու այլանդակ, երերալով մօտենում, գրկում է վաճառող կնոջ լիքը մարմինը, ապա ընկնում, թաւալւում է գետին՝ ոռնալով մի անպատկառ երգի անհասկանալի կտորները։

Լուսացաւ. գնացքը դարձեալ եկաւ շառաչելով. հարիւրաւոր գլուխներ կրկին դուրս ցցւեցին լուսամուտներից, բազմաթիւ անտարբեր, քնկոտ աչքեր նայեցին մենաւոր տնակին, և ոչ ոք, ոչ ոք չիմացաւ, թէ ինչ ահագին ցաւ կայ բուն դրած այն չորս քարէ պատերի մէջ։

Գնացքը սլացաւ որոտալով. մեծ կեանքն էր այն՝ անողորմ ու կոյր, որ փշրելով անցնում էր մանր գոյութիւնների վրայից։

ՀՈՒՓՍԻ

Ինքը տարեկան շինական աղջիկ Հռիփսին կամի վրա կանգնած՝ կալ է կալսում և տաղտուկ ձայնով երգում է։ Հսոովելց, եզը ջան. կալ արա, եզը ջան...

Կալի ամբողջ լայնութեամբ փռած է ցորենի օրանը, որը զոյգ եզների համաչափ քայլերի տակ տրորւում, նորից բարձրանում և թողնում է ցաք ու ցրիւ հետքեր։ Կամ խշշալով սողում է առաջ և երբեմն երբեմն քսւելով եզան ոտքերին հարթում է օրանը. եզը զգուշութեամբ խլում է ոտքերը նրանից, բայց կամը նորից հասնում, քերծում, արիւնոտում է նրա սրունքները։

Շոք է, թող է բարձրանում. կալի վրա տիրում է տաղտկութիւն։ Եզները յոգնել են, հազիւ են քարշ տալի՝ ահագին կամը. յոգնել է Հռիփսին, աչքերը փակւում են. գլուխը ծանրացել ցած է ընկնում, ոտքերը ցաւում են։

Մանի՛ մանր արա, եզը ջան.—գնդընում է նա.—կալը մանր արա, եզը ջան։ Կալի շուրջը գոխազների տակից անհանգիստ ադմուկ է անում ճռիկը։ Մարտի կաթը, ցորենի դէզի մօտ, պառաւ Եղսիկ տատը փնթփնթալով թափփւած հասկերը խնամքով հաւաքում է։ Լուռ է միայն Հռիփսիկի մայը, նոր այրիացած Շողերը, որը եզանով տխուր, տրտում շուռ է տալի օրանը։

—Ֆշէ, բալայ ջան, ֆշէ. օրը ճաշ էլաւ, կալը դեռ չի իմացել։

«Օրը ճաշ էլաւ». ահ, Հռիփսիկը ինչպէս կուզէր, որ իրաւ օրը ճաշ լինէր։ Նա իր թմրած աչքերը բռնցքով տրրորում է, ապա գոխազի տակից նայում է կոտրած սայ-

լի շաքին։ «Օ՜ դեռ շատ կայ շաքը պէտք է թէքի սրահի պատին հասնի, որ օրը ճաշ լինի». մտածում է նա, բայց մօրը ոչինչ չի ասում։

Արեգակը բարձրացել է, իր բուռը ճառագայթները ուղղել է կալին, ծղոտը տաքացել վառւում է. կալի միջից տեղ-տեղ կարծես ալաւ է բարձրանում։ Սպիտակ փալասի կտորը չի կարողանում Հռիփսիկի գլուխը ամբողջապէս ծածկել. նրա ծոծրակը, ճակատը, այրուել, սևացել, մազերից չի զանազանւում։ Մի քանի տեղ կարկատաններով լաթած շապիկն էլ հազիւ է ծածկում նրա մերկ մարմինը։

Օ՜, ինչ շոք է. կոչում է նա և ակամայից աչքը կը-թում է դէզի շաքին. «եթէ այժմ նա կարողանար, այնտեղ պառկել. գլուխը խրձին դնէր և քնէր, երկար քնէր։ Ամբողջ գիշերը նա ցորենը շատարարել է մօր հետ. դարմանը հալել է մարաքը, և հազիւ ընկել էր քնելու՝ վեր էին հանել և վաղ առաւօտանից կամի վրայ չորանում է։

«Կալը մնար արա, եզը ջան. նորից շշնչում է նա. «հօռօվեվ» եզը ջան». երգում է նա կարծես տաղտուկը հեռացնելու համար։

Ծաղտուկը չի հեռանում, նա աւելի է թմբում, միատեսակ պտոյտները, եզների համաչափ քայլերը, ծղոտի, կամի խշշոցը, ճռիկի պաղ-պաղ կոչը, այդ բոլորը ձուլում, ներդաշնակում են մի օրօրի, որը այնքան քաղցր է լսում երբ պարկում են քնելու...

Նա աչքերը տրորում, նորից նայում է սայլի շաքին. այսօր նա կարծես տեղը քարացել է. չի շարժւում։ Գոնէ տանիցը մէկը դուրս գար և իրան տեղ կամը քշէր. մտածում է նա և քունը փախցնելու համար, նորից դնդնում է։

«Հօռօվեվօն» նրա բերանում մեծանում, լիզուի վրայ ճնշում է և նա չի կարողանում մինչև վերջը ասել. գլուխը հակւում է, ծնկները թուլանում, ընկնում է նա կամի վրա։ Թւում է նրան, որ սայլի շաքը մեծացել—դա-

խազից անցել է, երկարացել—սրահի պատին է հասել։ Ճաշ է. եզները բաց է թողել. տարել է աղբիւրը, եզները ջուր են խմում, ինքն էլ է ուզում խմել. աղբիւրը քշքշում է, ստոր ջուրը անցնում է նրա բերանի մօտով, վիզը ցաւում է, ծուռում է, ուզում է հասնել ջրին, բայց յանկարծ մինը ծոծրակին խփում է, գլուխը դիպչում է քարին։ Նա աչքերը բաց է անում, նայում է շուրջը. եզները կանգնել են. պառաւ տատը փնթփնթում է։

—Գլուխդ մեռնի, եզները ցորենը կերան, դու քընում ես։

Պառաւը դեռ երկար անիծում է թոռին, իսկ նա զարմացած նայում է նրան, և հազիւ ուշքի գալով, խփում է եզներին և նորից սկսում է ընդհատւած պտոյտները։

Այդ միջոցին պառաւ քոթօն, պոչին հաւաքւած ճանճերի հետ կուելով, արագ անցաւ կալի միջով, և մի քանի բերան ճանճ որսալուց յետոյ, քնկոտ գլուխը կոխեց դէզի խորքը, ոտքերը ձգեց և դեզի շաքում սկսեց հանգիստ խռմփալ։

—Քութի, քութի, ինքն էլ չիմանալով թէ ինչու, մի քանի անգամ կանչեց աղջիկը։ Շունը դանդաղ կերպով պոչը շարժեց, և ցանկանալով հաւաստիացնել իր համակրանքը, թեթև կերպով բարձրացրեց գլուխը, նայեց աղջկանը և նորից սկսեց խռմփոցը։

—Քութի, քութի, նորից կանչեց նա, բայց այս անգամ շունը ծուլացաւ պատասխանելու, այլ շարունակեց աւելի եռանդով խռմփալ, որով Հռիփսիկին աւելի ու աւելի էր գրաւում դէզի շաքը. եթէ ինքն էլ կարողանար գլուխը դնէր քոթօի վրայ և նրա պէս հանգիստ քնէր...

—Ջուր եմ ուզում, դառաւ նա մօրը։ Մայրը փայտեայ փոքրիկ կուժը շաքից հանեց, տւեց աղջկանը. եզները կանգ առան, նա կուշտ խմեց, և փոքր ինչ թարմացած՝ ուզեց նա մօրը հետ խօսել։

—Մայրիկ, կալը որ քամենք, դէզի տակը կը քնենք, հա՜. այ, քոթօն որ քնել է։

Մայրը լուռ էր. նա խորասուզուած իր մտածմունքների մէջ, առանց հասկանալու աղջկայ ասածը, մեքենաբար միայն գլխով է անում։

—Մայրիկ, նորից դառնում է աղջիկը մօրը,—կալը որ քամենք, ցորենը էլի պիտի տանի՞ն։

Մայրը նայում է աղջկանը, բայց չի պատասխանում։

—Մայրիկ, ցորենը քոխւան պիտի դայ չափի ու իրանց տունը պիտի տանի՞։

Տատին էլ խո՜ւ չի ծէծիլ, չէ՞ նանի։

Նանը լուռ էր. նա զգուշութեամբ նայեց տատին, կարծես համոզելու համար, որ այսօր տատին հո չը պիտի ծեծեն։ Այդ միջոցին Հռիփսիկի փոքր եղբայրը ձմերուկի մի մեծ կճէպ վազելով բերեց տուեց քրոջը.—ես էլի կը բերեմ.—ասաց ու նորից վազեց դէզի խանութը, ուր խլխլում էին իրար ձեռքից աղբակոյտում թափուած ձմերուկի և սեխի կճեպները։

Հռիփսիկը մի քանի անգամ կռան տակով սրբեց և ագահաբար կրծեց, մինչև կճեպը ձեռքումը կը հալուէր։ Անցեալ ամառ լաւ էր, յիշեց նա, ապին ձորիցը մի բեռը ձմերուկ բերեց, ինքը այդ օր մի ամբողջ ձմերուկ ուտեցաւ, մեծ, կարմիր ձմերուկ էր. նա միայն կէսը կարողացաւ ուտել, իսկ միւս կէսը ջուր շինեց ու խմեց. անո՜ւշ ջուրը։ Նա նորից ծարաւ զգաց, նայեց շաքին, թեքւել էր քիչ էր մնացել, որ հասնէր սրահի պատին. բայց այդ քիչը որքան երկարանում է... նայեց քնած քոթօին, որը գլուխը հանել, մի քանի անելես ճանճերի հետ կռւում էր. նրա քաւթառ ատամները մի քանի անգամ խփւեցին իրար, ապա նորից գլուխը կոխեց դէզի խորքը.

—Քութի, քութի, քութի, կոչեց Հռիփսիկը ինքն իկան, առանց շանը նայելու. շան անտարբերութիւնը Հռիփսիմին չէր վրդովում, նա միայն ցանկանում էր շանը

հասկացնել, որ քութի լինելը լաւ է. նա համ կամը չէ քշում, համ էլ շաքի տակը քնում է։ Եթէ ինքն էլ քնէր. այնպէս աչքերը փակէր, քնէր խորը, նրան ոչ ոք չը զարթեցնէր։

Կալի մօտով անցնում էին գիւղի մեծամեծները։ Քաղաքից ստացած նոր օրաթերթը ձեռքերին, կարդում էին. լաւ լուր չէր բերել նա՝ բոլորի դէմքն էլ դաժան էր։ Նրանք կանգ առան կալի առաջ. մէկը մօտեցաւ, ինչ որ փսփսաց «քոխուի» ականջին, սա ուղղելով վզի դեղին նշանադրոշմի շղթան, հազաց և դէմքին լուրջ դիրք տալով, դառաւ Շողերին.—Այ քերա՛յ, այնպէս արա, որ էլ դուռդ չը բերես ինձ. էս մարդին պարտ էք 5 թաղար 20 խան ցորեն. իրան կը տաք։ Գլխինդ լաչակ ա, ես չեմ կարող ոտս ոտիդ դնել, հէնց արա էն օրուայ պէս աշխարհը գլխիդ չբերեմ։

Հռիփսին լացակնուել էր, պառաւ տատը ափը ձեռքին կուչ էր եկել երկուտակուել և դողում էր բարկութիւնից. Շողերը ամօթխածութիւնից գլուխը կախել, տխուրատում նայում էր առաջը ընկած հասկերին. նրա աչքերից կաթ-կաթ ընկնում էին արցունքներ։

—Քշիր, բալա ջան, տեսնենք ինչ է գալիս գլուխներս. արցունքի արանքից ասում է նրան մայրը՝ գիւղի մեծերը հեռանալուց յետոյ։

Աղջիկը շապիկի թևով սրբում է աչքերը և կատարելով մօր հրամանը նորից սկսում է «Հօռօվելօ, եզը ջանը»։

Տատը կարծես մեխուած լինի դոխազին, ոչ մի շարժում չի անում. դա թոռը նկատում է, նրա սիրտը ցաւում է—տատի ջան, դառնում է նա պառաւին.—գնա, դէզի շաքը, գլուխդ վէր դի, միքիչ ննջա՛յ։

—Տատդ սև ննջայ իրա գլխին, մահը փախել է նրանից։

—Ինչի մեռնես, տատի ջան, քոխւէն գնաց, նա էլ

քեզ չի ծեծիլ. նաչառլիդը չի թողնիլ, այ, որ եկել էր քոխուի տունը։

—Քիչ լեզուիդ տուր, քշէ, օրը ճաշ եկաւ, պառաւը համբերութիւնից դուրս գալով նկատեց թոռանը։ Սա տրխրեց. նայեց եղներին, նրանք հեւում էին։ Կալը մանր արա, եզը ջան. նա աջ ձեռքով եզան շփելով սկսեց իր հոռովելօն աւելի քնքոյշ և վշտալի։

ՊԱՀԱԿԸ

Զօրանոցի նեղ սրահանցքում անհանգիստ անց ու դարձ էր անում պահակը. նա իր համաչափ քայլածքի հետ նայում էր պատից կախուած մեծ ժամացոյցին և երբեմն իր մոլոր հայեացքը ուղղում էր հեռուն, խաւարի մէջ նշմարւող սարերի կատարներին։

Գիշերը տարի էր դառել. ոչ մի շշուկ, ոչ մի ձայն, ոչ մի կենդանի արարած չկոր շուրջը. միայն մի հատիկ դժգոյն լամպարն էր աղօտ ցոլքեր արձակում. ահ ինչ տխուր էր։

Նա ծոցից հանեց մաշուած, դեղնած ծրարի մէջ պահուած մի հին նամակ. մօտեցաւ լամպարին և խնամքով սկսեց բացանել նրա ծալքերը. նա կարդալու համար չը հանեց նամակը գրագէտ չէր, բայց նամակի ամեն մի գիծը, ծուռնումուռ երկար տողերը նրան շատ բան էր ասում. նա ծանօթ էր, հասկանում էր, աւելի շուտ զգում էր, որ իրան այդտեղ հարազատ, սրտակից շատ բան կար ասուած։

Նրան պատկերացաւ գիւղի փոքրիկ եկեղեցին. ծերունի Տէր-Ուհանը հարթ գերեզմանաքարին նստած, կորացած մէջքով զանգակատան սիւնին հենուած՝ նամակ է գրում. նրա ոտքերի մօտ, փեշից ամուր բռնած, գլուխը խոնարհել, կծկւել է իր մայրը. փետուրի գրիչը դողում է սպիտակ թղթի վրայ. իսկ մօր աչքերից—արցունքը այնպէս հոսում է։

«Սարեր, լեռներ ճեղքեց, օտար աշխարհ հանեց. գեամին կրակի պէս փախցրեց հեռու, հեռու, մօր աչքից, մօր

կրծքից խլեց որդուն»... գրել էր մայրը։ Երկար նայեց նա նամակին, թուղթը մատեցրեց շրթունքներին և համբ լուռ թեան մէջ ապրում էր մօր իւրաքանչիւր խօսքի, իրաքանչիւր շեշտի հետ։ Սիրտը բաբախում էր, կարօտ էր զգում, անսահման կարօտ։ Նա հոգով թռել էր հայրենի աշխարհը. ահա իրանց գիւղը, ահա ճանապարհի խաչքարը, հարազատ տունը, օջաղը, ահա մեծ եղբայրը, ծերունի հայրը, իր սիրատուն քոյրը և պառաւ տատը։ Այնտեղ ինչ լաւ էր. օջաղի շուրջը բոլորը շարուած... Նա որքան երջանիկ էր. բայց այժմ, հրացանը ամուր գրկած՝ հսկում է մարդկանց. ինչու...

Երէկ նրանց երգուեցրել էին, մաղթանքով, խաչերով, աւետարաններով. նրանք համբուրել երդուել էին, որ իրանց գնդակը չի վրիպիլ, որ իրանք առանց տատանուելու լուռ ու մունջ կը կատարեն իրանց վրայ դրած սուրբ պարտքը, գնդակահար կանեն երբ... Նա յիշեց այդ բոլորը և սառսուռ զգաց։ Յիշեց երբ նա դողդողալով մատեցնում էր շրթունքները, աւետարանը ցնցուեց, խաչը տէրտէրի ձեռքում դողաց և զինորին թուաց, որ յանցանքի առաջին քայլը արել էր։

Սառեցնող ցուրտ անցաւ նրա ամբողջ մարմնի մէջ. ճակատ շփեց, մի քանի արագ շարժում արաւ և տենդային դրութեան մէջ սկսեց նորից անցուդարձ անել։

Հարևան սենեակում ընկերները այնքան հանդիստ քնած էին. այն ինչ ինքը տանջւում է. միտքը պղտորուել էր, անդուլ մտածմունքներ եկել պաշարել էին նրան. ինչու է նա տանջւում. ինչու է նա դատապարտուած հրացանների սվիներին, խաչերին և աւետարաններին։ Խաչով նա երդւում է, որ սվիներով մարդիկ սպանի. որպիսի սերտ կապ այդ երկու գործիքի մէջ. մէկով նա երդւում է, որ միւսով ոճիր գործի... Նրան այդ թմրութիւնից հանեցին մի շարք կալանաւորների մատենալը զինուորանոցին. նա զգաստուեց, ուղղուեց, հրացան առաւ ուսին և սպասողական դիրք բռնեց։ Արդէն լուսացել էր և նա որոշ կարողացաւ տեսնել կալանաւորների դէմքերը. սովորական հագուստով, բարի և խելացի տեսքով մարդիկ էին. նրանց մէջը կար մի դեռահաս կին, երեք քահանայ՝ երկուսը դեռ շատ ջահել, միւսը ալեխառն. մնացածները թւով 7 – 8 հոգի երիտասարդներ էին։ Մի շարք զինուորներ հրացանների մէջ առած, միւսները մերկացրած սրերով շղթայ էին կապել նրանց շուրջը և դանդաղ քայլերով մատենում էին սրահանցքին։ Նա կարաուլ կանգնեց, պատշաճաւոր պատուով ճանապարհ տուեց նրանց դէպի զօրանոցի մուտքը։

—Ինչումն է սրանց յանցանքը, հարցրեց նա զինորներից մէկին,

—Պալիտիչսկիներեն, պատասխանեց սա ցածր։

—Ի՞նչի բերեցիք մեզ մօտ։

—Պիտի գնդակահարէք. աւելի ցածր ասաց նա։

—Մենք. այդ բոլորի՞ն։

—Մի քանիսը այսօր, միւսները վաղը... հազիւ լսելի ասաց նա և նոյն ձևով հարցրեց.

—Դուք երդուեցի՞ք։

—Այո.

—Խաչերով, աւետարաններով։

Պահակը գլխով դրական շարժում արաւ։

—Իսկ դուք, երկիւղով հարցրեց նա.

Զինուորը առանց պատասխանելու հեռացաւ. բայց պահակը նրա աչքերում նշմարեց դառը հեգնութիւն և վիշտ։

Թէ ինչպէս պատահեց, և ճանապարհին որպիսի դժբարութիւնների հանդիպեց, պահակը այդ չը գիտէր. միայն մի բան նրա համար պարզ էր, որ նա այժմ իր հայրենի գիւղումն է։

Սրտապատառ նա տուն ընկաւ, մոլոր, վշտահար այլ-

այլուած. նրա դէմքը դալկացած էր, խոր ընկած աչքերը երկիւղ, սարսափ էր ազդում նայողին։

Մեծ եղբայրը և ծերունի հայրը զարմացած նայում էին։

Մայրը այնքան էր ահաբեկուած, որ լեզուն կապւել էր. ամբողջ տունը քարացել էր։

—Ի՞նչ է պատահել, այդ դո՞ւ ես. ուժերը հաւաքելով խօսեց հայրը։

—Դուռը փակիր, փակիր... գալիս են։

—Ո՞վ, ո՞րտեղից, ո՞ւր էիր գնում։

—Ահա այնտեղ երեք սև սիւն կայ, այնպէս կանգնած. խօսեց կցկտուր պահակը։

— Վազեցի յետ, նորից կանգնեցի։ «Գնա կապիր, թոկը առ կապիր, նրանց կռները այն սիւներից»։

—Լ՛ըսում եմ... առացի. բայց ձեռքերս դողացին, գլուխս պտոյտ եկաւ, ընկնում էի։

«Շուտ», գոռացիր վրաս։ Արդէն կապում էի նրանց ձեռքերը. չէի համարձակւում տեղիցս շարժւել, նայել նրան. և երբ յետ էի գալիս, սիրտս ամբացրի, նայեցի, ա՛, այնտեղ է, նա ինձ նայում է... հեսու, ջուր ածա այդ կրակին. հանգցրու, ես վախում եմ։

Նա երկու ձեռքով ամուր ծածկեց երեսը. և կարծես երազի մէջ խօսեց։

...Սև, երկայն մազեր թափւած կրակոտ աչքերին, նա ինձ այնպէս նայեց. վշտահար... մայրիկ։ Վերջի բառը նա այնքան բարձր արտասանեց, որ տունը դողաց։ Մայրը ուշակորոյս մօտեցաւ նրան. ուզեց սփոփել, մի բան ասել որդուն, բայց տղան առանց ուշքի գալու շարունակեց։

«Անցէք տեղներդ, հրամայեցին մեզ»։

Կանգնած էինք։

«Կ՛ը-րա՛կ»...

Ձեռքերս դողաց, հրացանը վայր ընկաւ. դողում էի, ամբողջ մարմնով ցորտ էի զգում։

Մեր յետևից շարւեց մի այլ գունդ, լսւեց փամփուշտների շառաչիւնը, փողերը ուղղեցին դեպի մեզ՝ մեծ խարույկ պատրաստեցին մեր շուրջը. սարսափով էինք։

«Ն՛ը-շան». գոռացին մեզ։

Վ՛ըշշ. թռաւ գնդակը, աչքերս մթնեց։

Ընկած էր նա, թոկից կախւած ընկած. վիզը ծռւել, թեքւել էր պարանոցին. ձախ ձեռքով նա ամուր սեղմել էր իր վերքը բայց աչքերը, ես նայեցի նրանց. կրակ էր, թէժ կրակ, նրանք վառւում էին. մօտեցայ նրան. ծնկաչոք ընկայ նրա առաջ, կպայ նրա վիրաւոր կրծքին, արիւնը պահեցի ներսը, պահեցի, որ աչքերս չըտեսնի. լուռ ողբում էի, այնքան տանջանք կար այնտեղ վիշտ, ցաւ կար այնտեղ, սիրտս ճմըլւում էր... ես փախայ։ Նրա կրծքի տակ խաչ էր պահւած, և այդ խաչը նրան սպանեց։

Նա խենթացած նայում էր. մերթ ընկնում էր մօր գիրկը, մերթ հեռու էր նետւում նրանից։ Վազում էր դէպի եղբայրը. նորից իր յուսահատ, աղերսական հայեացքը գցում էր մօրը և կարծես ուզում էր հանգստանալ. որոնում էր, բայց տեղ չէր գտնում... Յանկարծ նա մի ճիչ արձակեց.—Թող ինձ աքսորէին, թող տանջէին տաժանակիր աշխատանքներում, թող մութ բանտերում քայքայէին իմ ամբողջ կեանքը. բայց չասէին այդ սիւնին կապած մարդուն սպանիր. չասէին թոկ առ և...

Նա կուչ եկաւ, կծկւեց և դառը կերպով սկսեց հեկեկալ. նրա դէմքը վշտահար էր, ճնշւած ու յուսահատ, երբեմն իր պղտոր հայեացքը գցում էր հեռուն, ջղաձգական ցնցումներ էր անում, երբեմն աչքերը փակում կպչում էր մօր կրծքին և հազիւ լսելի արտասանում.

...Եւ կրակը այնպէս բոցավառւում է. երկինքը կատաղի մրրիկ է բարձրացրել՝ տանում է մեզ. ո՞ւր...

ԲԱՆԻՈՐ

Մեծ չէր Օհանի ընտանիքը. կինը, վեց տարեկան աղջիկ և փոքրիկ տղայ։

Իր չնչին օրուայ վաստակով նա հազիւ էր կարողանում պահպանել իր փոքրիկ ընտանիքի խղճուկ գոյութիւնը։

Օհանը «սև բանւոր» էր երկաթուղու մեծ արհեստանոցում, բայց ձգտում էր սովորել, հետևում էր վարպետներին, որ ժամանակով գէթ վարպետի օգնական դառնայ։

Մի կիւրակի, շուկայում. երկար տատանումից յետոյ, գնեց մուրճ, մանգանայ, խարտոցներ և մի քանի մանր գործիքներ։

Այդ օրը Օհանի տանը կենդանութիւն էր տիրում. նա մանգանան էր ամրացնում սեղանին, գործիքները սրբում-փայլեցնում, խարտոցներն էր դասաւորում։ Երկու փոքրիկները մանկական հետաքրքրութեամբ նայում, օգնում էին իրանց հօրը, իսկ կինը՝ Եոթերը ճաշ էր պատրաստում։ Ամբողջ ամիս է որ մսի համ չէին տեսել. այս շաբաթ նրանք վարձ են ստացել և այդ շռայլութիւնը արեցին։

Որքան կոպիտ և առնական էր Օհանը իր խոժոռ դիմագծերով, նոյնքան նրա Եոթերը քնքոյշ և կանացի էր իր կազմուածքով։ Օհանը սիրում էր կնոջ և ամեն օր նորանոր առաւելութիւններ էր գտնում նրա մէջ։ Կինը այդ զգում էր և աշխատում էր սիրտ տալ, քաջալերել Օհանին։ Երբ սա յոգնած, դաղարած, տուն էր գալիս, ուրախ դիմաւորում էր նրան, հոգում էր նրա թէյի, հացի մասին, աշխատում էր միշտ ուրախ տրամադրութեան մէջ պահել նրան։

Օհանն էլ բոլէապէս կազդուրուելով՝ սկսում էր պատմել գործարանի կեանքից. մանաւանդ նա սիրում էր նկարագրել դարբնոցի աշխատանքը։ «Գիտես, ինչպէս են երկաթները կաղապարում, յղկում։ Մեծ հնոց է. երկաթի անպէտք կտորներ հաւաքում, կապուկ-կապուկ դարսում լցնում են այնտեղ, ապա դռները ամուր փակում և կրակ ու բոցը տալիս են նրա տակը։ Երկաթները կարմրում, շիկանում, եռում են. այդ ժամանակ վարպետը դառնում է մեզ։—Դէ, տղերք, պատրաստուեցէք։ Եւ մենք, ահագին ունելիքները ձերքերնիս, մի ակնթարթում դուրս ենք քաշում մի մեծ զանգուած՝ կրակ ու բոց և դնում շոգեշարժ մուրճի տակ։ Կայծերը խուրձ-խուրձ փախչում են մուրճի տակից, մեր երեսին, ձեռքերին և մենք լողում ենք բոցի, կրակի ու կայծերի մէջ։ Բայց սարսափելին յղկող, կաղապարող մեքենաներն են. սրանք շառաչիւնով դառնում են և մենք երկաթի մեծ զանգուածը մուրճի տակից նրա այս կամ այն բերանը պիտի նետենք, մինչև որ չստացուի կանոնաւոր ձևերով յղկուած, գործածութեան համար պատրաստ ձողեր։ Երբ անիւները դղրդալով դառնում են, երբ հսկայական ճախարակները մէկը միւսի մէջ օձապտոյտներ են անում, մարդ սարսափում է. բաւական է մի անզգոյշ քայլ և աշխատաւորը մեքենաների ակռաների տակ է, նա այլևս այս աշխարհիցը չէ։»

Կինը սարսափով խնդրում էր ամուսնուն՝ թողնել դարբնոցը, բայց Օհանը ծիծաղում էր, հպարտանում էր որ աշխատում է վառնգների մէջ։ Ինքնաբաւական կերպով միշտ նա հանգստացնում էր կնոջը. նա վառնգից վախեցող չէ, վարպետից էլ լաւ է հասկանում իր գործը. բայց աշխարհը անարդար է, իրան իր ընդունակութիւնների համեմատ չեն վարձատրում...Այն օրից, երբ կաշուի գործարանում նրա «ըմբոստ» հրատարակեցին և դուրս վռնդեցին, ամբողջ երկու ձիգ տարի, վաթսուն կոպէկ օրավարձով են նրանք ապրում։ Կարիքը նրանց շատ է նե-

դում, բայց մի կերպ ասնում են, յոյս ունենալով, որ մի օր նրան վարպետի տեղ պիտի տան։ Ահա թէ ինչու այսօր նա շատ ուրախ է, գործիքներ գնելու բոպէից նա իրան արդէն իսկական փականագործ է համարում։ Եւ աւելի եռանդով սրբելով ու փայլեցնելով իր նոր գնած գործիքները, Օհանը դասաւորեց նրանց և նստեց ճաշի ու բերկրութեամբ սկսեց մտապատկերել իր ապագայ գործունէութեան ծրագիրները։

Կինը պատրաստեց մի սեղան, որի ճոխութիւնը նրան զարմացրեց։

—Գինով լի շիշ, կանաչի, պանիր, վարունգ, այս ի՞նչ է Եսթեր, դարձաւ նա կնոջը։ Եթէ միշտ մենք այսպիսի՞ ճաշ ունենայինք։

—Եւ ամեն կիւրակի կ'ունենանք.

—Ի՞նչպէս, ուրախացած, հարցրեց ամուսինը։

—Մայրիկս շատ փող ունի, գիտէս, մայրիկը շատ. շորեր է կարում. ասաց աղջիկը նայելով մօրը։

—Ի՞նչ շորեր, ոչ, զարմացաճ, դիմեց Օհանը կնոջը։

—Այո՛, հրճւանքով պատասխանեց կինը. ես էլ եմ փող աշխատում, ես սրանից յետոյ օրական քսան կոպէկ պիտի աշխատեմ. չորս շապիկ հեշտ կը կարեմ, դեռ օրը վեց եօթն էլ կը կարեմ։ Մի մարդ բերեց, ինքը մեծ վաճառական է, ասում է.—«Խեղճ ընտանիք էք, գիտեմ, ձեր ամուսինը բանւոր է, գիտեմ, մարդը մեղք է, մենակ չի կարող տուն պահել, ժամանակս, ասում է, զէշ է. կինն էլ պիտի աշխատի. մեր հայ կանայք մենակ ուտել, խըմել, հագնել գիտեն, իրանց մարդկանցը չեն օգնում, ասում է»։

Նա պահարանից հանեց սպիտակեղէնների կապոցը և շարունակեց. «Երէկ բերեց, ասում է, մինչև շաբաթ օրը պիտի վերջացնես, քառասուն կոպէկ էլ փող տւեց. ասում է. ուրիշները օրական 10-ը կարում են, ամիսը 7—8 մանէթ փող են առնում»։ Որքան ուրախ եմ, ես էլ կ'աշխատեմ, դու էլ կ'աշխատես, միայն խնդրեմ, դու այժմ այդ դարբնոցից դուրս արի. տեղափոխուիր աւելի հեշտ բաժանմունքները, ոչինչ եթէ օրավարձդ քիչ էլ պակաս կը լինի, այնպէս չէ՞։»

Ամուսինը մեքենաբար գլխով արաւ, նա կէս զարմացած, կէս թերահաւատ լուռ նայում էր կնոջը, նրա բոլոր շարժումներին և սպիտակեղէնների այդ հարուստ կապոցին։ Կամաց-կամաց նրա ճակատը կնճռւում էր, բիբերը լայնանում, հայեացքը պըղտորւում էր։ Նա նորից նայեց կնոջը, աւելի զննող. աւելի խորը, նրան թուաց, որ այսօր նա աւելի է գեղեցկացել, աւելի գրաւիչ, աչքերը բոցավար, երջանիկ։ Երկար նայեց նա այդ հմայիչ պատկերին, ապա գլուխը կախեց, աչքերը դարձրեց իր մաշուած ու մրոտուած կաշուի պինջակին, կոշտացած ձեռքերին... դողաց, ցաւեցնող ցուրտ անցաւ նրա ամբողջ մարմնի մէջ. սոսկաց, ցնցուեց ու տեղիցը վերկացաւ։

Գիշերը վրա հասաւ, բայց Օհանի քունը չէր գալիս, նա ջարդուած ու տանջուած էր զգում իրան։ Զանազան մութ մտքեր գալիս անցնում էին նրա յոգնած գլխով, նա շատ ուրախ կը լինէր, որ այդ դէպքը պատահած չլինէր։ «Ի՞նչու ինքը այնպէս չլինէր, որ իր ընտանիքը պահել կարողանար»։ Բայց այժմ իսկապէս դա չէր նրա միակ վիշտը. գլխաւորը շատ խորն էր, գաւեցնող և սիրտ կըրծող, որից նա սարսափում էր։ Յանկարծ նա վեր էր թռչում և աչքերը լայն բացած՝ զննող հայեացքով, նայում էր հանգիստ ու երջանիկ քնած կնոջը։ Երբեմն նա ամաչում էր իր սեփական մտքից, աշխատում էր մոռանալ, քնել, բայց ներքին կրակը վառում էր նրա հոգին։

Բո՛ւ-ռ՛ւ... սուլոցի խրոխտ ձայնը անցաւ տարածուեց քաղաքի հազար ու մի աղքատիկ տան վրայ և Օհանին իր

ներքին տանջանքից հանեց։ Նա վեր թռաւ տեղիցը, երեսին խաչ հանեց ու շտապեց արհեստանոց։

Երբ գործարանի մեծը եկաւ, նա անվստահ կեքրով մօտեցաւ և այնպիսի աղերսանքով խնդրեց՝ գիշերն էլ իրան գործ տալ, որ սա չկարողացաւ մերժել. միայն զարմացած հարցրեց.

—Ի՞նչպէս, դուք դարբնոցում չէ՞ք աշխատում, այն ծանր աշխատանքից յետոյ էլ ոյժ կը մնայ գիշերուայ համար։

—Վիճակս նեղ է. ընտանիքս մեծ է. չեմ կարողանում պահել. եթէ կարելի է, հէնց այս օրուանից...

—Լաւ, եթէ ցանկանում էք—ես դէմ չեմ։

Օհանը ազատ շունչ քաշեց։ «Այժմ ես օրական մի ռուբլի կաշխատեմ, դա մեզ բաւական է. Եսթերին կ'ասեմ. դու աշխատանքի սովոր չես, աչքերդ կը ցաւեն... կ'ասեմ, ես երեկոներն էլ եմ աշխատելու, օրավարձս մի ռուբլի է։ Նա կ'ուրախանայ էլ չի կարի Եւ, կարծես մի փոքր ինչ թեթևութիւն զգալով, նա նորից կպաւ գործին, անհամբեր սպասելով երեկոյին, որպէսզի տուն, իր Եսթերի մօտ, պատմէ նրան օրուայ անցածը։ Բայց այդ դրութիւնը երկար չտևեց, հանգիստ աշխատել չէր կարողանում, նորից մտածմունքներ գալիս պաշարում էին նրան. «Եսթերը կ'ասի, աւելի լաւ, այժմ մենք երկուսով աւելի շատ կ'աշխատենք, աւելի լաւ կ'ապրենք»։ Նա երբեմն վճռում էր անկեղծ կերպով բանալ սիրտը, ասել. «Եսթեր ջան, ես կասկածում եմ...։ երկիւղ եմ կրում... չեմ ուզում, որ մի ուրիշ տղամարդ նայէ քու երեսին. խօսի քեզ հետ, ձեռք տայ քեզ. ես կը մեռնեմ, ես վախում եմ, թւում է ինձ, որ քեզ կը խլեն ինձանից... մի՛ կարիլ։»

Միտքը ալեկոծ՝ նա աշխատեց մինչև գիշերուայ ժամի տասը և իր յոգնած քայլերը ուղղեց դէպի տուն։ Նա գնում էր արագ և միևնոյն ժամանակ ծրագրում իր ասելիքը։ Քանի դեռ տնից հեռու էր՝ կորական էին նրա վճիռները. երբ տանը մօտեցաւ, յանկարծ բոլորովին փոխուեց։ «Այժմ Եսթերը քնած կը լինի. մտածեցնա, զգուշութեամբ կը մտնեմ, դուռը կամաց կը բանամ, որ չզարթեցնեմ նրան. չէ՞ որ նա յոգնած է. ես առաւօտեան կ'ասեմ բաց կանեմ սիրտս նրա առաջ։»

Սրտի բաբախումով մօտեցաւ նա տանը. դուռը փակ չէր, լամպան դէռ ներսը վառւում էր։ «Մի՞թէ քնած չէ, երևի դեռ աշխատում է», մտածեց և զգուշութեամբ դուռը բաց արաւ. բայց ի՞նչ մեծ նորութիւն նրանց տանը։ Կինը վեր թռաւ և սովորականից ուրախ ընկաւ մարդու վիզը ու համբուրելով կոչեց։

—Օհան ջան, տեսնում ես, մենք կարի մեքենայ ունենք։ Ի՞նչու, ի՞նչու ուշացար. որքան անհամբեր սպասում էի քեզ։

—Գիտես, սա մերն է, վաճառականը գնեց. չե՞ս հաւատում, ես ամեն ամիս իմ աշխատած կարի փողիցը պիտի վճարեմ նրան. նա ասում է, որ ես այժմ տասը ռուբլուց աւելի կաշխատեմ, թող ինքը ամսական հինգ ռուբլին տանի՝ մինչև պարտքը վերջանայ։ Տես, այսօր համարեա ճաշից յետոյ տասը շապիկ եմ սկսել, շուտով կ'աւարտեմ։

Կինը նորից մօտեցաւ մեքենային, վերսկսեց իր ընդհատած կարը, լցնելով սենեակը մեքենայի միակերպ աղմուկով։

Օհանը ոչինչ չասեց. նայում էր մեքենային, նայում էր կնոջը, նրա արագաշարժ ձեռներին. թւում էր, որ այդ անշունչ մեքենան իրանից բարձր է. որ նա չի կարում, այլ կռւում, իր սուր ասեղով նրա կուրծքը ծակոտում է. և ինքը չի կարողանում նրա հարուածներին դիմանալ։ Օ՜, այդ բոլորը տանելու համար նա շատ անզօր է։

Մի վայրկեան նա նորից վճռեց դուրս գնալ, փախչել տնից, չլսել այդ ձայնը, բայց կանգ առաւ, մի ճիգ թափեց, ուզեց խօսել։

—Եսթեր... Եսս... ըրը... երեխաները... Վաղուց է, որ քնել են։

Կինը մեքենայի արանքից զարմացած նայեց ամուս, նուն և պատասխանի փոխարէն դարձաւ նրան.

—Քնիր, բեզարած ես, ինչու չես հանգստանում։ Սեղանի վրա քեզ համար միս եմ դրել, կեր և պառկիր քնիր։

—Ո՛չ, ո՛չ, ախորժակ չունեմ։ Դու չե՞ս քնում։

—Ա՛յ շուտով կ՚աւարտեմ. դու կեր, մինչև ես վերջացնեմ։

Օհանը մի վարկեան չմտացաւ ինչ անի. շարեց, կարկամեց, բայց զգաց որ իր վիճակը ծանր է, շատ դժւար։

Ի՞նչ անէր. նա սոսկում էր երբ այն միտքը լոկ իբրև մի մտածմունք՝ դառնում էր իր գլխում. ինչպէս ասէ, չէ՞ որ նաեսթերին կը ստրբացնէ, կ՚անպատուէ։ Ինչ դժւար է բայց հարկաւոր է տանել՝ չէր կարող, սիրտը քիչ է մնում դուրս գայ. պայթի... Նա աչքերը փակեց, գլուխը խոնարհեց և յանկարծ, կարծես սթափուած, սկսեց։

—Եսթեր. մի կարիր... ես...

—Բայց, նա առաջ չը կարողացաւ գնալ. Եսթերը իր երջանիկ ժպիտը ուղղեց դէպի ամուսինը և սիրալիր կերպով ասաց.—լաւ, ասում ես, ես էլ չեմ կարիլ. սա էլ առաւօտը. դու երևի շատ ես յոգնած։

Օհանը, որ մինչև այդ կանգնած էր, երերաց և եթէ մօտիկ աթոռը չլինէր, պիտի ընկնէր։ Տխուր էր, յոգնած ու տանջւած,

Կինը կարը հաւաքեց և մեքենան սրբելով դարձաւ ամուսնուն.

—Գիտե՞ս, սա ամենալաւ մեքենան է. «Զինգեր է» սրա անունը։ Այդ վաճառականը շատ լաւ մարդ է, հարուստ, ջահել և որքա՜ն բարի։

—Ջահե՞լ։

—Այո. նրա խանութը լիքն է նուրբ ձեռագործներով և զանազան թանկագին իրերով։ Նա ինձ ձեռագործ էլ

պիտի սովորեցնէ, ես ասեղնագործ շապիկներ պիտի կարեմ. նրանք շատ թանգ են գնահատւում, հատը մի ռուբլի. ասում է օրը կարող եմ մի հատ կարել։ Քեզ համար էլ պիտի կարեմ, մետաքս կրծքով. ա՛յ տես, այս կտորը նա ընծայեց. ասում է «ուրախացրու մարդուդ». նա այնքան բարի է, քո մասին դարձեալ հարցրեց, ես ասացի՝ նա փականագործ է, ամիսը քսան ռուբլի է ստանում։ Լաւ չարի՞։ Գոյնզգոյն թելեր էլ պիտի տայ։ Օ՜ այնքան գեղեցիկ, այնքան լաւ բաներ կայ նրա խանութում. ինձ տարաւ իր խանութը, գիտե՞ս կամուրջի վրայ է, մեզանից շատ մօտ։

Կինը չափից դուրս ուրախ էր, ուզում էր խօսել, շատ խօսել, մանակից անել ամուսնուն իր այս մի քանի օրուայ ուրախութեանը։ Նա թէև ամուսնու կողմից մի տեսակ սառնութիւն էր նկատում, բայց այդ աւելի շուտ նրա յոգնածութեանն էր վերագրում. նրա գլխովն անգամ չէր անցնում, որ իր այդ շատախոսութեամբ Օհանի տանջանքն է կը ըկնապատկում, որ իր իւրաքանչիւր խօսքը ցընցում է նրան։

Այդ ինքնակոչ մարդու անունը նա տանել չէր կարողանում. մեքենան այդ սպիտակեղենների կապոցը հրեղէն դարձել կրծում են Օհանի սիրտը։ վերջապէս կինը լռեց։

Օհանի քունը չէր տանում. անկողնի մէջ տապակւում էր. քրտինքը կոխել էր նրան. սիրտը բաբախում էր. դարհուրելի մտքեր շարան-շարան գալիս անցնում էին նրա գլխով։ Երեք օր չկայ, խանութն է տարել, վաղը տուն կը տանի, իսկ միւս, միւս օրը... Նա հարուստ է, ջահել է, իսկ ես՝ սև մշակ, աւելի ոչինչ։

Բայց ի՞նչու, ինչու՞ չեմ դէն շպրտում մեքենան և այս սպիտակեղէնների կապոցը. ինչու՞ չեմ կտրում այդ սուտ բարերարի ոտը»։

Նա երբեմն հաստատ վճռում էր, նոյնիսկ մի քանի անգամ տեղից ցատկեց, նայեց անշունչ մեքենային, նայեց խաղաղ ու հանգիստ քնած կնոջը. բայց այդ իր ոյ-

ժերից վեր էր. կարծես ինքը իրանից ամաչեց. «օ, որքան կոպիտ եմ չէ, այսպէս չի կարող լինել։ Ես կարող եմ միայն խնդրել, աղաչել։ Բայց դա ինչ դժուար է և որքան անգութ։

«Ի՞նչու այսքան խղճուկ ու չնչին եմ»։ Եւ նա ինքն իր աչքում ստորացաւ, մանրացաւ. «մարդ էլ այսքան անպէտք, այսպէս չնչին լինի»։

Եւ առաջի անգամ նրա գլխով անցաւ մի զարհուրելի միտք... Թոքերը սղմեցին, յեռոյ ուռան, սիրտը աւելի ուժգին բաբախեց և իր ուժգին շնչառութեան հետ նրա կրծքից դուրս թռաւ մի խոր հառաչ, մահը իր ահռելի տեսքով եկաւ, կանգ առաւ նրա առաջ. նա դողաց սոսկաց, կարծես զգում էր, կարծես հաւատացած էր, որ միակ ելքը դա է...

Նա խղճաց ինքն իրան, պարզ տեսաւ իր թշւառ վիճակը. «Մի՞թէ սա չի տեսնում». նայեց կնոջը, բայց նա խաղաղ անվրդով քնած էր, խորը երջանիկ քնով։ Ապրելու բուռն տենչը վերսին փոթորկեց նրա հոգին ուժգնորէն, բայց և այնպէս մահուան գաղափարը նրան դադար չէր տալիս. «ամեն ցաւից ու տանջանքից, ամեն դժբախտութիւնից խաղաղ կազատուես. մեռիր, միայն մեռիր». կարծես նրա ականջին փսփսում էր ահռելի ու դաժան...

Նա ամբողջ գիշերը չ՛քնեց անտանելի տանջանքներից։ Եւ գիշերը հակառակի պէս կարծես անծայր էր, չէր լուսանում։ Նա այլևս չ՛համբերեց, շարժուեց տեղից շորերը հագաւ. տխուր էր, անտանելի տխուր. նրա աչքին ընկաւ խնամքով ծածկուած մեքենան, սպիտակեղենի կապոցը, դարցեալ նոյն ցաւը, նոյն անտանելի վիշտը, նոյն ծանր թախիծը, որ նստել էր նրա հոգու վրայ։ Յոգնած էր, ոտքերը չէին շարժւում. մի միտք, մի մութ ու ահռելի միտք նրան պաշարել էր, գլխից չէր հեռանում, կարծես շոյում մխիթարում էր նրան ու միևնոյն ժամանակ, սարսուռ էր ազդում նրան։ Ուզում էր փախչել,

ազատուել, նա խղճում էր իրան. «Երէկ որքան երջանիկ էր, իսկ այսօր... ինչ դառն է կեանքը»։

Նա ընկաւ ամուսնու անկողնի առաջ, իր կոշտացած ձեռքերը դրեց ծնոտին, նայեց կնոջը, նրա քնքոյշ և թարմը երեսին. որքան հանգիստ է նա։ Երկար նայեց ուզում էր կշտանալ, կարծես զգում էր, գիտէր, որ ընդմիշտ պիտի զրկուի նրանից... կուրծքը լցւեց, աչքերը մթնեցին և ցաւի յորձանք, մի աղէ կտուր հառաչանք դուրս թռաւ նրա կրծքից։ Պիտի հեկեկար, արդէն անձնատուր էր եղել ցաւին, երբ սուլիչը հնչեց, նա ամբողջ մարմնով դողաց, նրա աչքերի խոքից կաթեց երկու կաթիլ խոր վշտի արցունք. հեկանքը զսպած՝ դողդող շրթունքները մօտեցրեց կնոջ մազերին, համբուրեց. ուզեց բան ասել, ուզեց վերջին անգամ խօսել. բայց խեղդւում էր... նորից հնչեց սուլոցը... Օհանը անորոշ կերպով, համարեա մեքնայաբար, կամաց դուռը բաց արաւ և ոտքերի ծայրերով դուրս ելաւ։

Արցունքը հեղեղի պէս թափւում էր նրա աչքերից, կուրծքը բարձր ու ցածր էր անում և այդ հսկայ տղամարդը փողոցի մէջ հեկեկում էր ինչպէս երեխայ, որը անտէր երեխայ։

ՄԻ ԿՏՈՐ ՀԱՑԻ ՀԱՄԱՐ

Մեքենավար Դաւիթ Միքայէլեանը ննջարանում մեծ մահճակալի վրա հանգիստ քնած էր։ Սև, երկար թերթերունքները փակել էին նրա աչքերը. նորածիլ երիտասարդական բեղերի տակից երևում էին նրա առողջ շրթունքները. և խելացի ճակատը՝ իր թաւ, առնացի յօնքերով, մի առանձին վեհութիւն է տալիս նրա կանոնաւոր դիմագծին։

Ջահիլ կինը դեռ արթուն էր. ննջարանի լուսամուտի առաջ նստած՝ սպիտակեղէնները էր կարում և մերթընդմերթ անհանգստութեամբ նայում էր դէպի դուրսը։ Կատաղի քամին ձիւնի ահագին հիւսերը խառնելով իրար՝ քշում, տանում էր մէկը միւսի յետևից. երբեմն ոլորում էր իբրև մի հսկայական անիւ, կամ մի ահռելի սիւն, ապա գոռում-գոչիւնով խփում էր լուսամուտի փեղկերին՝ դողացնելով ամբողջ տունը։ Մարգարիտը սարսափած՝ երեսին խաչ էր հանում, մօտենալով մերթ ամուսնու, մերթ իր վեցամեայ Լեոնիկի մահճակալին։ Նա գոհ էր գոնէ, որ այս բուք բորանին, այս սարսափելի եղանակին իր Դաւիթը տանն է, իր մօտ։ Քանի կատաղում էր քամին, քանի սաստկանում էր նրա մռնչիւնը, Մարգարիտն աւելի էր մօտենում ամուսնուն, աւելի սիրալիր էր նայում նրա խաղաղ և անվրդով դէմքին. կարծես այդ ժամամանակ նրա կրծքից բղխած աղօթքը աւելի զօրեղ էր հընչւում, նրա սև կրակոտ աչքերը աւելի էին բոցավառւում։ Եղաւ նոյնիսկ վայրկեան. երբ նա չոքեց ամուսնու մահճակալի առաջ, խոնարհւեց և զգուշութեամբ մի քնքոյշ համբոյր գողացաւ նրա շրթունքներից։ «Ա՜խ, ինչ լաւ է»,

լի յուզմունքով մրմնջաց նա, զգալով բուռն տենչ փարել ամուսնուն, փաթաթւել նրա պարանոցով ու համբուրել... Կարը գցեց մի կողմ. սկսեց շտապ-շտապ հանուել և մի անբացատրելի հաճոյք զգալով դրսի ահեղ փոթորկից՝ կոչեց. «Խփիր, ջարդիր, կատաղիր, ես չեմ վախենում. ես այժմ նոյնիսկ ցանկանում եմ, որ դու աւելի ուժեղ, աւելի ահաւոր լինես. ահա իմ Դաւիթը ինձ մօտ է»։ Ապա մազերը արձակեց, կռացաւ, սանրերը դարսեց սեղանի վրա, գլուխը բարձրացրեց, ուղղւեց, պչրանքով նայեց իր վայելչակազմ հասակին, իր նազելի մերկութեանը։ Նա մեքենայաբար աչք ածեց շուրջը և համոզւելով, որ օտար աչքից ազատ է, աւելի մօտեցաւ հայելուն։ Մի չարաճճի ժպիտ անցաւ նրա դէմքով. գլուխը շարժեց դէպի աջ, ձախ, շրթունքներին տւեց զանազան ձևեր, աչքերը շարժեց վեր, վար, ձախ ուսը ազատեց շապկի թևից, շէկ գանգուր մազերը անփոյթ կերպով թափեց ուսին, կրծքին, աջ ցուցամատը մօտեցրեց շրթունքներին, սեղմեց իր սպիտակ և փայլուն ատամների մէջ։ Եւ այսպէս ինքնագոհ նայում էր հայելուն՝ զմայլւելով իր արտաքինից։ «Եթէ Դաւիթս յանկարծ արթնանար ու ինձ այսպէս տեսնէր», անցաւ նրա մտքով ու քիչ մնաց, որ քրքջալով կոչէր. «Դաւիթ, Դաւիթ։»

Լուսամուտի փեղկերը աւելի պինդ շարժւեցին։ Մարգարիտն սթափւելով՝ մի ակնթարթում նետւեց ամուսնու գիրկը։ Լուսամուտը նորից շարժւեց և այս անգամ այնքան զօրեղ, որ կարծես ահագին մահակով խփեցին նրա փեղկերին։ Մարգարտի սիրտը սկսեց բաբախել, նա աւելի ամուր փաթաթւեց ամուսնուն և սկսեց համբուրել նրան։ Մեքենավարը շարժւեց, ձեռքը տարաւ ու գրկեց կնոջ իրանը. փեղկերը նորից շարժւեցին. այս անգամ մարդու ձայն էլ լսւեց։ Ո՞վ է այսպէս տարաժամ, այն էլ այսպիսի եղանակին, մտածեց Մարգարիտը, և երբ ձայնը կրկնւեց, նա հանգստացաւ.

դա երկաթուղու ծառան էր։ Բայց երկիւղը նորից պատեց նրան, նա գուշակեց, որ ծառան եկել է ամուսնուն կանչելու. ոչ, ես չեմ տայ թոյլ, վճռեց նա՝ աւելի ամուր փաթաթելով ամուսնուն։ Շրջ՛ խկ, խփւեց փեղկերին. վու-ռ-ռ, մռնչաց կատաղի քամին։ Մեքենավարը թէև սովոր աղմուկների, բայց այս անգամ ցնցւեց, մի քանի անորոշ շարժումներ արաւ, ապա աչքերը աւելի լաւ բանալով՝ զարմացած նայեց կնոջը։

—Ինչ՛ր, ինչ՛ր, շտապ-շտապ ասաց նրան կինը. ինչո՞ւ արթնացար, դու հօ սովոր ես լոկոմոտիւ (շոգեշարժի) որոտին. ապա ամուսնու գլուխը առնելով իր ափերի մէջ, համբոյրներ տալով՝ քնքշութեամբ թեքեց դէպի բարձը։— Այ, այդպէս, այժմ քնի՛ր։

—Գի՛ժ, կարողացաւ միայն արտասանել մեքենավարը. զգալով իրան անսահման երջանիկ։

Փեղկերը նորից շարժւեցին, և որոշ կերպով լսւեց. «Պարո՛ն մեխանիկ, պարո՛ն մեխանիկ»։

—Հ՛ը, ի՞նչ է, Կուզմին. կանչո՞ւմ են, հանդարտ կերպով ասաց մեքենավարը».

—Այո՛, շտապեցէք, ձեզ նշանակել են համար 4-րդ մարդատար գնացքի վրայ, լսո՞ւմ էք։

Մեքենավարը տեղից վեր ելաւ, մօտեցաւ, լուսամուտի փեղկերից մէկը յետ քաշեց, ապա դառնալով ծառային՝ հարցրեց.

—Վալկովը չի՞ եկել. չէ՞ որ նա է մարդատարի վրա։

—Զը գիտեմ, պ. մեխանիկ, ձեզ են նշանակել, հասկանում էք. շուտով հագնւեցէք, ժամանակը քիչ է. 53 վայրկեան է մնում։ Մարդատարի՛, մարդատարի՛, հասկանո՞ւմ էք։ Եղանակը սարսափելի է, տաք հագնւեցէք. ես գնում եմ, լսո՞ւմ էք։

—Դու չես գնալ. ասա, որ չես կարող, հիւանդ ես. միջամտեց կին՝ նստելով տեղի մէջ։

—Լաւ, դու գնա՛, Կուզմին. ես հագնւում եմ. պատսխանեց մեքենավարը, ապա դառնալով կնոջն՝ ասաց.

—Անկարելի է, անգինս, չէ՞ որ մարդատարի վրա են նշանակել։

—Իսկ ես չեմ ուզում. այս եղանակին ես քեզ ոչ մի տեղ չեմ թողնի, հասկանո՞ւմ ես. դու չես գնալ, եթէ գնացքը նոյնիսկ կայսէրական լինի։

—Զարմանում եմ, չէ՞ որ դու անհամբեր սպասում էիր, որ ինձ մարդատարի վրայ նշանակեն. այժմ ուրախանալու տեղը, որ վերջապէս... Հասնում ենք մեր նպատակին։ Գիտե՞ս, որքան վերստաչափ կը ստանանք. և ռոճիկս է աւելանում. մանաւանդ ամենանշանաւորը, որ դու մոռանում ես... որ, որ... չեմ ասիլ։

—Մի՛ ասիր, կարծես ես չեմ հասկանում, որ դու այժմ տանը աւելի երկար կը մնաս։ Մի՛ գնար, սիրտս վատ է. ինձ թւում է, որ դու... եթէ ինձ սիրում ես, մի՛ գնար, խնդրում եմ, աղաչում եմ, լսի՛ր ինձ...

—Ապա, տես, լաց ես լինում։ Եւ դու միշտ այդպէս ես, կարծես երեխայ լինիս, փոխանակ քաջալերելու, սիրտ տալու, օգնելու, դու տես՝ թէ ինչ ես անում, միթէ՞ չես մտածում, որ եթէ չը գնամ, պրծա՛ւ, այլևս մարդատարի երես չեմ տեսնիլ. ուրեմն ուզում ես միշտ մնամ ապրանքատաքի վրա, փթե՛մ այնտեղ։ Մի՞թէ իմ Մարգարիտը կը ցանկանա, որ իր ամուսինը ծաղրի առարկա, դառնա, նոյն իսկ իր ընկերների շրջանում։

—Ասա՝ հիւանդ եմ, չեմ կարող, վերջապէս թքի՛ր, դուրս արի, քաղցած չենք մնալ։ Եթէ ոչ, ինքդ ասա, սա ինչ կեանք է. այս բուք ու բորանին... լսի՛ր, լսի՛ր, տես՝ ինչ է կատարւում դուրսը. մի՛ գնար։

—Լաւ չեմ, գնալ, տեսնենք ո՞ւմ ինչ կ՛անենք։ Վաղը տուգանք, յանդիմանութիւն, նախատինք մի խօսքով խայտառակութիւն։ Կարող են նոյնիսկ պաշտօնից հեռացնել։ Այդպէս ես սիրում ամուսնուդ, ա՛յ։

Մարգարիտը տխրեց, չէր իմանում՝ ինչ անէր, լուռ հետևում էր ամուսնու բոլոր շարժումներին։

—Հը՛, ինչ ես լռել։

—Լաւ, գնա՛, մի կտոր հացի համար զոհիր և՛ քեզ, և՛ ընտանիքդ, յուսահատ ցաւով լսեց Մարգարտի ձայնը։

—Դու եղանակիցն ես վախենում, քի՞չ եմ այսպիսի եղանակներին գնացել ծառայութեան, դատարկ բան է. ապա որ վաղը երեկոյեան, ամբողջ գիշերը և միւս օրը մինչև ճաշը քեզ մօտ եմ, դա քի՞չ է։ Լաւ էր, որ շաբաթներով մնում էի գծի վրայ, դուրսը. մոռանում ես։ Ո՞ւր է պայուսակս, դէ մի տխրիր, եթէ ոչ՝ անհանգիստ կը լինեմ, այն ժամանակ չէ՞ որ աւելի վատ կը լինի։

—Ձեմ ուզում, մի գնար. և կինը կէս-արտասուք, կէս- ժպիտ փարեց ամուսնու վզովը սկսեց համբուրել նրան։

—Այ, այդպէս. այժմ հանգիստ սրտով կը գնամ։ Նա գրկեց կնոջը, համբուրեց նրա թաց աչքերը, գլուխը, ձեռքերը և սիրալիր ժպիտը շրթունքին՝ նայեց կնոջը, առաւ նրա ձեռքից պայուսակը, մի անգամ ևս համբուրեց, և շտապ-շտապ քայլերը ուղղեց կայարան։

Ձիւնախառն քամին խփում էր նրա երեսին. փոքրիկ լապտերը տատանւում էր կատաղի մրրկից ու հազիւ էր լուսաւորում ճանապարհը։

—Պարոն մեխանիկ, շտապիր, ժամանակը շատ քիչ է։

—Ախ, դու, Կուզմին, այստեղ ես։

—Այո, սպասում էի, երկիւղ կրեցի, որ նորից կը քնէք։ Ձեր կինը... երեխայ էլ ունիք. վաղուց է, որ ամուսնացել էք։ Էհ, ինչ է մեր կեանքը, մենք էլ կ'ասենք՝ ապրում ենք։ Շունը մեզանից լաւ է ապրում. ուր քշում են, պիտի գնաս, մարդ մի վայրկեան իրան չի պատկանում։

Բայց «պարոն մեխանիկին» իր մտածմունքներն էլ բաւական էին. նա առաջին անգամ պէտք է գնար մար-

դատար գնացքով, այն էլ կէս գիշերին ու այսպիսի եղանակով։ Կարծես զղջում էր, որ կնոջը թողեց, նրա վերջին հայեացքը չէր հեռանում իր աչքից։

—Այո, մարդս իրան չի պատկանում, կրկնեց նա ծառայի վերջին խօսքերը, ու նորից խորասուզւեց իր մտքերի մէջ։

—Այո, ի հարդէ, պ. մեխանիկ, սիրտ առած, շարունակեց ծառան.—Ծախւած ենք ամբողջովին. դուրսը բուք է, սառնամանիք է, վտանգ է սպառնում, կին, երեխայ, հայր, մայր, դատարկ բան է, թող նրանք մեռնեն, ոչընչանան, դու գնա և ժամանակիցդ մի վայրկեան չ'ուշանաս. նոյնիսկ եթէ գիտես, որ կախւելու ես, դարձեալ գնա և այդպէս միշտ։ Դեռ դուք լաւ էք, ձեր ընտանիքը շատ անգամ մոռացնում է ձեր վիշտը, ապա ես ինչ անեմ, թողել եմ երեխաներս, կինս. դուք չէ՞ք լսում, պ. մեխանիկ։

—Ինչպէս չէ, լսում եմ. դուք կին ունէք։

—Ապա, ես էլ կին ունեմ, և ուղիղ, շատ ուղիղ, որքան ձեր կնոջը նման է. երբ ես Ռուսաստանից գալիս էի, նա լացեց և ճիշտ այդպէս. երբ ձեզ տեսա, սիրտս լցւեց, ծանր վիշտ զգացի, կարծես յանցանք, ծանր յանցանք եմ գործել. վաղը խնդիր պէտք է տամ և թողնեմ ծառայութիւնս, գնամ տեսնեմ կնոջս, երեխաներիս... իսկ երբ վերադառնում, դարձեալ լաց, դարձեալ արտասուք...

Մեքենավարը չէր լսում. նրա գլխում դառնում էին անորոշ մտքեր. ոչ մի վայրկեան չը պէտք է ուշանալ. դեռ դա ոչինչ, բայց եթէ մի փորձանք պատահի... ամբողջ գնացքը իրան է յանձնւում, հարիւրաւոր մարդկանց կեանք իր ձեռին է. մի անզգոյշ քայլ, մի թեթև վերաբերմունք, և ամեն բան վերջացած է։

—Ցուրտ է, պարոն մեխանիկ, շտապենք։

—Այս, շտապենք, Կուզմին։

Կայարանում համարեա մարդ չը կար։ Նրանց դիմա-

ւորեց օբեր-կոնդուկտորը, որը հաստ, պաշտօնական վերարկուի մէջ փաթաթուած՝ կուչ էր եկել մի անկիւնում ու անհամբեր նայում էր պատից կախուած զանգակին և ժամացոյցի ալաքներին։ Վերջապէս հնչեց երրորդ զանգը. կայարանում տիրեց մի փոքր շարժում. օբերը երկար ու ձիգ փչեց իր սուլիչը, որին անմիջապէս պատասխանեց մեքենավարը ապա ուժեղ շարժումով առաջ քաշեց ռեգուլեատորի լծակը. ֆիւ-ու ու, ֆիւ-ու ֆիւ, խորը շունչ քաշեց լոկոմոտիւը և շառաչիւնով առաջ շարժուեց՝ տանելով իր յետևից մի շարք վագոններ մարդկանցով ծանրաբեռնուած։

Սև մրոտած ծխնելոյզից անընդհատ դուրս էին ցատկում գոլորշու քուլաներ, որոնք քամու հոսանքից ցրւում, կորչում էին տարածութեան մէջ։ Քամին փչում, ձիւնի հատ-հատ շերտեր էր առաջացնում և թէև լոկոմոտիւի առաջ վառւում էին երեք խոշոր լապտերներ, թոյլ չէր տալիս մեքենավարին գիծը դիտել, քիչ հեռուն տեսնել։ Եւ գնացքը փեշերը ձիւնի մէջ խրուած՝ պատռում, անցնում էր սարեր ու ձորեր, թողելով իր յետևից զոյգ սև գիծ։

Մեքենավարը նայեց ժամացոյցին։

—Մեզ մնում է դեռ էլի 5 վայրկեան, ուրեմն ուղիղ ժամանակին կը հասնենք։ Զուր քաշիր, Վարդան, դարձաւ նա օգնականին, ապա սեղմեց սուլիչի լծակը։ Լսեց և գծի պահապանների մի շարք իրար յաջորդող սուլոցներ։

—Ահա և կայարանը, ուղիղ ժամանակին. կոչեց մեքենավարը՝ վերջնականապէս փակելով ռեգուլեատորը։

Երբ գնացքը սկսեց նորից շարժուել, մեքենավարը դարձաւ իր օգնականին։

—Գիտէս, Վարդան, ամենադժուար կայարանն է. զգոյշ եղիր, նայիր միշտ առաջ։

—Այս, պ. մեխանիկ, երևի ժամանակին չենք հասնի առաջիկայ կայարանը, անպատճառ կ'ուշանանք. այլ կերպ անկարելի է, եղանակը չէք տեսնում։

—Նաւթացնդիչները (ֆորսունկա) լաւ վառիր. տես, ամբողջ ռեգուլեատորը բաց է, բայց մենք որքան դանդաղ ենք առաջ գնում։

Մեքենավարը աչքերը գծից չէր հեռացնում։ Անցել էին մօտաւորապէս 5-6 վերստ, յանկարծ նա իր ուշադրութիւնը աւելի լարեց, նայեց առաջ, աւելի հեռուն ու դառնալով օգնականին՝ ասաց.

—Նայիր քո կողմից, Վարդան, հեռւում ինչ որ բան է երևում, կարծես կարմիր լապտեր լինի.

—Անպիտան եղանակը թոյլ է տալիս, որ մարդ բան տեսնի, այո, կարծես լապտեր լինի։

—Այո, այո, նա շարժուում է...

Մեքենավարը երեք անգամ անդուսպ կոչ արաւ, պուհ-ուպու, պուհ-ուպու, պուհ-ուպու, և փակեց ռեգուլեատորը։ Գնացքը զգալի կերպով իր ընթացքը դանդաղացրեց. այժմ շատ պարզ էր. ահա պահապանի տնակը, որի առաջ քամուց պաշտպանուելով՝ կանգնած է նա իր անբաժան լապտերի, կարմիր երեսը ուղղած դէպի մեքենավարը։ Մի կարճ սուլոց ևս, և գնացքը կանգ առաւ։

—Երևի ճանապարհ չը կայ, այստեղ շատ վտանգաւոր է. մանաւանդ տուննելից անմիջապէս յետոյ սկսւում է զառիվայր. ես կարծում եմ, մեզ յետ կ'ուղարկեն, կամ կը մնանք այստեղ մինչև լուսանալը, դարձաւ մեքենավարը իր օգնականին և սկսեց մեքենան կարգի բերել, մինչև որ օբերը կարմիր լապտերի շարժառիթն իմանայ։

—Իսկ ես կարծում եմ, այստեղ գիծը ուղղակի ձիւնով կապուած, կամ սարը փուլ եկած կը լինի, պատասխանեց օգնականը՝ ուղղելով նաւթացնդիչները։

Գնացքում մեծամասնութիւնը քնած էր, իսկ արթուն եղողներն էլ մի առանձին նշանակութիւն չը տային։ Օբերը դուրս գալով առաջին կարգի վագոնի կուպէից՝ քնա-

թաթախ, փընթփընթալով մօտեցաւ պահապանի տնակին։ Մեքենավարը հետաքրքրուած՝ ցանկանում էր նրանց խօսակցութիւնից մի բան որոշել, բայց եղանակը թոյլ չէր տալիս. նա լսեց միայն օբերի վերջին բարձրաձայն արտասանած հայհոյանքները.

—«Ցիմար, քաւթառ, չի էլ ամաչում, ամբողջ գընացքը կանգնեցնում է. ես քեզ ցոյց կը տամ քո այդպիսի խաղերիդ համար, իշի գլուխ, էշ»։

—Ճանապարհ չը կա՞յ, պ. օբեր, դիմեց մեքենավարը օբերին, երբ սա վերադառնալով՝ դեռ հայհոյում էր պահապանի հասցէին։

—Ցիմար է, կատարեալ յիմար, գլխին զոռ է տալիս, ճանապարհ ի՞նչպէս չը կայ։

—Ապա ինչո՞ւ մեզ կանգնեցրեց. երևի մի բան կայ, որ խեղճ ծերուկը համարձակուեց այս քայլն անել։

—Համարձակուեց, որպէսզի վարձատրութիւն ըստանա, որ ասեն ամենաարթուն ծառայողն է գծի վրա, մի՞թէ չէք հասկանում. շուտ արէք գնացէք։

—Ուղիղ ասած, ինքս էլ երկիւղ եմ կրում. առաջներս շատ վտանգաւոր է. լսեցէք, պ. օբեր, լաւ չէ՞ր լինիլ առաջ միայնակ լոկոմատիւով գնայինք. ճանապարհը շատ թէ քիչ կը հարթի և աւելի ապահով կը լինի։

—Ի՞նչ, գնացքը թողնենք այստեղ. ի՞նչ խելօքն էք. լաւ, այսքան ճանապարհ եկանք, ի՞նչ եղաւ. շատ-շատ մի 20—30 վայրկեան ուշանանք, արժէ՞ դրա համար այդքան դալմաղալ։

—Այդ ուղիղ է, բայց խոհեմութիւնը պահանջում է գնացքը թողնել այստեղ։

—Ի՞նչ վախկան էք, պ. մեխանիկ, երևի առաջին անգամն էք մարդատարի վրա։

Այս ասելով՝ օբերը աւելի շուտ մրսելուց, քայլերն ուղղեց դէպի առաջի վագոնը, սուլիչն ատամների մէջ աւելի ամուր սեղմած՝ ամբողջ կրծքով փչեց, ձեռքերով

մի քանի շարժումներ արաւ, մտաւ վագոնը և ամուր փակեց դուռը։ Մեքենավարը միայն ուսերը շարժեց ու առանց խօսել սկսեց առաջ գնալ։

«Ոչինչ, ոչինչ չը կայ», առանց կանգ առնելու պատասխանում էր օբերը, անցնելու ժամանակ, վագոնում այն միքանի իրան անհանգստացնող ճանապարհորդներին. բայց նա կանգ առաւ միայն այն ժամանակ, երբ նոյն հարցով դիմեց նրան, առաջին կարգի կուպէում նստած՝ մի յաղթանդամ պարոն. օբերը ձեռը դրեց ճակատին և ասաց.—որ շատ ձիւն է եկել, որ գծի պահապանը պարտական էր իրան զգուշացնել, որպէսզի ինքը աչքի առաջ ունենայ և այնպէս կարգադրէ, որ իրան յանձնած գնացքը առանց վտանգի տեղ հասցնի։

—Բայց, ասացէք խնդրեմ, նորից վտանգ չի՞ սպառնում։—Ոչ, ոչ, բոլորովին. միամիտ եղէք, մենք ինչպէս կարգն է՝ կարգադրել ենք, մեքենավարին ամեն բան հասկացրել ենք, այնպէս որ դուք կարող էք հանգստանալ, ինչպէս ձեր սիրտը կը ցանկանա։

—Մեքենավարը երևի փորձած է։

—Դէ, մենք ուրիշ ինչ գործ ունենք, 18 տարի է, այս գծի վրայ ծառայում ենք, ահագին փորձառութիւնից զատ՝ գծի իւրաքանչիւր շպալը մեզ յայտնի է։

—Շնորհակալ եմ, փոքր ինչ կամենում եմ քնել։

—Հանդիստացէք ձերդ գերազանցութիւն, խոնարհ գլուխ իջեցնելով՝ անցաւ և ինքն էլ փակուեց հետևեալ կուպէում։

Այդ միջոցին լոկոմոտիւի վրա աշխատանքը եռում էր։ Մեքենավարը լարած ուշադրութեամբ նայում էր առաջ՝ գծին, իսկ ձեռքերը մեքենայաբար կատարում էին պէտք եղածը։ Օգնականը միևնոյն ժամանակ ամբողջապէս լսողութիւն էր դարձել. մեքենավարի բոլոր հրամանները նա կատարում էր ամենայն ճշտութեամբ, նաւթացնդիչ-դիշները ուղղում էր, գլանակները իւղում ջուր էր

լցնում կաթսան, նայում էր առաջ, կարծես երկուսն էլ զգում էին մի ինչ-որ անխուսափելի դժբախտութիւն։

—Վարդան, լաւ նայիր, բան չեմ տեսնում գծի վրայ։

—Ո՛չ, պարոն մեխանիկ, իմ կողմս ազատ է։

—Այս կոկմն էլ լաւ է, տեսնենք, այս առաջի կիրճն էլ որ անցնենք, ապահով ենք։

Քամին միևնոյն ժամանակ կարծես կռիւ էր մտել, աւելի ու աւելի էր կատաղում, շառաչիւնով փչում ու երկինք էր հասցնում ձիւնի վիթխարի սիւնեակներ, պտտում, ոլորում էր իբրև մի ահռելի ալիք, ապա խորտակելով՝ ահագին ուժով թափում էր ներքև, թաղելով իր տակ ամբողջ գնացքը։ «Ոչինչ չեմ տեսնում», բացականչում էր մեքենավարը յուսահատ կերպով, և անգիտակցաբար նրա ձեռքը ծանրանում էր սուլիչի լծակին՝ բուռ, ճչում էր սուլիչը, վը՛շ, ոռնում էր քամին ու միախառնելով՝ գընում, անհետանում էին մութ տարածութեան մէջ։ Ահա բարձրացան սարը, անցան փոքրիկ կամուրջը, այժմ նրանց առաջ գառիվայր է. և մի 5 վերստից յետոյ առաջիկայ կայարանը, ուր մեքենավարը վճռել էր սպասել, մինչև ետզանակը հան դարտի։ Իսկ այդ ահռելի ձորում քամին աւելի էր կատաղել, կարծես իր վերջին ճիգն էր գործ դնում, որ գնացքը ջարդուփշուր անի։

Յանկարծ մեքենավար մի զարուհրելի թռիչք գործեց տեղից, կարծես թռնաւոր օձ կպաւ նրա կրծքից, սուլիչի լծակն ու վեստինհաուզի անիւարգելը մի ակնթարթում շարժուեցին։

—Վարդան, կրակը, դուռաց նա շնչասպառ։

Փշ՛շաց ու մռնչաց լոկոմոտիւը և ցնցեց ամբողջ գնացքը։

Վայրկեանը սարսափելի էր։

—Թռիր ազատիր քեզ, դուռաց նա օգնականին, երբ սա ահուդողով հանգցնում էր կրակը. միևնոյն միտքը անցաւ և իր գլխում... կեանքի և մահուան այդ պայքարում կնոջ վերջին հայեացքը չէր հեռանում նրա աչքից. «Թռիր,

թռիր, ազատիր քեզ». կարծես լսում էր կնոջ աղերսանքը... «Հայրիկ ջան, հայրիկ ջան, թռիր, դու կը մեռնես». գնացքի հետ վազում էր իր Լևոնիկը։ Միևնոյն ժամանակ նրա առաջ պատկերանում էին զարհուրելի տեսարաններ, խորտակուած գնացքը, վագոնների փլատակների տակ հարիւրաւոր այլանդակուած դիակներ, կին, երեխայ, նրանց արիւնաշաղախ ու ճխլուած դէմքերը... նորից իր երեխան, կինը, նրանց հայեացքը...—Ո՛չ, գոռաց նա...

Ապա մի վճռական շարժումով յետ մղեց լոկոմոտիւ։ Լսուեց մի սոսկալի շառաչիւն. լոկոմոտիւը դողաց, տատանուեց ու մի շարք ահռելի հարուածների տակ անյայտացաւ ձիւնի զանգուածի մէջ։

Գոռում-գոչիւն, լաց, աղաղակ տիրել էր գուրսը՝ խաւարի մէջ։ Մարդիկ, կանայք, երեխաներ դուրս էին եկել, ով ինչպէս կարողացել էր, խառնուել էին իրար, գլուխները կորցրած՝ մէկը «վայ կուս» էր ճչում, միւսը դեռ փլատակների տակ օգնութիւն էր կանչում, որը գլուխն էր երկու ձեռքով բռնել, որի քթիցն ու բերանիցն էր արիւն հոսում, մէկը հայհոյում էր, միւսը աղօթում էր, ոմանք կիսախելագար դրութեան մէջ իրանց մազերն էին փետում, վայրենի ճիչ ու աղաղակ էին բարձրացնում։ Այս բոլորի հետ և՛ կատաղի մրրիկը, և՛ անթափանց խաւարը... տեսարանը սոսկալի էր։

Լուսացաւ։ Մրրիկը կամաց-կամաց հանդարտուեց. նա իր գործը արդէն կատարել էր։ Ծագեց արեգակը և լուսաւորեց խորտակուած գնացքը։ Լոկոմոտիւը շրջուած ու կիսով չափ խրուած էր ձիւնի մէջ, վագոնը ջարդուած էր. զգալի վնասուած էին և հետևեալ երեք վագոնները, բայց վերջին 4 վագոնները համարեա մնացել էին անվնաս. սպասնուած էին՝ մեքենավարը, իր օգնականը և բագաժի կոնդուկտորը. վիրաւորուած էին 14 հոգի։ Աղմուկը հանդարտուել էր, այժմ մարդիկ իրանց իրերն էին հաւաքում, ոմանք էլ մինչև անգամ սկսեցին տեղերի մասին վիճել։

Առաջին արտակարգ գնացքը եկել էր արդէն, բերելով 100-ից աւելի բանտարներ, որոնք արիաբար աշխատում էին գծի վրա։ Ահա եկաւ և երկրորդ գնացքը, այստեղ հաւաքուել էին ժանդարմներ, ինժեներներ, կառավարիչներ, պրոկուրորը, երկաթուղու բժիշկը, ֆելդշերներ և մի խումբ կողմնակի մարդիկ։

—Պարոններ, հարկաւոր է կազմել արձանագրութիւն, համեցէք, դիմեց ժանդարմների մեծը իր ուղեկիցներին՝ հանելով թևի ծալքից պատրաստի տպած թղթեր. մօտեցան գնացքին. ապա ժանդարմը դառնալով օբերին՝ հարցրեց անունը, ազգանունը, հօրանունը, խորտակման բոլէն, գնացքի բոլոր վագոնների համարները, լոկոմոտիւի համարը, մեքենավարի և օգնականի անունները հայն և այլն։ Մօտեցան լոկոմոտիւին ու սկսեցին նկարագրել նրա դիրքը, լծակների դրութիւնը խցանների բացման չափը, ուղղութիւնը, արձանագրեցին գծի տարածութիւնը, վերստաչափը, վագոնների դիրքը, գծի դրութիւնը. ապա դառնալով սալոն վագոնը՝ ներսում սկսեցին տաք վիճաբանութիւններ։

Դուրսը, գծի մօտ էլ հաւաքուել ու նոյնպէս վիճում էին երկաթուղու այն ծառայողները, որոնք այս դէպքի հետ շատ թէ քիչ առնչութիւն ունէին։

—Եղբայր, սա կատարեալ խայտառակութիւն է. միթէ մարդատար գնացքը կարելի է հաւատալ ամեն մի պատահական երեխայ լակոտի։ Ես նրան ասում եմ, կամաց գնա, եղանակը վատ է. նա փոխանակ լսելու՝ ուղղակի հայհոյում է...

—Քսան ու մէկ տարի ծառայում եմ, օբերի խօսքը կտրելով սկսեց գծի վարպետը. ո՞վ էր տեսել առաջուայ ժամանակ այդպիսի երեխաներին մարդատարի վրա։ Մինչև մեքենավարը չը սպիտակէր, մինչև 20-25 տարի ապրանքատարի վրայ չը փորձէր, ո՞վ կը տար նրան մարդատարը. իսկ այժմ մեզ պէս փորձած մարդկանց դուրս են

վռնդում ու ասպարէզը այդպիսիներին են տալիս։ Երեք տեղ կարմիր լապտեր ցոյց տամ, ինքս անձամբ այդ մրրկին ներկայ լինեմ, և այսպիսի դէպք, քնած էր, ինչ էր։

—Գծի վարպետ Միխայլով, համեցէք. յանկարծ լսուեց սալոն-վագոնի դռների միջից ժանդարմի ձայնը։

Գծի վարպետը ցնցուեց. իսկոյն գլխարկը հանեց, նայեց իր շուրջը, ապա դողդողալով՝ բարձրացաւ վագոն։

Սկզբնական հարցուփորձից յետոյ դիմեց նրան ժանդարմների մեծը.

—Ո՞րտեղ էիք դուք այս գիշեր։

—Ես, ձերդ գերազանցութիւն, կարմիր լապտերը ձեռքիս՝ կանգնած էի 165-րդ վերստի վրայ, որպէսզի գնացքը ազատեմ վտանգից, բայց մեքենավարը քնած էր, նա ինձ և իմ կարմիր լապտերը ուշ նկատեց. դեռ լաւ է որ նկատեց, եթէ ոչ ամբողջ գնացքը ձորն ընկած, բոլորովին խորտակուած կը լինէր, ձեռքը ճակատից չը հեռացնելով պատասխանեց վարպետը։

—Ինչո՞ւ դուք 163 և 164-րդ վերստերի վրայ նշաններ չէք դրել։

—Ինչպէս չէ, ես զգուշացրել էի, ձերդ գերազանցութիւն, բայց մեքենավարը՝ ախր ասացի, որ քնած էր, չը նկատեց։

—Ձեր ասածները ինչով կը հաստատէք։ Վկաներ ունէք։ Դիմեց նրան պրոկուրորը։

—Այս, ունեմ, ձերդ պայծառափայլութիւն։

—Որո՞նք են։

—Իմ վկաներս օբեր-կոնդուկտորն է իմ օգնականը և 164 ու 165 վերստերի պահապանները։

—Ասացէք խնդրեմ, ինչո՞ւ մեզ ժամանակին հեռագրով չը նախազգուշացրիք, հարցրեց մասնաժողովի անդամ, երիտասարդ ինժեներ, դէպքի կառավարիչը։

—Որովհետև, ձերդ գերազանցութիւն, սարի փուլ գալը ուղիղ ժասի 2-ին պատահեց, մինչև ամեն բան կար-

գաղրեցի և ուզում էի գալ կայարան, այս դժբախտութիւնը պատահեց։

—Իսկ ժամի 2-ին դուք ինչ էիք անում գծի վրայ, նկատեց պրոկուրորը։

—Այսպիսի մրրիկ գիշերներին ձեր խոնարհ ծառան երբէք տանը չի նստում. մենք փորձուած ենք, 22 տարի այս գծի վրայ ծառայում ենք, ձերդ պայծառափայլութիւնը։

—Այո, ճիշտ է, սա ինձ մօտ հին և շատ հաւատարիմ ծառայող է. ինքնագոհ կերպով հաստատեց տեղի կառավարիչը՝ շփելով իր արդէն սպիտակ բեղերն ու միրուքը։

—Ստորագրեցէք և կարող էք գնալ, ասաց նրան ժանդարմների մեծը։

Վարպետը առանձին բաւականութեամբ առանց շտապելու ստորագրեց անուն, հայրանուն, ազգանուն և խորը գլուխ տալով հեռացաւ։

—Աւելի եռանդի բերելու համար, իմ կարծիքով, այսպիսի ծառայողներին հարկաւոր է ներկայացնել առանձին վարձատրութեան. ինչ էք ասում, պարոններ, դիմեց տեղի կառավարիչը վարպետի հեռանալուց անմիջապէս յետոյ։

—Այո... Այո... Անշուշտ... Ես կարծում եմ... Անպատճառ... ամեն մէկը իր հերթին հաւանութիւն տուաւ այդ մտքին։

—Հ՞ը, ինչպէս անցաւ, Իւան Պետրովիչ, դարձան վարպետին դրսի ծառայողները, որոնք անհամբեր ըսպասում էին իրանց հերթին։

Բոլորը գցեցի մեքենավարի վրին, թող գնան այժմ նրան գըզգըզեն։

—Ի հարկէ, աչք ու յօնքով նշաններ անելով՝ ասաց օբերը։ Նա արդէն մեռել է, նրան ոչինչ չեն անիլ, իսկ եթէ մենք մատնենք... այս ասելով նա առանձնացաւ վարպետի հետ և սկսեց ցածր ձայնով և խորհրդաւոր նշաններով ինչ-որ ասել նրան։ Այդ միջոցին լսեց ժանդարմի կոչը՝ «օբեր-կոնդուկտոր Կիրակոզով»։

—Դուք ինչ կարող էք ասել այդ դէպքի մասին, դիմեց նրան ժանդարմների մեծը։

—Ես... ձեռը ճակատից չը հեռացնելով՝ սկսեց օբերը—զգում էի, որ այսպիսի դէպք պիտի պատահէր, որովհետև մեքենավարը շատ անփորձ էր. որտեղ հարկաւոր էր արագ գնալ, նա դանդաղ էր գնում և ընդհակառակը. երբ 161 վերստի վրա նա թափառած գնում էր, ես մինչև անգամ զանգահարեցի, կանգնեցրի գնացքը, և զգուշացրի նրան, ասացի՝ եղբայր, կամաց գնա, թող մի ժամում 25-30 վերստ կարի. բայց նա լսում էր։ Նա ուզում էր աչքի ընկնել, չէ՞ որ առաջին անգամն էր նշանակուած մարդատարի վրա։

Այդ միջոցին բոլոր նայեցին ջահիլ ինժեներին։ Սա հազաց, կրմկրմաց, բայց հարկաւոր էր խօսել։

—Այո՛, առաջին անգամն էր, բայց նա աչքի ընկնող և շատ բարեխիղճ մարդ էր, հէնց նրա բարեխղճութիւնը նրանից է երևում, որ մարդը մինչև վերջին շունչը մաքառել է. մի՞թէ չէր կարող թռչել և այդպիսով իրան ազատել. իսկ թէ ինչ կը պատահէր այն ժամանակ գնացքի հետ, դա պարզէ։

Շարունակեցէք, շարունակեցէք։

Նա դեռ շատ երիտասարդ էր, մարդատար գնացքը նրան չէր կարելի հաւատալ, շարունակեց օբերը։

—Դուք վկաներ ունի՞ք, որ մեքենավարին զգուշացրել էք, հարցրեց պրոկուրորը։

—Այո, ձերդ պայծառափայլութիւն, բացի իմ ընկեր կոնդուկտորներից, դա կը վկայէ և իշխան Ֆոն-Շիլլինգը. նա ինքն առաջին կարգի կուպէում նստած էր, երբ ես գնացքը կանգնեցրի։

—Այո՛, այո՛, ճիշտ նա այս գնացքումն էր, նկատեցին մի քանիները։

—Ես կարծում եմ, բաւական է. դարձաւ ժանդարմը

իր ընկերակիցներին, ապա կարդալով օբերի ցուցմունքները՝ առաջարկեց ստորագրել։

—Ներէցէք, պարոն ժանդարմ, մի հարց ևս, դիմեց պրոկուրորը։

—Խնդրեմ, ասաց նրան ժանդարմների մեծը։

Օբերը նորից ձեռքը բարձրացրեց ճակատին։

—Ասացէք խնդրեմ, պ. օբեր, գծի վարպետը ինչո՞ւ այդքան ուշ եկաւ, մի՞թէ չէր կարելի նրան իսկոյն կանչել։

—Գծի վարպետը-ը՞ը՞... Այո՛. գծի վարպետը, այո՛, այո՛, նա այստեղ էր, ձերդ պայծառափայլութիւն։

—Այժմ կարող էք, ես ոչինչ չ՚ունեմ հարցնելու, ասաց պրոկուրորը։

Եւ այսպէս. ամեն մէկը իր հերթին, նախ իր գլուխն էր գովում, ապա մի բերան արած՝ բոլոր մեղադրանքը թափում էին խեղճ մեքենավարի գլխին։

Երբ արձանագրութիւնը վերջացաւ, ժանդարմի մեծը սկըսեց կարդալ, որպէսզի ներկայ եղողները ստորագրեն և հաստատեն։ «Իվերջոյ, շարունակեց նա, այս բոլորից ներկայ մասնաժողովը եզրակացնում է, որ գնացքի խորտակման պատճառը եղել է այժմ հանգուցեալ մեքենավար Դաւիթ Յարութիւնեանը. ա) որ գնացքը ընթանալիս է եղել շատ արագ, այն ինչ նա պէտք է գնար ժամը ոչ աւելի քան 35—40 վերստ, բ) որ նա քնած է եղել, կարմիր լապտերը չի նկատել, կամ եթէ նկատել է, շատ ուշ և գ) որ լոկոմոտիւը յետ է մղել, որից և առաջացել է գնացքի խորտակումը։

Արձանագրութիւնը ստորագրելուց յետոյ խորհուրդը դուրս եկաւ սալոն-վագոնի պատշգամբը, ուր խօսակցութիւնը իսկոյն անցաւ մասնաւոր առարկաների։

Գնացքի շուրջը տիրում էր աղմուկ. մշակներ, վերակացուներ, վարպետներ խառնուել էին իրար, ամեն մէկը մի բան էր ասում, ամեն ամեն մէկը իր գիտեցածն էր անում։ Մօտակայ կայարանից գալիս էին նորանոր գնացքներ. որը մշակներ էր բերում, որը գործիքներ ու վարպետներ, այս ինչ կամ այն ինչ կառավարիչն էր գալիս։ Սալոն-վագոնի պատշգամբը քանի գնում՝ լցւում էր պաշտօնական մարդկանցով. նրանք վիճում, խօսում, ասում՝ ամեն մէկը իր կարծիքն էր պնդում, ամեն մէկը իր գիտեցածն էր գոռում, ու ինչ-որ թունդ վիճաբանութեան մէջ էին ընկել։

Մինչ այդ՝ դուրսը աշխատող բազմութեան մէջ իրարանցում էր ընկել։ «Գնա՛, ներկայացիր», ասում էին ոմանք մի դունատ և դալկացած կնոջ, հաւաքւում էին նրա շուրջը, մխիթարական խօսքեր էին ասում, ամեն կերպ ուզում էին կարեկցութիւն ցոյց տալ նրան։ Բայց ջահիլ կինը կարծես ոչինչ չէր տեսնում, չէր լսում. ամուր բռնած իր վեցամեայ երեխայի ձեռքից՝ այս ու այն կողմն էր դառնում, անհանգիստ և ուշակորոյս մէկին որոնում էր, բայց ո՞ւմ... ինքն էլ չը գիտէր։

Մարդարիտն էր...

Նա ուշագնաց ընկած էր, երբ ամուսնու դիակը դըրին ապրանքատար վագոնում և տարան։ Երբ ուշքի եկաւ նա, զարմացած նայեց իր շուրջը։

«Մայրիկ ջա՛ր, մայրիկ», մղկըտալի և սիրտ կտրատող ձայնով գոչում էր երեխան։

—Հանգստացէք, հանգստացէք, ոչինչ չը կայ, այս ու այն կողմից արտասանում էին մխիթարական խօսքեր։

Նա ամբողջ մարմնով դողում էր, ատամները զարկւում էին իրար, աչքերի տակ կապտել, բիբերը լայնացել ու խորն էին ընկել բնի մէջ, երեսը գեղնել էր, իսկ հայեացքը յուսահատ ու վշտալի։ Նա ամուր բռնել էր երեխայի ձեռքը, երբեմն ջղաձգական ցնցումով քաշում էր դէպի իրան, երկար նայում էր նրան, յանկարծ ճըչալով հրում էր իր-ից ու նորից, երբ լսում էր երեխայի աղեկտուր ձայնը, վրա էր ընկնում խելագարի նման կըր-

կին ամուր բռնում էր ձեռքից ու քաշում էր դեպի իրան։

Իզուր է անցնում բժշկի թախանձանքը. նա չի կարողանում հասկացնել հիւանդին, որ բարձրանա վագոնը ու հանգստանա այնտեղ։

—Գոնէ դեղը խմացնենք, յուսահատած կերպով դառնում է բժիշկը ֆելդշերներին։ Բայց իզուր։ Երբ բաժակով հեղուկը մօտեցրին կնոջ շրթունքներին, նա կատաղաբար առաւ և դողացող առամների մէջ ջարդեց բաժակը։ Շրթունքներից հոսող արիւնը խառնուելով բերանից թափւող հեղուկի հետ՝ ներկեց նրա կիսամերկ և թաց կուրծքը։ Բժիշկը սիրալիր համոզելուց յոյսը կտրած՝ հրամայեց ֆելդշերներին ոսկրեայ ամսնով ուժով խմացնել նրան։ Երբ սրանք մօտենալով կնոջը՝ բռնեցին ձեռքերը, նա ճչաց և սկսեց աւելի սաստիկ դողացնել. երբ սկսեցին նրա բերանը ուժով բաց անել, յանկարծ նա մի վայրենի ճիչ արձակեց, ապա անդուսդ կերպով քրքջաց։ Եւ այդ քրքիջը դուրս էր գալիս նրա կրծքից ինչպէս ահեղ վշտի ու սոսկալի ցաւի մի հեղեղ։

—Թողէք հանգստանա, հրամայեց բժիշկը. ֆելդշերները կանգ առան։

—Հանգստացէք, ի սէր Աստուծոյ, տիկին, ինչ պատահեց ձեզ. հաւատացէք ինձ, ձեր ամուսին Դաւիթը բոլորովին չի վնասուել։

—Դաւիթ, գոչեց կինը։

—Հայրիկ, հայրիկ ջան, ձայնակցեց երեխան ազիողորմ կերպով։

—Դաւիթ, Դաւիթ, կրկնեց մայրը նայելով իր շուրջը. ձեռները սարսափով առաջ տարածած՝ ասես մի վտանգից պաշտպանուելու համար. աչքերը լայն բացած, արտասանում է նա կծկտուր հարաչանքով լի. խօսքեր։ Ահռելի գետ է վազում... սառուց է, բարձրանում է... բարձրանում է... ինչ հսկայական սիւն է... ահագին սար է... ո՛ւռ՛ւ... մեծացաւ... մեծացաւ... նա մրսում է... ցուրտ է... քամին փչում... Դաւիթ գնացքը գալիս է... հեռո՛ւ... հեռո՛ւ... կարմիր լապտերը... հեռո՛ւ, սարը փուլ է գալիս... կորաւ, կորաւ... Վարդան, Դաւիթն... Ապա երեխային քաշում է դեպի իրան և ճչալով վազում է դեպի ձորը։ Նրան բռնում են։ Բժիշկը շարժում է գլուխը, «խելագարութեան նշաններ են», մտածում է նա։

Երբ նորից ոսկրեայ ամանով դեղը մօտեցրին կնոջը, այս անգամ սա առանց ընդդիմանալու դադարեց մինչև յատակը և թոյլ տուեց վերարկուով ծածկել իրան։ Դեղի զորութիւնից էր, թէ մարմնի յոգնածութիւնից, նա ընկաւ անորոշ թմրութեան մէջ. ծնկները ծալւում էին, գլուխը պտտւում էր, նա այլևս չը կարողացաւ կանգնել, ընկաւ տեղն ուտեղը մի կոյտ շալակների վրայ։—Դա լաւ է, թող քնի ասաց բժիշկը և հրամայեց ծածկել նրան մի այլ վերարկուով ևս. ապա դառնալով երեխային՝ ասաց.—դու էլ, փոքրիկ, այ այստեղ մօրդ մօտ պառկիր ու քնիր։ Երեխան տեղաւորուեց մօր գրկում, իր փոքրիկ թևով փարեց մօր վզով ու անմիջապէս քնեց։ Բայց մայրը անհանգիստ էր, նա դառնացում էր, ջղացգաբար ցնցւում. երբեմն ծանր ոտք էր քաշում, շարժում էր ձեռները, ոտները, ուզում էր վեր թռչել, բայց չէր կարողանում. գլուխը ծանրացել, կարծես արճիճ էր լցել նրա մէջ. այդ բոլորը նա զգում էր, ուզում էր աչքերը բաց անել, բայց նրանք մի աւելի ուժեղ ձեռքով փակւում էին. նորից ճիգ էր անում արթնանալու, բայց իզուր, ընկնում էր թմրութեան և անյայտութեան աշխարհի մէջ։ Եւ այսպէս նա երկար տանջւում էր, մինչև որ նրան արթնացրեց մօտեցող լոկոմոտիւի սուլիչը։

—Այժմ դուք լաւ էք զգում ձեզ, դիմեց նրան բժիշկը։

—Ես, ո՞ւմ եմ սպանել...

—Ո՞ւր է ձեր երեխան։

—Սարը ահռելի է... իսկ մարդիկ... բռ՜ռ՜... նա վազում է... չէք տեսնում։

—Փոքրիկ, փոքրիկ, վերկաց մայրիկդ կանչում է։

Երբ երեխան աչքերը տրորելով ու զարմացած նայում էր իր շուրջը, բժիշկը դիմեց կնոջը՝ ասելով.

—Սա ձեր երեխան չէ.

—Իմն է, ճչաց նա և ագահաբար վրայ վթռչելով՝ բռնեց երեխայի ձեռքը և քաշեց դեպի իրան։

«Դեռ յոյս կայ», մտածեց բժիշկը. ապա դառնալով տիկնոջը՝ ասաց.

—Գիտէք, ձեր ամուսինը, Դաւիթը, կենդանի է, հասկանում էք, նրա միայն ոտն է փոքր ինչ վնասուել։ Այո, ճիշտ եմ ասում, ձեր ամուսինը, Դաւիթը...

—Դաւիթ Դաւիթ... ճչալով նա ցատկեց դեպի մշակները. մոլորուած վազում էր, որոնում էր, ուզում էր մօտենալ լոկոմոտիւին։ Մշակները բռնեցին նրան։

—Սպասիր, Դաւիթը այնտեղ չէ, լսեցէք, ձեզ ասում են՝գնացէք, դիմեցէք. ցոյց տալով պատշգամբի կողմը՝ պնդում էին մշակները։ Յետոյ ուշ կը լինի, թշուառ կին, ամուսնուդ կորցրիր, գոնէ ապրուստի միջոց տան։

—Ամուսինս, երբ նա առաւօտը դուրս եկաւ, ցուրտ էր... փոթորիկ էր...

Ինչ-որ կարծես մտաբերում էր. նա կանգ առաւ, աչքերը յառեց հեռուից մօտեցող լոկոմոտիւին ու ընկաւ խորը մտածմունքների մէջ։ Մի վայրկեան նրա դէմքի թախիծն անցնում էր, աչքերը այլևս խելագարի նման չէին նայում, ոչոքից նա չէր վախենում, մինչև անգամ ժպտաց։ Երեխան, որ միշտ նայում էր մօրը, ուրախութիւնից փաթաթուեց մօր փեշերին ու ժպտալով ասաց. «մայրիկ ջան»։

«Դաւիթը կենդանի է». մութ մառախուղի պէս մի բան անցաւ նրա գլխում՝ շոյելով նրա քնքոյշ զգացմունքները, բայց դա երկար չը տևեց, նորից նրա գլխում տիրեց մի ժխոր, զարուրելի մտքեր անզուսպ ալիքների նման ալեկոծեցին նրա տանջուած ու խորտակուած սիրտը, ցնցուեց, դողաց նա ամբողջ մարմնով, մի ճիչ, մի աղեկտուր ու սոսկալի ճիչ դուրս թռաւ նրան նշուած կրծքից. «Դաւիթ, Դաւիթ», կոչեց նա, ապա ամուր բռնելով երեխայի ձեռքը՝ մի վճռական թռիչքով գցեց իրան մօտեցող լոկոմոտիւի առաջ...

Իզուր գոռաց մեքենավարը, իզուր դողաց ու մռնչաց մեքենան, արդէն ուշ էր, նրանք իրանց դերը կատարել էին...

ԿԱՊՈՅՏ ՇԱՊԻԿԸ

—Տանը բոլոր հանգիստ քնած էին, բացի ծերունի Բեսօից, որը խորասուզված սառը մառածմունքների մէջ՝ անհանգիստ անց ու դարձ էր անում իր նեղլիկ սենեակում: Նա շուտ-շուտ կանգնում էր պատուհանի առաջ և իր պղտոր հայեացքը գցում հեռուն, լայն ու մեծ քաղաքի ամենախուլ անկիւնին, որ մշուշապատ խաւարի մէջ դեռ նշմարւում էին աղօտ լոյսի ցոլքեր: Եւ երբ այդ լոյսերն էլ մարեցին, ծերունու սիրտը աւելի անհանգիստ սկսեց բաբախել: Դրսի ամեն մի թեթև շշուկին վեր էր թռչում, գնում էր ճրռճրռեցնելով բաց էր անում պարսպի մեծ դուռը, բայց Դաթօն չկար ու չկար: Նա յուսահատ դառնում էր տուն և նորից սիրտն ամրացնելով սպասում: Ահա շունը հաչեց. նա արագութեամբ վազեց դուրս, բայց իզուր. խաբուած էր. շան վրա բարկացած տուն է մտնում:

—Էյ, պառաւ, դու ինչ ես այդպէս խռմփում, լուսացաւ ախր, Դաթօն չի եկել:

Պառաւը չի պատասխանում, որով ծերունու միտքը աւելի է պղտորւում:

—Պառաւ, նորից դառնում է նա կնոջը.—այսօր ճաշին Դաթօն տուն եկաւ:

—Խելքդ կորցրել ես, այ մարդ, միասին չճաշեցինք:

—Է՛, դու ինչ ես հասկանում:

Մի պահ չանցած, նա նորից դիմում է կնոջը:

—Լսիր կապոյտ շապիկը հագաւ նա այսօր:

Բայց առանց կնոջից պատասխան սպասելու, նստեց

աթոռին, գլուխը առաւ ափերի մէջ, արմունկներով յենուեց սեղանին. խորասուզուեց մտածմունքների մէջ: Կինը որ արդէն քունը կորցրել էր և ինչ որ ժխորի մէջ էր զգում իրան, գլուխը կամաց բարձրացրեց և նայեց ամուսնուն:

Մարդու դէմքը արձանացած էր, աչքերը լայն ու ապշած:

—Բեսօ, ցաւդ տանեմ, ինչու չես քնում, ես բաց կանեմ դուռը, հէնց որ Դաթօն դայ, մի փոքր քնիր:

Բեսօն սթափուեց. կնոջ սիրալիր վերաբերմունք մեղմացրեց նրան:

—Մեր տղան ջահել է, կին, դեռ շատ ջահել, իսկ ժամանակը դէշ, դու ոչինչ չես հասկանում:

Պառաւը լռեց, երկուսն էլ չքնեցին. երկուսն էլ թէև անհանգիստ էին, բայց աշխատում էին միմեանց սիրտ տալ: Մինչ այդ խաւարը փարատուում էր, դուրսը աքաղաղները եռանդով կանչում էին:

—Դժուար թէ էլ Դաթօն դայ,—խօսեց Բեսօն նայելով լուսանցքին:

Բայց նոյն վայրկեանին թեթև շշուկ լսեց, դուռը կամացուկ բաղխում էին:

—Դաթօն է, միաձայն կոչեցին նրանք և շտապ բացին դուռը: Պառաւների ուրախութիւնը անչափ էր:

—Ցաւդ տանեմ, Դաթօ.—շուտ-շուտ կրկնում էր մայրը:

—Դեռ ջահել ես, որդի չկարծես՝ հայրդ չի հասկանում, նա ամեն բան գիտի, մազերն սպիտակել են, և ինչեր չի տեսել այս իմ տանջված գլուխը:

—Հայրդ, Դաթօ ջան, ինձ այնպէս վախեցրեց. ասում է՝ այնտեղից տանում են բանտ, տէրը ով է, կախում են, ճանապարհին գնդակահար են անում, ասում է, թէ նա իմ տղան է, ես գիտեմ, հանգիստ չի մնալ: Ցաւդ տանեմ, Դաթօ, ճի՞շտ է ասում հայրդ:

—Յիմար-յիմար մի խօսի. մի բան բեր թող ուտի, չես տեսնում՝ յոգնած է, հանգստանալ է հարկաւոր։

Դաւիթ մտազբաղ էր. մօր փաղաքշանքներ, հօր թափանցող աչքերը նրա վրայ ոչ մի ազդեցութիւն չարին։ Նա բան չկերաւ, շորը զգուշութեամբ հանեց, ծալեց, և դրեց գլխի տակ. բարձերը գցեց, նայեց հօրը, ապա վերմակը քաշեց մինչև գլուխը։

—Մի բան էլ ծածկեմ,—գոռալով հարցրեց մայրը։

—Հարկաւոր չէ, ժամի եօթին արթնացրու։

—Վաղը ոօն է, Դաթո։

—Գիտեմ, հայրիկ, ես առաւօտեան գործ ունեմ։ Մարգոն չի՞ եկել, աւելի անտանելի հարցրեց նա։

—Մինչև կէս գիշեր սպասում էր խեղճը։

—Էհ... արաւ Դաթօն և աւելի կծկուեց տեղում։

Երկու պառաւները փսփսալով խօսում էին. մի բան նրանց սաստիկ զարմացնում էր։

Դաթօն ոչ մի անգամ հագուստը այդքան խնամքով հանած և գլխի տակը պահած չկար։ Այդ կէսը հայրը չէր կարող ի նկատի չառնել, բայց մայրը ամեն կերպ աշխատում էր համոզել, թէ դա այնպէս պատահական է։

Լուսացաւ. հեշտաւորը սովորականի նման ներս բերուեց։ Դաթօի քոյր Թամարան թէյ էր պատրաստում և շուտշուտ նայում ժամացոյցին։

—Մայրիկ, ժամի եօթն է, ասաց նա։

—Թող քիչ էլ քնի, ուշ եկաւ երեխաս։

Բայց Դաթօն մօրը զրկեց իր այդ մեծ բաւականութիւնից. տեղից վեր թռաւ. գլխի տակից խնամքով հանեց շորերը, դրեց առաջը. սկսեց որոնել գրպաններում մի ինչ որ բան, ապա դառնալով քրոջը ասաց.

—Թամարա, նոր գնած հագուստս բեր։

Մայրը և քոյրը ուրախացած մօտեցան նրան։

—Դու այսօր կապոյտ շապիկդ չե՞ս հագնելու։

—Ո՛չ։

—Ա՜, վերջապէս.—բացականչեց մայրը։—միշտ ասում էի, որդի, թող այդ անիծած կապոյտ շապիկները։ Ես բոլորը աղքատներին պիտի տամ։

—Տուր, մայրիկ. ով գիտէ, ես կարելի է էլ չեմ հագնի։

—Ճի՞շտ. ուրախացած կոչեցին քոյր ու մայրը։ Այն ինչ հայրը լուռ էր, նա իր սուր դիտող հայեացքով գննում էր որդուն և ինչ որ լաւ բան չէր գուշակում դրանից։

Մայր ու աղջիկ գուգեցին ոտային. օղլայած շապիկը կարմիր փողպատով և մուգ շակոնակագոյն պինջակը, որ ամուր գրկում էր նրա իրանը, նրան աւելի գեղեցկացրին։ Կուրծքը դուրս ընկաւ և լայն թիկունքը աւելի շեշտուեց։ Երկար սև մազերը թափուած էր ճակատին. կրակոտ աչքերը սպասողական, անհանգիստ մի ինչ որ տենդային բան ունէին իրարց մէջ։

—Ա՜, ցաւդ տանեմ, Դաթո. բացականչում էր քոյրը հիացած։

—Գիժօն որ տեսնի հօ կը խելագարուի, խօսեց մայրը երջանիկ ժպիտը երեսին։

—Դու էլ քիչ է մնում, որ խելագարուես, պառաւ. մի ոգևորուիլ այդպէս, լաւ կանես, որ մեզ միայնակ թողնես, ես Դաթօի հետ առանձին գործ ունեմ։

—Բեսո, ինչ կըլինի, որ մենք էլ իմանանք։

Բեսօն պատասխանի տեղ, իր խորհրդաւոր նայուածքով կնոջը և աղջկանը հասկացրեց, որ նրանց հեռանալը անհրաժեշտ է և դա որդու օգուտն է պահանջում։ Նրանք խանարհուեցին Բեսօի կամքին։

—Այժմ մենակ ենք. հօ գիտես դժբաղդ գլուխս ինչեր է տեսել, ահա վիրաւոր կուրծքս, ահա ճակատիս ըպին։ Սրանք կարող են վկայել, որ հօրիցդ ծածկելու ոչ մի վտանգ չունես։

Որդին տատանման մէջ, գլուխը խոնարհել էր ցած։

—Որ մի յանդուգն միտք կայ գլխումդ, շարունակեց

հայրը—ես գիտեմ, որ դու մի ինչ որ բան ես վճռել. խոսքը, հաւատա հօրդ, նա քեզ արգելք չի լինի։ Երբ նայում եմ այդ կրակոտ աչքերիդ, իմ երիտասարդութեան պատկերը գալիս առաջս կանգնում է, արիւնս եռում է, ուզում եմ նորից հրացանս կրծքիս սղմած՝ մագլցել մեր հարազատ կիրճերում ու այն ազատ օդից միանգամ էլ շնչել։

—Ես միշտ քեզանով հպարտ եմ եղել, հայր։

—Քեզ յանձնուած է մի գործ։

—Այո։

—Եւ հաղուստդ փոխուած ես, որ...

—Որ չճանաչեմ և հնարաւորութիւն ունենամ։

—Բաւական է. այժմ ինձ բոլորը պարզ է։

—Սիրտս պատառ-պատառ է լինում, հայր, բայց այլ կերպ չեմ կարող. վճռուած է։

—Ոչինչ, տղաս։ Վռուած է, ուրեմն պէտք է կատարես։ Խեղճ մայրդ, սրքան էր ուրախացել. նա չի հասկանում, որ դժբաղդութիւնը, այդ կապոյտ շապիկի մէջը չէ։ Նա ուզում է աղքատներին տա. ոչ, դու այդ հագուստները աղքատներին չես տա. նրանց կը պահես ինձ համար, որ իմ թշուառ աչքերը նրանցով սրբեմ, նրանցով...

Այդ խօսքերի հետ հայրը գրկեց որդուն և իր դողդոջուն ձեռքով սեղմեց որդու գլուխը իր կրծկին։ Եւ որդին ամբողջ մարմնով զգում էր հոր անձայն ու անարտասուք հեկեկանքը։

—Դուռը կամացուկ բաղխեցին։

—Դաթօ, Դաթօ.—լսեց դռան յետևից մօր ձայնը։—Տես ով է եկել, չարաճճի Գիժօն է, է։

Տղան վազեց բաց արաւ դուռը։

—Վահ, Դաթօ,—բացականչեց կարմրած՝ դիտելով երիտասարդին։

—Բեսօ, ցաւդ տանեմ, ինչ է պատահել, կամաց հարցրեց պառաւը՝ մարդու այլայլած դէմքին նայելով։

—Ոչինչ. գնա բանիդ, ինչ պիտի պատահի։

Երբ կինը նորից դուրս եկաւ, Բեսօն լուռ ու մտախոհ կանգնել էր դեռ. մէկ նայում էր Դաթօին, մէկ այդ թարմ ու աշխոյժ աղջկան. և կարծես վարանման մէջ էր։ Յանկարծ ձեռքի մի տարօրինակ շարժումով մօտ կանչեց Գիժօին.

—Ե՛կ աղջիկս։ Դաթօն հեռու տեղ պիտի գնա, դու արժանի ես իմ Դաթօին. եկ, մի՛ քաշւիլ, համբուրիր նրան և մնաս բարև ասա, նա քու նշանածն է։

Մարգարիտը զարմացած նայեց Բեսօին. նա մինչ այդ իրան տանու աղջիկ էր համարում և իբրև Թամարայի ընկերուհի ազատ մուտք ու ելք ունէր նրանց տանը. սիրում էին նրան բոլորը և ոչ ոքի համար գաղտնիք չէր որ նրանք խելագարի նման միմեանց սիրում էին։ Տանը շատ էր խօսւել, հանաք-շիտակ, բայց այդպէս կտրուկ և լուրջ, այն էլ Բեսօի կողմից, միանգամային անսպասելի էր։ Աղջիկը ապշած ու յուզուած մի վայրկեան նայեց Դաթօին և երբ նրան հանդիպեց Դաթօի վշտահար աչքերը յանկարծ մի ներքին երկիւղ զգաց։

—Գրկիր, Դաթօ, նշանածիդ.—դարձաւ ծերունին իր որդուն մի տեսակ հրամայական ու խորհուրդաւոր շեշտով։

Երիտասարդը անվստահ մօտ եկաւ, բռնեց քարացած աղջկայ ձեռքից։ Թեթև քաշեց դէպի իրան, յետոյ յանկարծ փաթաթւեց, սեղմեց կրծքին ու մնացին անշարժ անծպտուն ոչ մէկը ոչ միւսը։

Եւ երկար։

Մարգարիտը անսահման ուրախութեան մէջ ողբում էր, նա կամացուկ գլուխը բարձրացրեց և լի երկիւղածութեամբ նայեց Դաթօին։

Դաթօի վշտահար հայեացքը գերել էր նրան—այդ տխուր հայեացքի մէջ նա զգում էր անհուն երջանկութիւն. նա այլևս չկարողացաւ դիմանալ, ամբողջ հոգով

ընկաւ նորից Դաթօի գիրկը և խորասուզուեց իր ծով երջանկութեան մէջ։

Նա զգում էր իր շրթունքներին ջերմ համբոյրներ, նրա հոգին կուռ շղթաներից ազատուած՝ ապրում էր հեռու, մի սքանչելի եթերային աշխարհում. «Դաթօ», շշնջում էր նրա շրթունքները, «Դաթօ», խաղում էր նրա երջանիկ ժպիտը։

Բեսօն տարօրինակ էր, նրա ձեռքերը դողում էին, այլայլուած նայում էր շուրջը, կարծես նա շտապում էր, նրա խօսքերը կցկտուտ էին և անկապ. նա կարծես աւելի սրտի ցաւից, հազիւ լսելի արտասանեց.—Դաթօ, Մարգօ։

Տղան մի կարուկ շարժումով կամաց-կամաց հեռացրեց աղջիկը գրկից. դարձաւ հօրը, լուռ սեղմեց նրա ձեռքն ու դուրս նետուեց տնակից խելագարի պէս։

Երբ նա սթափուեց, արդէն փողոցի մէջն էր. բաւական հեռուն. մեն մենակ դեռ գնում էր. կանգ առաւ, ուժերը լարեց, ճակատը սրբեց. անցածը շատ թարմ էր, իր վառուն նշանածի պատկերը՝ անզուսպ հեկեքանքի մէջ կենդանացաւ նրա առաջ։

«Յետ դարձիր, յետ դարձիր, կրկնում էր նրան մի ներքին ձայն։

— Ո՞րտեղ գնում, ուր, ուր ես թողնում քո բախտը, քո երջանկութիւնը»։

— Յետ դարձեր, գոնէ մի անգամ էլ. գոնէ մի համբոյր էլ։ Գնա, պարոպից նայեր. նա դեռ արտասուում է, նա քեզ որոնում է, Դաթօ։

Թարմ էր, շատ թարմ. աղջկա պատկերը, որին անյրան երազուն սիրել էր իր սրտրիխորքում, համբոյրները դեռ դողում էին նրա շրթունքներն, նշանածի արցունքները նա դեռ զգում էր իր այտերի վրա...

«Մարգօ»... խօսեց նրա հոգին, և նա ակամա կանգ առաւ, նայեց յետ, դէպի իրանց տան կողմը։

Լուռ էր, հանգիստ, մի թարմ ու ցողոտ առաւօտ էր։

Գարնանային գիղեցիկ արևը ուղղակի շոյում էր։ Նոր բաբողբող ծառերը ճամբի երկու կողմից, թարմ ծաղիկները ու խոտերը ամեն կողմից «կեանք, կեանք» էին պոռում նրա երեսին։

Օ՜, ինչ լաւ է աշխարհը, բայց մարդիկ...

Եւ նա յիշեց նախորդ գիշերւայ ժողովը. և կարծես արիւնը սառաւ, այն ծխոտ սենեակը և այս մաքուր բընութիւնը, ինչ կապ կարող էր լինել։ Դա մի երազ էր երևի, բայց միտքն ընկաւ թէ ինչպէս էր ինքը խօսում. ինչպէս պահանջում էր բոլորից, որ տուն, տեղ, կին, երեխայ պէտք է մոռանալ... Բայց այսօր ինքն է տատանման մէջ։

«Դաթօ ամաչիր». լսելի կերպով արտասանեց նա. կարծես դրանով ուզեց խեղտել ներքին ծայրը...

«Բայց չեմ կարող, չէմ կարող». դուրս թռաւ նրա կոկորդից խեղտող ձայն։ Եւ այդ ժամանակ նա զգաց, որ սիրտը արագ սկսեց բաբախել. զգաց մի ներքին քաղցր ջերմութիւն։

Նա քայլերը արագացրեց դէպի տուն. նորից կանգ առաւ։

Ահա իրանցը, փողոցը, որքան սիրելի է նա այժմ. նա իր սուր հայեացքով ուզում էր թափանցել պարիսպներից, տների հաստ պատերից այնկողմը և տեսնէր այնտեղ իր նշանածին։ Մի քանի քայլ էլ և դու այնտեղ ես. ինչպէս էր հոգին ինդում։

Ամբողջ երեսով կարմրած, ամօթխած, հայեացքը գետին հառած՝ նա առաջ չէր շարժւում։

«Մարգօ», դողդողալով խօսեց նա. աւելի ցածր և մեղմ։

Եւ ոչ ոք չը լսեց նրա ձայնը. նա ձուլուեց իր հոգու խորքում, որ այնքան փայփայած տեղ ունէր։

Նա պահուեց այնտեղ սուրը, անբիծ, անարատ։

Մի անգամ էլ նայեց իրանց տան կողմը, ուր ծառե-

ըի միջից հազիւ տանիքի մի մասն էր նկատւում. արագ սրբեց ճակատը, շուռ եկաւ ու շարժւեց։

Նա չէր գնում. նա վազում էր, նա փախչում էր։

Նա փախչում էր իրանց տանից, իր Մարգօից, նա փախչում էր բախտից ու կեանքից, նա փախչում էր ինքն իրանից։

Տանջւած մարդկութեան ապագայ բարօրութիւնը նոր զոհեր էր պահանջում։

ԱՐՅՈՒՆՔՆԵՐ

Մորմոքված սրտիս
յոյզ արցունքներից
պակաս եմ չիւսել

Դու հեռացար...

Դու հեռացար և դատարկուեց ամենինչ, դատարկուեց և իմ սիրտը։ Ես ժպտեցի. դառը հառաչանք դուրս թռաւ իմ կրծքից։ Մի աներևոյթ ոյժ նետեց ինձ դէպի անդունդը և խորտակեց, ինչ որ ասուածային, ինչ որ վեհ ու սուրբ էր։

Ահա նրա փշրանքները...

Օ՜, որքան փոքր, անմիտ ու կուրացած էի ես։

Այն սևաւոր օրից, երբ մխաքս սկսեց գործել, երբ ինձ հաշիւ ուզեցա տալ, կրակը նորից բորբոքուեց, սառսուռը թափանցեց ուղեղիս մէջ, սիրտս մորմոքուեց և ես տանջուեցի անասելի վշտով։

Ձիւնը եկաւ. սարեր, ձորեր ծածկեց, հող ու ջուր սառաւ, ծառեր դոսացան թև ու թռչուն չուեց հեռու աշխարհ։

Մոլոր շրջում եմ ծառից-ծառ, թփից-թուփ։ Արցունքն աչքերիցս վաղուց է ցամաքել բայց նա դեռ հեծում է։

Ուզում էի սրտիս խորքում պահուած մի հատիկ սփոփիչ արցունք ունենալ. մի վայրկեան նորից ապրել։

Հոգիս յուզուում էր սիրտս պատառ-պատառ էր լինում, ես նեռուում էի դուրս. մոլոր շրջում էի անորոշութեան շուրջը և յոգնած ընկնում էր ցած։

Ծառը սաղարթ տխուր շարժում էր և ցուրտ ու չոր քամուց պատսպարելով ինձ, մերթ մխիթարում, մերթ դառնագին յառաջում էր։ — «Նա գնաց, նա գնաց»։ Եւ այդ դեղնած թոշամած տերևները նրա արցունքներն են, որ հատ-հատ ընկնում են երեսիս ու այրած աչքերիս։

Դու հեռացար...

Սարեակը եկաւ և իր դայլայլիկների հետ դողաց ամբողջ մարմնով։

Սիրտս ալեկոծուեց, փախա դաշտ։

Ձնծաղիկ էր բուսել այնտեղ. փնջիկ հիւսեցի։ Գարնան առաջի ծաղիկը ձեռքիս, դողդող քայլերով, բարձրացա վերը. միտքս ալէկոծ, յուզուած սրտով բաղխեցի այնտեղ... Ի զուր էր աչքերս որոնում նրան. նա չը կար. բայց ես զարդարեցի նրա մազերը...

Երբ ուշկի եկա, ինձ թւաց որ ես մի վայրեկան ապրել եմ. արցունքներս ցողում էր մազերիդ և այդ մազերի վրա ամրացրած էր ծաղիկը. նա թաց էր. ես նրան սեղմեցի շրթունքներիս և պահեցի սրտիս խորքում։

Գարուն էր։

Ծառերը զարդարուել էին, թփերը պճնուել, ծաղիկները բուրում էին. մանիշակը բացուել էր, հեզիկը խաղում էր զեփիւռի հետ, շուշանը շողում էր արևի ցոլքերում։

Ամեն տնից, ամեն թևից մի թռչուն էր եկել. նրանք քո ձայնին էին սպասում։ Երբ դու երգում էիր, նրանք լռում, լսում էին. երբ դու զբոսնում էիր իջնում էին ձեռքերդ և անթարթ աչքերիդ էին նայում։

Ծաղիկները զլում համբուրում էին ոտքերդ. շնչում էին քո բոյրից. իրերում, ժպտում էին քիչ. թռչունը

խօսում էր քու հոգուց. երկիրը օրօրում էր քու իրանը և դու ծաղկանց մէջ սաւառնում էիր անբիծ մաքրութեամբ։

Լուսինը հանդարտ լողում էր. ջինջ երկնակամար բացել էր գիրկը քու առաջ. անթիւ անհամար աստղեր գուրգուրալով շրջել էին քեզ. մերթ փարւում հպւում էին, մերթ հանդարտ լողում էին եթերում։

Նորաբողբոջ տերևները խաղում էին քու շողքերի հետ, ալվառ ծաղիկները օրօրւում էին նազանքով. ծովի զեփիւռը մրմունջ էր ասում քեզ։

Ծաղիկների կրծքում էի հիւսել քո բոյնն, ամեն թփից, ամեն ծառից ու ծաղկից պսակ էի պատրաստել քեզ համար. սիրտս պատառւում դուրս էր նետւում, նա որոնում էր, նա խելակորոյս կանչում էր քեզ։

Հեռու մշուշի մէջ ամպեր էին հաւաքւում, նրանք լողում էին ոտքերիդ տակ և դու տենչաքով սքողւում էիր այնտեղ։

Ա՛հ, որքան յստակ ու սուրբ էր դա...

Դու ձեռքդ մեկնում էիր և իմ սիրտը որոնում էր քեզ. նա նայում էր աչքերիդ, նայում էր աննդհատ և անհագ. Եւ քու հայեացքը թափանցում էր սրտիս խորքերը, հպւում, ձուլւում էր այնտեղ։

Ահա աղբիւրը, ծառը, ծաղիկները և խիտ սաւերի տակ քու ժպիտը. նրան զարդարել էի վարդագոյն յոյսերով, լուսով և շողերով։ Ահա և համբոյրը իր բոյր և կոկոմ տենչանքով... Եւ ոտքերիդ տակ քու անբախտ Հրանիդը։

Դառը դժգոյն աշնանային ցուրտ էր փչում. սև սև ամպեր էին կուտակւում բամին վոյում էր անտառի խորքից։

Ծառերը տերևաթափ էին լինում, վարդենին գոսացնում էր. ծաղիկները թառամում էին գիտնին, բայց նրանք դեռ ապրել էին ուզում։

Մերկացած ծառը բողբոջ էր արցակում գոսացած բարդը կոկոն էր տալիս. շուշանը արմատից ցողուն էր բռնում, մարգարիտը բացել և թախծալից աչքով որոնում էր։ Չէին ժպտում, չէին հրճւում, թիթեռնիկների և մեղուների հետ չէին խաղում. նրանք եկել էին կարեկցութեան, այրւած սրտին լացու արցունք ցողելու։

Որքան յուզմունք կար նրանց վեհ ու սքանչելի սրտերի մէջ։

Նրանց անարատ ցոլքերում ապրում էր իմ արցունքները և երբ այրւած աչքերիցս քամում էի տանջանքի վերջին կաթիլները, վաղօրդեան ճառագայթը՝ գալիս էր երկնքից՝ գուրգուրում, հպւում էր ցողերին, տանում էր նրան վերը, շատ վերը. սիրտս լցւում էր վշտով և ես օրհնում էի քեզ...

Գիշերը տարածւում էր ժանգ ու մութ գիշեր. խորը գերեզմանային լռութիւն էր տիրում շուրջս. ծաղիկները խոնարհում էին գլուխները մօտենում էին իրար, շշնչում էին և դողում։ շնչովս տաքացնում էի արցունքովս վշտակից լինում նրանց և մենք յուսակտուր սպասում էինք արշալուսին։

«Եկաւ, եկաւ». շարժւեցին ծաղիկները, Յասմիկը հանեց գլուխը. յակինթը թոթռալով շարժեց թևերը, հեղիկը նազանքով բացեց աչքերը։ Արևը ապրում էր նրանց վառ ցոլքերում, հպւում կենդանութիւն էր տալիս, ոսկէ ճառագայթներով ցողում էր ամենուրէք. բայց նա ինձ չէր տեսնում, ես էլ էի բեկւած սրտով սպասում, ամբողջ

մարմինս դողում էր, ձեռքերս սեղմւած շնչարգել սպասում էի...

«Եկաւ, եկաւ, ուզեց խօսել և իմ անբախտ սիրտը. ձայնս խեղդւեց, լեզու և կապար դառաւ, արցունքներս սառան, կպան աչքերիս։

„ՅՍՏԻ“

Մի գեղեցիկ առաւօտ էր դա։

Արևի ճառագայթները դեռ ցողերի մէջ էին խաղում. մայր երկիրը իր խոր քնից արթնացած՝ օրօրւում էր ամպերի հովերում և թռչունները վաղօրդեան երգեր հիւսելով օրհնում էին նրան։

Իր հրաշակերտ պալատում, անմեղ, անարատ, վառ երազանքներով և դեռ շոյող ննջի մէջ սքողւած՝ արբենում էր գեղեցիկ Ադամ՝ երբ գեփիւռը հեռու տեղից հատ-հատ հասցրեց նրա ականջին վշտահար երգի ալեկոծ բեկորներ։ Ահաբեկ սրտով նա ցած իջաւ։

Կատաղի ծովի դիմաց, վիթխարի ժայռի կրծքին հենւած էր դժգոյն պատի. նա երգում էր. նրա ձայնը տխուր էր, մելամաղձոտ և սրտառուչ, երբեմն նրա հոգու խորքից դուրս էր թռչում բողոք, երբեմն խորը հառաչ հետ անզուսպ վիշտ։

Ադամ անվստահ քայլերով մօտեցաւ նրան։

—Ո՞վ ես... Հազիւ շշնջաց նա։ պատանեն լուռ էր։

—Ո՞ւմ ես որոնում դու այստեղ. ինչ ես դու երգում։

—Ես երգում եմ վիշտը... Ադա։

—Դու երգում ես վիշտը. զարմացած, հարցրեց աղջիկը։

—Այո։

—Եւ այդքան սքանչելի։

—Վիշտը սքանչելի է, Ադա, երբ դու միայն նրան նայում ես։

Տես, այս հսկայական լեռներին, նայիր, այս հրապուրիչ տեսարաններին. լայնածաւալ ծովը ալեկոծւում է մեր դիմաց. գեղեցիկ է. բայց որքան վիշտ կա նրա մէջ։

—Այստեղ զբոսնում էի. ամեն առաւօտ սիրտս խօսում էր բնութեան հետ,—յուզմունքով դառաւ նա տղան.— Եւ անհագ կարոտով որոնում էի... որոնում էի և...

—Գտաւ։

—Ոչ, Ադա, որոնածը չեն գտնում. բայց լսիր։

«Երկինքը դեռ բաժանւած չէր երկրից. ծաղիկները խաղում էին աստղերի հետ. հոգին յստակ էր, սէրը անթառամ։

Երբ պատանին սիրուց յուզւում էր, աղջիկը նրա սիրտը կրակ ու բոց էր գցում և երբ պատանին այրւում էր նրա ոտքերի տակ, աղջիկը իր մի կաթիլ արցունքով նորից կենդանութիւն էր տալիս և նրանք ապրում էին յաւերիան»։

—Պատմեմ։

—Պատմիր։

«Վսեմ էր աշխարհը, յստակ անարատ, սիրալիր գրաւիչ, ինչպէս այդ քու ծով աչքերը։

Վսեմ էր բնութիւնը, հզօր, յաղթական... բայց նա այդպէս չը մնաց։

Նայիր լեռներին, շղթայւել—զսպւել են յաւիտենական կապանքներով. ձիւնը ծանրացել է նրանց հսկայական գագաթներին, կաշկանդել է իր սառնամանիք ճիրաններում։ Այժմ ամպերը կուտակւում են նրանց թաւօտ լանջում, ալիքը ծէծում է նրանց վիրաւոր կրծքին. կայծակը ապրում է, փայլակը շողում է այնտեղ։

Օ՜ որքան տանջանք կա այս վճիտ ջրերում»։

Ադամ լուռ էր. նա մտախոհ նայեց պատանուն, մի շարժում արաւ, աշտարակից մի քար պոկեց և աղմուկով գցեց ծովը։

—Եթէ դու կարողանայիր ծովի մէջ թաղել և ինձ և իմ անբաժան վիշտը, Ադա, ապառաժի կտորը ինձանից բախտաւոր չէր լինիլ։

Ադամ ցնցւեց, նա ինքնամոռացութեան մէջ, պատա-

նու ձեռքիցը ամուր քաշեց դէպի իրան և երկիւղալի նայեց նրան։

Պատանին շարունակեց։

«Երկինք ու երկիր ահեղ կռուեցին. ծովը կատաղից, ալիքներ խառնուեցին իրար, որոտ տեղաց, փայլակ, կայծակ շանթահարեցին. մի բոց ծնուեց, մի ամպ բարձրացաւ։ Այն չքնաղ կոյսը շողում էր ամպում, այնքան սքանչելի, այնքան սուրբ ու անարատ էր նա։ Արևը իր ջերմ ճառագայթներով ողողել՝ նրբաքողում էր նրա կուսական մերկութիւնը, բայց նա հպարտ լողում էր հորիզոնում. մերթ թռչում, հպւում էր երկնքին, մերթ թեթև խաղում մօտենում էր ծովին. ամպերը հանդարտ օրօր էին ասում նրան և ոչ մի չար բան չը կար աշխարհում»։

—«Ահա իմ ընկերը կոչեց պատանին, թևերը մեկնեց վազեց դէպի կրակը»։

—Կրակը։

—Այո, Ադա, կրակից հեռանալ չես կարող. նա հեռից էլ է այրում քեզ։

«Մի դիւթիչ գիշեր, գեփիւռը ծովից օրօր էր ասում, պատանին ու աղջիկը զմայլած՝ դուր դուրում էին իրար։

Երջանիկ համբոյրները շրթունքին ննջում էր պատանին. բայց աղջիկը երազանքների մէջ էր։

Երկինքը հափշտակել էր վառ ցնորքներով և տենչալի երազ եկել պաշարել էր նրան։

Լուսինը շողերով զարդարում էր նա փրփուր մազերը, սէր էր աղերսում երազուն աչքերից, կրակ ու բոց էր գցում մատաղ կուրծքը, և յուզիչ համբոյր այն վառ աչքերից, և թռթիռ հպում տենչալի շրթից, և լեռներ, և ծով, երկինք ու աստղեր, և մեղմ գեփիւռ մերթ ողբում արցունք էին թափում, մերթ գուրգուրում, ժպտում էին նրան։

Եւ օր օրի վրա երազ ու երկինք, կրակոտ համբոյր և սէր, աղէրսանք, մինչ վաղորդեան լուսոյ ցոլքերը օրօր

էին ասում, արբեցնում աղջկան. և սա հափշտակուած փայլուն երազանքներով, սլանում էր երկինք և այնտեղից կարեկցաբար նայում էր պատանուն, և երբ պատանու հայացքը հարուում էր նրան.—«Ոչ, ոչ». սիրելի ժպտով դառնում էր նրան.—«Ես քեզ շատ եմ սիրում շատ»։

«Բայց»...

Պատանին կանգ առաւ. թէ ինչէր կատարուում նրա հոգում, աղջիկը այդ չը կարողացաւ հասկանալ, բայց նրա համար մի բան պարզ էր, որ տղան դժուարանում էր շարունակել. քնքշաբար առաւ նա պատանու ձեռքը և ուղիղ աչքերին նայելով ասաց.—աղջիկը նրան խաբել է անպէս չէ՞։

—Ոչ նա չը խաբեց, Ադա, խաբում են երեխաները. նա անիծեց. նա օրհնեց. թողեց պատանու հոգում տանջանքի մի սքանչելի դրոշմ և մի անողորմ կրակ»։

«Մի ժանդ ու մութ, խաւար գիշեր պատահեց այդ, Ադա։

Այն վերջին ժպիտն էր, որ դողաց թշուառ պատանու շրթունքին և արցունքներ, որ թափուեցին նրա կրծքին։

Նա ահաբեկ բացեց աչքերը և սրտի բաբախումովնայեց իր շուրջը, մենակ էր, միայնակ իր սև վշտի հետ. դեռ դողում էր կուսական համբոյրը նրա շրթունքներին, արցունքը թոթովում էր նրա հոգու խորքերում։

Երազ էր, ահեղ զարհուրելի երազ, նա կանչում էր, նրա ձայնը դողում էր, սիրտը ճմլում. նա յուսահատ որոնում էր, մի ճիչ էլ, մի սրտակոտոր աղաղակ էլ և ընկղմւում է վշտի մէջ աւելի խորը, աւելի խորը։

Ոչ մի տեղ հանգստութիւն չէր գտնում, բարձրանում էր սարերի լանջին ահռելի ժայռերի կատարին, տարածում է ձեռքերը. շրթունքները չեն շարժւում, համառ ու լուռ ողբում է միայն նրա հոգին։

«Իմ ամբախտ աչքեր, ի՞նչու չը կուրացաք առաջին վայրկեանին.

Ի՞նչու չը տեսաք իմ դառը վիճակը»։

«Մի արցունք գոնէ, իմ թշուառ աչքեր»։

Ալեկոծւում է ծովը, ալիքներ են բարձրանում, անդունդը վշշում է. երկինքը փայլատակում է, բայց ոչ ոք նրան չի պատասխանում, ոչ ոք նրան չի տեսնում, ոչ ոք չի հասկանում. նա իր վշտի հետ միայնակ է, միայնութեան մէջ»։

«Նայիր, իմ կուրացած աչքեր, նայիր շատ հեռուն. գուցէ դու կարողանաս տեսնել նրան, գուցէ կարողանաս գտնել դու նրան»։ Փոթորիկը տանում էր հեռու պատանու յուսակտուր խօսքեր։

—Օ՜, ինչ դառն է, երբ գիտես, որ քեզ ոչ ոք չի հասկանում, երբ գիտես, որ միայնակ ես քու անբաժան վշտի հետ, Ադա...

«Եւ ահա մի օր, երբ պատանին խորասուզուած՝ քրքըրում է իր տանջուած սիրտը. նրան պատահում է մի աղջիկ. այնքան գեղանի, այնքան երջանիկ ու բախտաւոր։

Կանչում է նա պատանուն, և խնդրում է նրանից պատմել իր վիշտը։

Վիշտը պատմել...

Նրան հասկանալ է պէտք, Ադա... Բայց աղջիկը նրան չի հասկանում, նրա մանկական սիրտը յուզւում է. մատաղ կուրծքը ալեկոծւում է. նա իր քնքոյշ ձեռքը մեկնում է պատանուն և անմեղութեամբ կոչում է.—Ես կը որոնեմ նրան. ես կը գտնեմ և դու երջանկ կը լինես։

—«Ո՛չ դու մի որոնել նրան. նա ինձ մօտ է, նա իմ հոգու խորքումն է, ես բաժանւել եմ ուզում, ես փախչել եմ ուզում, բայց նա երկու ձեռքով բռնած իմ սիրտս՝ սեղմում է նրան, ես ուզում եմ տալ նրան, բայց սիրում եմ, ուզում եմ անիծել, ամբողջ հոգով թունաւորել, իմ շրթունքներս աղօթք են մրմնջում նրան... Ադա։

—Դու գնում ես. սպառիր, ինչու պատմեցիր։

—Օ, եթէ կարողանայի իմ դժբախտ վիճակի վրա լաց

լինել, եթէ կարողանայի մի արցունք քամել, իբրև մի օտար գոնիայ, քեզ չէի պատմել։

Պահեր այդ մանկական, անարատ արցունքներդ... Մի օր, երբ սիրտդ ալէկոծւի, երբ քնքոյշ հոգիդ դառնանայ, յիշեր ինձ, այն ժամանակը ինձ կը հասկանաս, բայց արցունք չես ունենալ թափելու, Ադա. ինչ դառն է կեանքը։

Աղջկա ականջին դեռ հնչւում էր պատանու վշտահար ձայնի վերջին բեկորները։ «Մի արցունք գոնիայ իմ թշուառ աչքեր, ինչու չը կուրացաք առաջին վայրկիեանին, ինչու չը տեսաք իմ դառը վիճակը»։

Այդ օրւանից չքնաղ Ադաի սիրտը մի յոյզ, մի անշէջ կրակ է ընկնում, նրա աչքերից քունը փախչում էր, գիշերները նա լուռ թափառում էր աշտարակի շուրջը և երբ հնչւում էր թռչնոց վաղօրդեան երգը, նրա սիրտը ալէկոծւում էր, նա իր հոգու խորքից լսում էր. «Մի արունք գոնեայ իմ թշուառ աչքեր»... և նրա աչքերից թափւում էին կաթ-կաթ արցունքներ, նրան թւում էր, որ նա ապրում է, նա որոնում է և պիտի գտնի այն սքանչելի վիշտը, որ այնքան փայփայած, այնքան հարազատ էր իրան։

ՏԻՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Խորտակուած կեանքիս
յուռ բեկորներից
արձան եմ կանգնել։

Նրա մանկական աչերը նայում էին լի սիրով, ուրախութեան բուռը տենչով։

—Զգնամ, ասացի ես տխուր։

—Հա, մի նա. թէյ հմի։

—Թէյ, խմեմ.

—Հա։

Նա բարձրացաւ ոտքերի ծայրերին և իր փափկիկ թևերը մեկնելով ուզեց թռչել ընկնել գիրկս։ Մի ակնթարթում առա նրան, բարձրացրի ձեռքերիս վրա. նրա ուրախութեան չափ չկար։

—Ո՜ւ-հու, ինչ մեծ ես, կոչեցի ես, նա քրքջաց, երկու ձեռքով փարուեց վզովս և իր քնքոյշ այտերը մօտեցրեց շրթունքներիս։

—Է՛լի։

Ես նորից թռցրի նրան։

—Էլի, էլի, թոթովեց նա։

—Յոգնեցինք. այժմ նստենք թէյ հմենք, հա։

—Հա. համաձայնուեց նա և մեզ գրկումս և իր փոքրիկ ձեռքերով սկսեց խաղալ ինձ հետ. նա զարմանում էր, իսկ ես աքանչանում էի նրանով, ուզում էի, որ նա խօսի, խօսի երկար։

—Ջուլնն ուտում է. սիրունն-լաւը, գիտես. թոթվեց նա։

—Որտեղ է Ջուլնն։

—Դուսը։

—Թօթօն վազեց, վազեց. հափ-հափ-Ջուլնու. հատ-հափ Ջուլնու։ Միևնոյն ժամանակ նա իր փոքրիկ մատներով շփում էր երեսս, ջոկոտում էր բեխերիս մազերը և աշխատում էր մտցնել բերանս, դիտում էր ատամներս։ Ես անդդհատ նայում էի, նայում և չէի հասկանում ինչնէ ինձ գրաւողը, արդեօք այն չքնաղ մանկական դէմքը, վսեմ աչքերը, սպիտակ-փրփուր մազերը, թէ նրա ատուածային անմեղութիւնը. ես նայում էի, նայում էի անկշտում, յափշտակում էի նրա իւրաքանչիւր հնչիւնը, իւրաքանչիւր խօսքը։ Նա նորից և նորից սկսում էր թոթովել, փոքրիկ բերանը բաց ու խուփ էր լինում, մանրիկ ատամները խփւում էին իրար. շատ անգամ նա ինձ համար անբացատրելի բառեր էր արտասանում. լսում էի, ագահութեամբ կլանում էի նրան. և նա ամուր կպած կրծքիս՝ խաղում էր, խաղում էր անհանգիստ ու զարմացած. խաղալիքներ էր գտել երեսիս, թէ ուսումնասիրում էր, այդ, ես չ՚գիտեմ, բայց նա զննում էր, մանրակրիտ նայում էր վրաս։ Հերթը հասաւ փողպատիս. ժպտաւէնս քանդեց. նայեց աչքերիս և այն տեղից երևի համաձայնութիւն գտնելով. նորից իր ճանապարհով գնաց։

—Շուտ արի, ասաց նա. ես գլուխս դարձրի.

—Պասիը, ես «պասեցի». նա քրքջաց և մեծ բաւականութիւն զգալով իր արածից, նայեց ինձ, ես համբուրեցի նրա գլուխը ու նա սեղմեց կրծքիս։

Ես թէյը հովացնում էի և նա խմում էր։—Ամա ժըպտում էր նա. թևերը-ձեռքերը շարժում էր և թոթռում էր իմ իւրաքանչիւր շարժուածքներից.—Պրծանք. ասացի ես. «պրծանք». կրկնեց նա։

—Ես ը՚ըպան ունիմ. ֆարթուղը ցոյց տալով դառաւ նա ինձ։

—Դու գրպան ունիս։

—Հա, ասացի ես։

Նա իր փոքրիկ գրպանից հանեց կոճակներ, գոյնզգոյն թելերի կտորներ, ժապաւէններ և լցրեց իմ ժիլետիս գրպանը. այնտեղ նա գտաւ մատիտ և գրչահատ։

—Բաց արա, ասաց նա։

—Բաց արա, բաց արա.

—Ո՚ւ, դժւար է, տես չեմ, կարողանում։ Նա ինքը ուզեց բաց անել։ Մատիտը և գրչահատը մի պահ նրան զբաղեցրին. նա ինձ մօտացաւ. ես զգուշութեամբ համբուրեցի նրա մազերը. նա կարծես սթափւեց, աւելի տեղաւորւեց գրկումս. յարմարութիւն էր որոնում, գլուխը թէքելու տեղ էր փնտրում. ես ամենայն խնամքով պատրաստեցի գիրկս. նա մի ձեռքում մատիտը, միւսում-գրչահատը բռնած՝ անթարթ շնչում էր կրծքիս և կարծես մտածմունքներ եկել պաշարել էին նրան։ Ես յետևում էի նրա մեղմ շնչառութեանը, զգում էի անսահման ջերմութիւն. խնամքով շփում էի նրա գանգուրները. չէի շարժւում, թւում էր ինձ որ կըխանգարեմ, կըցաւեցնեմ, յանցանք կը գործեմ այդ Ամատու առաջ։ Քարացած դիտումի. նրա թերթունքները ծանրանում էին. մի քանի անգամ կպան և բացւեցին. նա գլուխը թեթև շարժեց, յարմարւեց, մի ակնթարթի էլ և նրա աչքերը մեղմ փակւեցին։

Լուռ էր սենեակս, տխուր և միայնակ. մի վայրկեան հայեացքս հեռացրի նրա մանկական երեսից. նայեցի շուրջս. ապա կարծես պատերից վախենալով՝ նորից առա գիրկս, նորից կպա նրա ջերմ շնչառութեանը։

Վաղուց չէր, որ մնացել էինք միայնակ, լքւած, անբախիթար։

Մթնեց այն մռայլ օրը. բայց նա դեռ այնքան թարմ

էր, այնքան կենդանի իմ յիշողութիւնների առաջ, որ չէի կարողանում ազատուել այդ ինձ կաշկանդիչ անգութ մըտապատկերներից։ Այն դժբախտ առաւօտը իւր ամենային մանրամասնութեամբ և ինձ համար անսպասելի դժբախտ նորութիւններով եկաւ նորից պաշարեց ինձ. մարմինս ցնցուեց, սառուռ զգացի. ջղերս կծկուեցին, ճնշում էր ինձ մի բութ, աւելի շուտ խեղդիչ, ծանրութիւն։ Մի ճիչ դուրս թռաւ իմ կրծքից, մի անգիտակցական բողոք խլացաւ իմ հոգու խորքում. աչքերս բեւեռուեցին դռներին. ես փարերեխան աչերը լայն բացած՝ նայում էր ինձ. երևի զառանցանքիս մէջ մօր անունն էր դուրս թռել բերանիցս. սիրտը բաբախումէր, ձեռքերը պարզեց, ուզեց խօսել... Ես... մա... Քնիր, քնիր, բերանիցը խլեցի ես «Ման...» քնիր. գիշեր է, գիշերը չեն խօսում, դուրսը խաւար է, փողոցում մարդ չկա... Ասացի ես շտապ-շտապ. ապա չը գիտեմ ինչու ցածր և հազիւ լսելի շշնչացի նրա ականջին. «դու խելօք ես». և յոգնած գլուխս ընկաւ ուսերիս. նա կարծես ինձ հասկացաւ, թեթև շարժում արաւ, յարմարուեց գրկումս և նորից աչքերը փակուեցին։

Նրա մատաղ գլուխը հանգստանում էր իմ կրծքին և. չէր զգում ինչ է կատարուում ներսը, բայց ինձ թւում էր, որ թունաւորում եմ այդ անմեղ արարածին, նրա արիւնը վարակում եմ իմ կրծքով, իմ տանջանքները դրոշմուում են նրա անարատ հոգում. որ ես իմ քայքայած կեանքի դոյութիւնը քաշ տալու համար գողանում, յափշտակում եմ նրա ամենավեհ սրբութիւնները... Բայց միևնոյն ժամանակ սարսափում էի, որ մէկը պիտի գա, խլէ նրան իմ կրծքից, պիտի բանա այն վէրքը, որ այս քնքոյշ մարմնի տակ այնքան խնամքով պահուում—սփոփուում է։

Աչքերս դռնից չէի հեռացնում. ահա նա կամացուկ բացուեց. ոտքերի ծայրով մօտեցաւ պառաւ դայեակը՝

այս դժբախտ յարկի միակ կենդանի վկան. նա տխուր ձայնով դառաւ ինձ։—Երեխան դիր տեղը, մեղք է թող քնի։

—Այո, մեղք է. ասացի ես։

—Դու էլ հանգստացիր, աւելացրեց նա և իր վշտալի հայեացքը գցեց ինձ. ես նրա աչքերից նշմարեցի, որ նրա վշտը այնքան երեխայի համար չէր, որքան իմ. նա հարազատ մօր պէս դողում էր ինձ վրա, երևի ես շատ տանջած դէմք ունէի, որ նա այնքան խիստ էր նայում երեսիս։ Ես սարսափով դիտում էի նրան, նայում էի նրա շրթունքներին, ահա նա կը շարժի և, առանց զգալու, որ այդ խօսքերը թունաւորում, ջախջախում են ինձ՝ կը ջանա իբրև մայր մխիթարել ինձ։

Նա բարձերը ուղղեց և դառաւ ինձ։

—Ուշ է, հանուեցրու երեխային և հանգստացէք։

Նա «բարի գիշերի» հետ շշնչաց երկու բառ ևս, որը ես հազիւ, աւելի շուտ, շրթունքների շարժումներից, լսեցի. նա խնամքով դուռը փակեց և հեռացաւ։

Ես ազատ շունչ քաշեցի, գլուխս թեքուեց դեպի երեխան, շրթունքներս մօտեցրի մազերին, զգուշութեամբ համբուրեցի. անսահման կարօտով սեղմեցի կրծքիս.—ոչ, այսպէս լաւ է, թող էլի քնի.—մտածում էի ես, բայց դայեակը նորից դուռը բացեց և ես աւելի շուտ, որ նա չխօսի, տեղիցս մեքենաբար շարժուեցի և զգուշութեամբ դրեցի մահճակալին. նա օդնեց ինձ, մենք լուռ հանուեցրինք նրան։ Փափուկ բարձերի վրա ննջում էր նրա սիրուն գլուխը. դայեակը նայեց երեխային, մի բան շշնչաց. աղօթք էր թէ անէծք ես չհասկացա, բայց ինձ աւելի շուտ թւաց, որ դա նորից վերաբերուում էր երեխայի մօրը, որից ես սարսափում էի, այժմ ուրախ էի որ չ'լսեցի։

—Ա՜յժմ լաւ է, դայեակ, շնորհակալեմ, դնա, հանգստացիր։

—Դու էլ, դու էլ, հանգստացիր։

—Ես էլ, ես էլ, դայեակ, կը հանգստանամ.

Նա գնաց։

Ես երկար նայում էի նրա յետևից և չէի կարողանում հասկանալ այդ մարդուն։ Ի՞նչ է ուզում նա ինձանից. հարկաւոր չեն նրա փաղաքշանքները, թող նա ինձ հանգիստ թողնէ։ Ամեն անգամ երբ պատրաստւում էի իմ դժգոհութիւնը յայտնելու նրան, բայց նա հէնց սենեակս էր մտնում թէ չէ, ես դողում էի նրա առաջ։ Փառք Աստծու գնաց. այժմ ես միայնակ եմ փոքրիկի հետ. նա մի ամբողջ աշխարհ է ինձ. նրանով ես ապրում, շնչում եմ. նա է իմ ամբողջ էութիւնը։ Որքան պարտական եմ նրան. չէ՞ որ ես ոչինչ եմ, մի հիւլէ. նա, իբրև մի մարմնացեալ սրբութիւն, եկել, պահում է ինձ. նրա իւրաքանչիւր շնչառութեան հետ հոգիս լցւում է ջերմութեամբ։ Եւ այդ փոքրիկ մանուկը, այն մեծ վշտի ծովում, կռիւ է մղում. իմ յուզած սրտի ալեկոծութեան դէմ մաքառում՝ չի թողնում ինձ խեղդւելու։ Ես զգում էի, որ այդ մատաղ կուրծքը, այդ սքանչելի մանուկը, կարողանում է յաղթել։

Ծնկաչոք ընկայ մահճակալի ոտքերին, գլխով յենւեցի լծակին, նրա փոքրիկ ձեռքը զգուշութեամբ առա ափերիս մէջ, շրթունքներս մօտեցրի նրան և յուզած սրտով սկսեցի հեկեկալ։

. . . Եթէ նա կարողանար խօսել, կարողանար հասկանալ ինձ, կը պատմէի նրան, կասէի բոլորը, բոլորը . . . Կուրծքս լիքն էր, հարկաւոր էր ազատութիւն տալ։ Եւ նա կը լինէր այն միակ արարածը, որին ես վստահ կըլինէի հաղորդակից անել իմ վշտին. այն միակ մաքրութեան տիպարը, որը չէր խորշիլ ինձանից, որը չէր ժըպտալ իմ անբախտութեան վրա, չէր հեգնիլ . . .

—Մենք իհարկէ կրմնանք իբրև լաւ բարեկամներ այնպէս չէ՞, խօսեց կինս իր հրաժեշտի վերջին բոպէներին, երբ ես սարսափի մէջ սքողւած մոլորւել էի։

—Այո՛... արտասանեցի. և ինձ թւաց, որ եթէ նա ասէր. «ես պիտի սաւառնեմ ծաղկանց մէջ երջանիկ, իսկ դու դժոխային բոցերի մէջ պիտի այրւիս, այնպէս չէ՞»։ Ես նոյնպէս կարտասանէի.—Այո՛...

—Դու ինձ նամակ կը գրես և իմ նամակներին կը պատասխանես. խօսեց նա նորից շտապ-շտապ։

Դուրսը կառքը կանգնած էր, այլևս ոչինչ չէր մնում ասելու և նա սեղմեց ձեռքս, զննող աչքերով նայեց ինձ. նրա դէմքի վրա ինքնաբաւականութեան ժպիտ խաղաց. նա թափանցեց իմ հոգու խորքերը մինչև ոսկորներս. նա ճանաչում էր ինձ աւելի քան ես, նա տեսնում էր իմ անսահման տանջանքը՝ տանջանքը՝ զսպւած կաշկանդւած. նա տեսաւ որ հազիւ եմ զսպում, հեկեկանքից խեղդւում եմ և նա կարծես դիտմամբ չէր շտապում. նրան շոյում էր իմ անսահման սէրը. նա հպարտանում էր իմ տանջանքով, ներքուստ հրճւում էր. նա գիտէր, որ ես իրան եմ սպասում, իր հեռանալուն. նայեց մինչև անգամ այն ճերմակ բարձերին, որոնք միակ ընկերս պիտի լինէր, իր հեռանալուց յետոյ. նա գուցէ և զննեց թէ բարձերը որքան փափուկ են և յարմար են դրան...

Արդէն վճռւած էր, նա պիտի գնար. և ես թերևս երազի մէջ կարծես հրաշքի էի սպասում։

Կառքը շարժւեց...

Չգիտեմ ինչո՞ւ ես դուրս էի եկել պատշգամբը, նայում էի կառքի յետևից. նա սրընթաց հեռանում էր։

Նա տանում էր իր հետ իմ ամբողջ էութիւնը։ Անիւի ամեն մի պտոյտը պոկում էր սրտիցս, քաշում, ջլատում էր նրան։ Այնտեղ էր իմ երիտասարդութիւնը, իմ վառ իդէալական ցնորքները, իմ երազած ու փայփայած իղձերը, տենչանքները. նրանք մէկիկ մէկիկ ընկնում էին փողոցի ցեխի ու փոշոմի մէջ, անիւը իր պտոյտների հետ խորտակում էր նրանց։

Սիրտս դատարկւում էր, ես զգում էի, թէ ինչպէս

մեռնում եմ, ուղեղս տեղից շարժւում էր, ոտքերս փայտացել էին և ինձ թւում էր, որ ոտքերիս տակը խորխորատներ են. սրունգներս երկարանում էին, հասնում էին անդունդի խորքերին և այսպէս ես քայլում էի. քայլում էի նոյն փողոցով, ուր այնպէս արագ կառքը սլացաւ։ Ես դուրս էի եկել քաղաքից և անդադար երերալով առաջ էի գնում. թւում էր որ ես իմ յուղարկաւորութիւնն եմ կատարում...

Երբ ուշքի եկայ, ուղեղիս առաջին աշխատանքը ինքնասպանութեան հարցէր։ Ցանկարծ չ'գիտեմ ինչու ես ինձ վրա ծիծաղեցի. երանի չէ՞ր, որ վերքս այնքան թեթև լինէր, որ կարողանայի այդ քայլին դիմել... Մեռած մարդը ուզում է ինքնասպանութիւնը գործել. ծիծաղելի էր դա ինձ համար...

Չգիտեմ ուրւականի պէս որքան ժամանակ էի թափառել, որքան էի տանջւել. այժմ հաշուել էի վիճակիս հետ, փակւել էի տանը և ահա միակ մխիթարութիւնս երեխան էր և կարծես սրտիս խորքում դեռ մի մօռացած անկիւն էր մնացել և այդ խորշը՝ այդ փոքրիկ ծալքը՝ թերևս պահում էր ինձ։

Դուռը բացւեց. դայեակն էր. նա եկել էր խօսելու. կանգնեցի, աչքերս յառել էի նրան և յանցանք գործածի պէս սպասում էի։

—Բաւական է, բաւական է. նրան դու նոր չէիր կորցրել. խօսեց նա ծանր, ծանր։

—Դայեակ...

—Այո, այո. նա վաղուց էիր, նա այն...

—Դայեակ...

—Նա թունաւորեց, բայց դու լռում էիր, և այժմ...

—Բաւական է, խեղդւած արտասանեցի ես։ Ուզում էի ականջներս փակել՝ չլսել նրան, նրա խօսքերը թոյն էին, նա մի պահ լռեց, մօտեցաւ երեխայի մահճակալին, նայեց նրան, նայեց և ինձ վրդովւած ու թախծալից։

Ես սարսափում էի նրա աչքերից. մի զարհուրելի միտք անցաւ գլխովս. Մթթէ... գոռացի ես. դայեակը ցնցւեց, նա այլևս չ'կարողացաւ նայել ինձ.—Սուտ է, սուտ է, գոռացի ես նրա յետևից. ջղերս կծկւում էր, աչքերս մթնում էին, սպասում էի, որ դայեակը մի բան կասի, բայց նա լուռ էր. ես խելագարի նման ընկա մահճակալին. ագահութեամբ զննեցի. աչքերով կլանում էի... Ա՜ ա, մի յուսահատական ճիչ դուրս թռաւ կրծքիցս՝ ձեռքերս շարւեցին, մկանունքներս կծկւեցին, մատներս կպան իրար, մի զարհուրելի ոստոյն արի...

Չգիտեմ ինչ պատահեց ինձ, երեխան յատակին ընկած անմխիթար լացէր լինում, լամպարը մարել էր, և ես տենդային դրութեան մէջ՝ դժոխային ծիծաղով քրքջում էի...

Հետևեալ օրը կիւրակի էր, վառ գարնանային առաւօտ, ես շատ վաղուց էի տնից դուրս եկել, թափառում էի քաղաքից դուրս սարերի լանջերին, ապառժաների ծոցում. երբեմն կանգնում էի, դիտում էի ցած—քաղաքի մթնոլորտին և ծանր վիճակի տակ՝ նորից հայեացքովս հեռանում էի դէպի սարերը. ուզում էի մտածել, ուզում էի միտքս ամփոփել, հասկանալ դրութիւնս, ինչ անելս, ուզում էի մի ելք գտնել. տունը ինձ չէր գրաւում, միտքս պղտոր էր, ցաւում էի, տանջւում էի, բայց առանց վշտի խորութեան. քայլերս չէի զգում, թւում էր, որ ես գետնի վրա չեմ մանգալի. մարդիկ ինձ իբրև մի-մի առարկաներ էին երևում, չէի կարողանում նրանց ծառից, թրփից, սիւնից կամ անից չոկել. եմ ծանօթներիցս շատերն էին ինձ պատահել, բայց ես չէի յիշում, թէ ինչ են նրանք ինձ ասել, կամ ես ինչ եմ նրանց պատասխանել։ Եւ այդպէս անորոշ դրութեամբ քայլերս տանում էին ինձ առանց իմանալու, թէ որ տեղ եմ ես...

Եկեղեցու զանգերը ինձ սթափեցրին. արդէն երեկոյ

էր. նրանք միահամուռ զողանջում էին. ես զգացի, որ ամբողջ օրը տանը չեմ եղել, սիրտս ճմլուեց, չը գիտեմ ինչու ինձ թւաց, որ ես պէտք է տուն գնամ. երևի աւելի շուտ իմ ոչինչ լինելս հաւաստիացնելու համար և երբ ես անցնում էի փողոցով, սարահարթի լայն եզերքին, մեր նախկին զբոսավայրում, ես չ'կարողացա խոյս տալ մեր տան վաղեմի բարեկամներին, որ երեքով, փոքրիկի ձեռքից բռնած՝ զբօսնում էին, մի ակնթարթում ես յիշեցի ինձ, իմ ընտանիքը ճիշտ այդպէս։

Օ՜, բարև, բարև... ինչու մենակ ես, ինչպէս է երեխադ, այս լաւ եղանակին կը զբօսանէիր երեխիդ հետ։

Ինձ թւաց, որ նրանք հեգնում, ծաղրում են ինձ։

—Քու երեխի համար եմ հարցնում, Արամը, ինչպէս է։

Ես ուզեցա պոռալ, որ նա իմ երեխան չէ, սիրելի բարեկամս, ինչպէս դա, որ ձեռքիցը բռնած մանն ես ածում, քոնը չէ։ Բայց սիրտս սառաւ, իսկոյն զգացի, որ անկարող եմ։

—Նա այժմ երևի ման է դալիս, այնպէս չէ՞ ասաց կինը. տես իմ Սերիոժան, երկու ամսով է միայն մեծ քու Արամիցը։

—Այո. 902 թ. սեպտեմբ. 2-ին ծնուեց Սերիոժան. այնպէս չէ... մեծ բաւականութեամբ ասաց բարեկամիս ընկերը։

Սիրալիր ժպիտը երեսին, ամուսնուն թեանցուկ անելով, գլխով հաւանութեան նշան տուեց նրան կինը...

—Ճիշտ այդպէս. չգիտեմ ինչու, դուրս թռաւ իմ կրծքից։

—Ի՞նչու ձեր Արամին էլ...

—Այո, Այո. բացականչեցի ես՝ ուղիղ կնոջ աչքերին նայելով։ Կինը կարծես ինձ հասկացաւ, նա փոքր ինչ կարմրեց և կմկմալով շարունակեց. առաջ.... ես ձեր կնոջը որքան համակրում էի, բայց նա դեպի մեզ ապերախտ դանուեց. թողեց ամուսնուն, երեխային. բարեկամներին...

—Ընդհակառակը, մենք շատ պարտական ենք նրան, տիկին. նա գոնէ իր ընկերութիւնը մինչև վերջը տարաւ. իսկ դուք... Ես զայրացա և գոռացի նրա ամուսնու վրա։

«Սա խելագար է». ասացին նրանք և հեռացան. և ես դիտում էի հեռուից. դիտում էի թէ մարդիկ որքան կեղծեն։

Երբ ես վերջապէս վերադարձա տուն, դայեակը ինձ չը դիմաւորեց. ես այլևս նրանից չէի խորշում։

—Լաւ որ, կէս գիշերին, նոր ես տուն գալիս, երկար լռութիւնից յետոյ ներս եկաւ նա՝ տաք հեշտաեռը ներս բերելով.—երեխան տաքութիւն ունեց. բժիշկը նայեց. շարունակեց դայեակը։ Երեխան էլ ինձ չէր հետաքրքրում, ինձ թւում էր, որ ես արդէն ծայրին մօտենում եմ. ականջներս խշշում էր. գլուխս բթացել էր, և ես շատ բան չէի հասկանում դայեակի ասածներից. նա ինձ երկու նամակ տուեց, հասկացա, բայց չէի ուզում հաւատալ. սխալուած չէի, կնոջս նամակներն էր։ Բայց նա ինչու այսքան պահել էր։—Մէկը վաղուց եմ ստացել, բայց սա այսօր ստացա. դռների միջից ինքն իրան խօսեց դայեակը Սիրելի...իկս, գրում էր նա իր առաջի նամակում։ Կարծես մեր մէջ ոչինչէր պատահած. ճիշտ այնպէս, ինչպէս անցեալ տարի ամառանոցից։ Այժմ ես Փ...ումն եմ, ընութիւնը կատարեալ հրաշք է, ծովը իր խորհրդաւոր գոյներով, կապուտակ երկինքը, ահա որքան կուզէնայի, որ դու էլ մի անգամ ճանապարհորդէիր, և ինչու միասին չպէտք է լինէինք. մարդիկ ի՞նչու չար են, ես քեզ միշտ սիրել և այժմս էլ սիրում եմ... Սիրելիս, դու չէ՞ս բարկանում ինձ վերա, չէ՞ որ ես այնպէս եմ կարօտացել քեզ, այնպէս եմ կարօտացել, անհամբեր սպասում եմ նամակիդ։ Մի՞թէ մարդիկ չեն կարող միշտ մնալ իբրև լաւ բարեկամներ. մօտացիր անցեալը, ես գիտեմ, դու այնքան ազատամիտ ես, որ չես բարկանալ. վերջապէս մարդիկ պէտք է ապրին իրանց զգացմունքներին բաւականութիւն տալու համար.

այս կարճ աշխարհում էլ ինչու՞ պէտք է ապրել, եթէ ինքն իրան պէտք է կեղծէ։ Ո՞րքան դառը ճշմարտութիւն կար այդ տողերի մէջ, բայց ես այլևս չը կարողացա կարդալ, ինձ թւաց, որ սա ծաղրէ, ընութեան զարհուրելի ծաղր։

Ես պատռեցի հետևեալ ծրարը. գծերը ջղաձգական էին, տողերը ծուռն ու մուռ և նամակը երկար. հաւաքեցի համբերութիւնս կարդալու։

«Մեր բաժանելուց անմիջապէս յետոյ ինձ պաշարեց անհասկանալի տխրութիւն». սկսում էր նա, առանց «սիրելի...ի» «պաշտելի» աշխատում էի դուրս գալ, չմտածել. տեսարանները ինձ չէին դրաւում. կուպէում փակւած՝ անցա ամբողջ գիծը։

Շոգենաւում նա ինձ սպասում էր. (անունը չեմ ուզում տալ, գիտեմ դու տանել չես կարող). նրա սիրալիր ընդունելութիւնը, փաղանքշանքերը, ծովի գեղեցիկ տեսարանները ինձ ցրեցին և ես զգալով ինձ բոլորովին մի նոր աշխարհում՝ ուրախ, զւարթ կարեցի երկար ճանապարհներ, հասանք Փարիզ։ Ահա այդտեղից գրեցի իմ առաջի թեթևսոլիկ նամակը։

Նա ինձ համար վարձեց ամենագեղեցիկ արուարձանը, շքեղ կահաւորւած. մոգիստականները շրջապատեցին ինձ. ամենանուրբ հագուստներով ես զմայլւում էի, իսկ նա ոտքերիս մօտ չոքած՝ համբուրում էր ձեռքերս։

Առաջի շաբաթները մենք մանգալու շատ տեղեր ունէինք, ամեն օր նորանոր տեսարաններ, նորանոր թանգարաններ և ցուցահանդէսներ. Փարիզի գեղարուեստական աշխարհը կլանել էր ինձ, ես չէի կշտանում, չէի նոյնիսկ երևակայում, որ երբ և իցէ ես կը բաւականանամ այդ բոլորից. բայց այժմ ահա երեք ամիս է անցել այդ օրից և ես սենեակումս մենակ փակւած՝ բաժակով հեղուկը առաջս դրած՝ լինել թէ չլինելուս հարցնեմ վճռում. թերևս մի քանի վայրկեանից և մենք բաժանւենք յաւիտեան։

Հէնց առաջին օրերից նրա մօտ վիզիտով մի քանի

ֆրանսուհիներ եկան, նրանք իրանց վիզիտները խնամքով շարունակում էին. մի օր ճաշի ժամանակ նրանցից մէկը երգեց, շատ գեղեցիկ. նա հիացած էր, առաւ նրա ձեռքը և բոլորի ներկայութեամբ համբոյրներ դրոշմից. ես նայեցի կնոջը, նա կարմրեց և ինձ թւաց, որ այդ բոպէին նա ինձանից գեղեցիկ է. և առաջին անգամը զգացի իմ իր լինելս. առաջին անգամ իբրև կին՝ ես իմ աչքում ստուրացա, ամբողջապէս զգացի թէ, ինչ բանի համար եմ ես միայն պէտք։ Երբ ընթրիքն էլ վերջացաւ, մենք մնացինք երկուսով. ես նրան անկեղծ կերպով ասացի զգացմունքներս. նա շոյեց իմ մազերը և յոգնած համբոյրներով պսակեց նրանց. ես աւելի զայրացա, մի՞թ է ես ուրիշ բանի պէտք չեմ. անցաւ գլխովս, բայց նրան բան չասացի։

Այնինչ ֆրանսուհիները ինձ հանգստութիւն չէին տալիս. նրանց վիզիտները յաճախանում էր, մնում էին մեզ մօտ ուշ գիշերները և նա ճանապարհ էր զցում նրանց և շատ էր ուշանում։ Դա անտանելի բոպէներ էին լինում ինձ համար. նա վերադառնում էր յոգնած ու քայքայւած. կանացի հրապարտութիւնս թոյլ չէր տալիս նրան որև է հարց այդ մասին և ես մնացել էի մտատանջութեան մէջ. բայց դա ինձ համար շուտ պարզւեց։

Մի երկոյ գնացինք օպերա և ես նրան տեսա առաջնակարգ դերերի մէջ. նա օպերային երգչուհի էր։ Այդ երեկոյ նրան մի գեղեցիկ, թարմ ծաղկից, փունջ նւիրեցին և ես համոզւած էի, որ դա կողքիս նստողիցն է. ես ճանաչում էի նրա ճաշակը. մի տասնեակ այդպիսի պսակներ պատւիրել էր նա ինձ համար։

—Որքան գեղեցիկ փունջ է. խօսեցի ես նայելով նրա աչքերին. յիշում ես դու այդպիսի փնջիկներ.

—Այո, երևի նոյն ծաղկանոցին են պատւիրել։

Երբ վերադարձանք տուն, նա շատ անհանգիստ էր, ես նկատում էի, որ ուզում է հեռանալ. այդ դրութիւնից ազատելու համար՝ ասացի ես.—ոչինչ սիրելիս, գնա եթէ

տեղ ունես, ես անհամբեր կսպասեմ քեզ. ես փարուեցի նրա վզովը և առաջին անգամն էր, որ նրան կեղծում էի։ Նրա ուրախութեանը չափ չկար։—Այո՛, ես այս բոպէին, երևի մի կէս ժամից, այստեղ կլինեմ.—որքան բարի ես դու, շտապ-շտապ ցիլինդրը ծածկելով գնաց նա, նոյնիսկ մոռանալով իր հրաժեշտի սովորական, աւելի շուտ, արհեստական համբոյրները։

Ինձ համար այժմ բոլորը պարզէ և ես արդէն վճռել եմ իմ անելիքս։ Նա կը գա և կը տեսնի իր սենեակի մի լամպարը հանգածէ. լուցկին կը վերցնէ, կը վառէ միւսը և այդ քանով կը վերջանա ամեն բան։ Ահա իմ տեսակի կանանց դերը տղամարդկանց աչքում։

Այստեղ թաղում են գիշերները և դա շատ լաւ է, ինձ ոչոք չի տեսնիլ, գիտեմ լուռ ու մունջ դիակարքը կը տանի ինձ կը լանձնի սև հողին և մի արցունք չի կաթիլ իմ անբախտ շիրմին. կանչեսանա նա Փարիզեան այն լաբիրինդում, անմիտ և սառը։

Ներողութիւն չեմ խնդրում քեզանից՝ և ոչ էլ ցաւում եմ քեզ համար. տանջանքս քեզ հաւասարէ և դա բաւական է։

Երեխի մասին ոչինչ չեմ գրում. ես սարսափում եմ ինձ մայր անուանելուց, դա բնութեան մի հեգնանք էր ինձ համար։ Նամակս կարդալուն պէս նրան տուր խեղճ մօրս...

Ճակատս շփեցի, երերալով մօտեցա երեխի մահճակալին, երկար նայում էի նարն. նրա այտերը վառում էին, տաք շնչառութիւնը հանում էր երեսիս. ես ակնապիշ նայում էի, առանց խորհելու. ամեն բան քարացել էր իմ մէջ։ Երեխան մի քանի ցնցումներ արաւ. մի գնալ... մի գնալ... գառանցեց նա. ես անգիտակցաբար բռնեցի նրա փոքրիկ ձեռքը, տաք այրւում էր, յանկարծ նա ցնցումով քաշեց դէպի իրան և աչքերը բանալով՝ նայեց ինձ.—Ջուր. շշնչաց նա հազիւ լսելի։ Ես երկու ձեռքով վրա ընկաւ բաժակին, գլուխը փոքր ինչ բարձրացրի և նա մեծ կումերով դատարկեց ջուրը։

—Ո՞րտեղդ է ցաւում. ահուդողով հարցրի ես։

Գրկիր ինձ. ձերքերը պարզելով՝ ասաց նա, պատասխանի փոխարէն։ Ես խնամքով առա նրան գիրկս և սենեակում հանդարտ մանէի ածում. Նա հարմարուեց, երկու փոքրիկ բազուկներով փարուեց վզովս և իրան այդպէս աւելի լաւ զգալով՝ ուզում էր քնել։

—Ո՞րտեղդ է ցաւում։

Գլուխս, ասաց նա և փոքր լռութիւնից յետոյ դիմեց ինձ։

—Մայրիկը ինչու չեկաւ... Այդ հարցը ինձ համար այնքան անակնկալ էր, որ ես շւարեցի։

—Նա ինձ այնքան համբուրեց. ես տեսա, նա լաց եղաւ, նա էլ չի գալ. նա մեռել է, համարեա ինքնիրան մրմնջաց երեխան։

Յուզմունքից շրթունքներս դողում էր. ես չէի կարողանում նրան և ոչ մի բառ ասել։

—Նա լաւն էր չէ՞. նա շատ լաւ մայրիկ էր. նա ասաց, ասաց քեզ համար շատ բաներ կը բերեմ. խաղալիքներ, գիտես. ասաց ոսկէ ձկնիկ կը բերեմ. ասաց, թամբած ձի... Բայց ես չեմ ուզում. ոչինչ չեմ ուզում. թող ինքը, ինքը թող գա. ես այնքան լաց եղա, այնքան լաց եղա. հայրիկ ջան...

Նրա արտասանած վերջին բառերն այնքան աղերսական էին, այնքան սրտառուչ, որ ես այլևս չկարողացա ինձ զսպել. շրթունքներս հպեցին նրա աչքերին և, ամբողջ հոգով՝ իբրև մի երեխա, լաց եղա։ Իմ սառած աչքերը՝ որից արցունքը վաղուց էր ցամաքել, բար դառել, այժմ նա հեղեղի պէս վազում էր և ես զգում էի, որ հոգիս լուռ աղօթում է երեխային. երկու ձեռքով ամուր գրկած՝ սեղմում էի նրան կրծքիս, սղմում էի, որ չփախչի, որ չ'գրկւեմ ես նրանից և յուզուած ու ալեկոծ՝ սաստաւ ինձ համար մի նոր առաւօտ։

Հրիփսիմեան Գրադարան
Հրազդան գ. Ծխակ. (օրիորդաց)
Հանրային Գրադարան
Общественная Библиотека
7/XI-1922
Москва, Мясницкая

ՑԱՆԿ

1.	Շուշան. արտատպած	«Մուրճ»-ից	1904 թ.	երես 7.
2.	Լուսի . .	«Մուրճ»-ից	1904 .	18.
3.	Հռիփսի . .	«Ընկեր»-ից	1906 .	29.
4.	Պահակը . .	«Ընկեր»-ից	1904 .	35.
4.	Բանուորը . .	«Մուրճ»-ից	1906 .	40.
6.	Մի կտոր հացի համար	«Մուրճ»-ից	1903 .	50.
7.	Կապոյտ շապիկը.	«Արշալոյս»-ից	1906 .	72.
8.	Արցունքներ . . .		1905 .	81.
9.	Վիշտը		1905 .	89.
10	Տխուր պատմութիւն . . .		1906 .	97.

ՎՐԻՊԱԿՆԵՐ

տես	էջ	տպված է	պիտի լինի
4	2	անհրաշնշնտ	անհրաժեշտ
«	20	գնդակահարութիւն	պահակը
9	1	տուշն	անուշ
24	20	լաւակրկնած	լացակրկնած
32	31	իկան	իրան
35	20	հենւած	յենւած
36	19	զինոր	զինւոր
38	17	գոռացիր	գոռացին
39	6	սարսափով էինք	սարսափում էինք
41	31	նրա	նրան
47	20	հրեղէն	հրէշ են
48	4	անգուտ	տնօգուտ
49	11	խոքից	խորքից
56	18	թողրելով	թողնելով
59	32	նաւթացնդիչդիշներ	նաւթացնդիչներ
77	16	միանգամային	միանգամայն
78	5	եթերայն	եթերային
79	1	գարնանայն	գարնանային
«	14	ծայրը	ձայնը
«	25	ինդում	խնդում
«	27	հառած	յառած
83	22	ընկնում էր	ընկնում էի
84	3	յառաջուր էր	հառաչում էր
84	28	իրերում	երերում
«	28	քիչ	քեզ
85	20	անհագ	անյագ
86	5	բարդը	վարդը
87	4	լեզու և կապար	լեզուս կապար
90	11	հենւած	յենւած
«	12	պատի	պատանի
91	4	գտաւ	գտաը
92	23	հափշտակել	յափշտակել
«	24	նա	նրա
94	32	սպառիր	սպասիր
95	3	պահեր	պահիր
95	15	արունք	արցունք
99	18	յետևում էի	հետևում էի
«	23	թերթունքներից	թերթերունքներից
103	19	լինէր	լինէին
105	9	շարւեցին	շարժւեցին

ՀՀ Ազգային գրադարան
NL0363054

50793